

Դ. ՌՈՈՒԱՆ

ՀԵՏԱ. ԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ

ՀԱ. ԿԱ. ՀԵՏԱ. ԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

05 FEB 2018

Բ. ԲՈՈՒԱՆ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Կ

ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՂԱՏ • 1937

## ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ՃԱԿԱՏ

Մի անգամ, 1913 թվականին, վաղ դարնանը, Վիեննայում շտաբի չորս սպա կանգնած էին նախասենյակի դռան մոտ՝ տրագրիկ լարվածությամբ ականջ դնելով և սպասելով: Նրանք սպասում էին ատրճանակի կրակոցին, և յերբ կրակոցը լավեց, նրանցից ավազը, վոր գնդապետ էր, բաց արեց դուռը, և նրանք բռնորը, մեկը մյուսի հետևից, մտան սենյակ: Լուսամուտի մոտ, բազկաթոռի վրա պառկած էր կրակողը: Համազգեստից դատելով՝ նա գլխավոր շտաբի սպա յեր: Նրա վոտքերի մոտ ընկած էր պետական տիպի ատրճանակը: Սպան մեռած էր: Իր ինքնասպանությամբ նա մեկ տարով հետաձգեց Ռուսաստանի դեմ պատերազմ հայտարարելը, վոր չափազանց կարևոր էր ավստրո-հունգարական հրամանատարության համար:

Ինքնասպանության փաստը կենտրոնական Յեվրոպայի պաշտոնական շրջաններում մի ամբողջ սեզոն դադանի կերպով քրննարկվում էր: Ինքնասպանությամբ իր կյանքին վերջ դրած սպան գնդապետ Ռեդլն էր, վոր կցված էր Ավստրո-Հունգարական կայսրության գաղտնի ծառայության բաժնին: Նա հակահետախուզության դրուխ էր կանգնած և վաճառել էր իր հայրենիքը: Ռուսաստանի գլխավորական կցորդ գնդապետ Զուբովը վեց ժամվա ընթացքում պետք է հեռանար Ավստրո-Հունգարիայի սահմաններից: Շտաբի սպաներն արին այն ամենը, ինչ կարող էին, վոր պետդի Ռեդլը հասկանար, թե նա իր դաժամանությամբ ինչպիսի դրության մեջ է դցել հայրենիքը: Նրանցից մեկը, վոր հայտնի յեր վորպես ատրճանակից լավ կրակող, նշված էր հրապարակից վերացնելու գնդապետին, յեթե նրան դավաճաններ արևությունը:

Առնվազն չորս տարվա ընթացքում Ռեդլը սիստեմատիկաբար Ռուսաստանին հաղորդում էր մի շարք ուղղմական տեղեկություններ: Նա վաճառել էր զորահամալիր նոր պլանը և այնպիսի ամբողջների, պաշտպանական կառուցումների գծադրերը, ինչպիսիք

Р. РОУАН

РАЗВЕДКА И КОНТРАЗВЕДКА



Երևան, 1937

11-289299/4

եյին Պերեմիշլն ու Կրակովը: Նա ջանասիրութեամբ ցարական գաղտնի վոստիկանութեան ձեռքն եր մատնում ավատրո-հունգարական նույնիսկ այն դործակալներին, վորոնց ինքն անձամբ Ռուսաստան եր ուղարկում: Բայց նկատի ունենալով, վոր Ռեդլն ինքն ի կատար ածեց իր մահվան դատավճիռը, նրա հասցեյին շուտով գտան բազմաթիվ արդարացումներ: Կառավարութեանն իր ամբողջ ազդեցութեանը դործադրեց, վորպեսզի կոծիկ այդ եպիգրաբ:

Կիսատեղյակ անձեր գտնում եյին, վոր Ռեդլը զոհվել է իր հայրենիքը պարտութեանից փրկելու համար, և անկախ նրա դավաճանութեանից, այդ կատարյալ ճշմարտութեան է, քանի վոր Ավստրո-հունգարիան միանգամայն անպատրաստ եր, — նրան անհրաժեշտ եր միլիոններ ծախսել՝ Ռուսաստանին հայտնի դարձած պլանները փոփոխելու համար: Ռեդլի կողմնակիցները պնդում եյին, թե վոչ վորք պատերազմ չեր սպասում, և վոր նա Ռուսաստանին վաճառել է միայն այն, ինչ պատերազմն սկսելու մոմենտին կկորցներ ամեն մի նշանակութեան: 1914 թվականի ոգոստոսին Ռեդլի բարեկամներին համարյա հաջողվեց ստեղծել նրա համար անկաշառ մարդու հիշատակ:

Ռուսական բանակը չըջապատեց Պերեմիշլը, բայց այդ ամբողջը դրավել նա կարողացավ միայն յերկարատե պաշարումից հետո: Ինչպես տեսնում ենք, ավստրիական դիվազոր շտաբը մեկ տարվա ընթացքում արեց այն ամենը, ինչ նա կարող եր՝ կայսրութեանը Ռեդլի դավաճանութեան հանդեպ անվտանգ դարձնելու համար:

Յեթե Ռուսաստանի գեներալական կցորդին չհաջողվեր կաշառել ավստրիական սպային, ապա անհրաժեշտ տեղեկութեաններն ստանալու դործը կհանձնարարվեր հետախույզներին: Վերջիններս մեծ ճարպկութեան ու հաստատակամութեան պետք է դործադրեյին՝ իմանալու համար այն ամենը, ինչ վոր Ռեդլը կարող եր վաճառել:

Սաղաղ ժամանակ լրտեսութեանը փոխարինում է ռազմական դործողութեաններին, բայց այն ավելի քիչ ծախսեր է պահանջում: Պատերազմի ժամանակ հետախույզն ամենամահացու զենքն է հանդիսանում՝ միակ հնադարյան զենքը, վոր չի կորցրել իր նշանակութեանը:

Մենք սովոր ենք պատերազմի ժամանակակից միլիոնների կատարելագործման այնպիսի տեմպի, յերբ նորմուծութեանները, վորոնք կարող են ապահովել հաղթանակը մեկ ճակատամար-

տում, հաջորդ ճակատամարտերի ժամանակ դիտվում են վորպես վոչ-բավարար և հնացած: Սակայն ռազմական արվեստի մեջ կատարվող բոլոր փոփոխութեանները պայմաններում ել հետախույզը մնում եր չկատարելագործված: Թեև այն հիմնարկը, վորն այժմ կոչվում է բանակի հետախույզական բաժին, ռազմական ինֆորմացիա յե հավաքում մի շարք աղբյուրներից, բայց հիմնականում նա իր աշխատանքը կառուցում է հետախույզների և գաղտնի դործակալների խիզախութեան ու հնարամտութեան վրա: Վորքան ել կարեւոր է լավ կազմակերպութեանը հակառակորդի թիկունքում, դիվազոր զերն այնուամենայնիվ ընկնում է հետախույզի հենց իրեն վրա: Ճարպիկ գաղտնի դործակալի ձեռք բերած տեղեկութեանները նրա հայրենիքի կառավարութեան կողմից կարող են դնահատվել տասը հազար անգամ ավելի թանգ, քան նրա քաշով վուսկին:

Ճրանասկան տվյալների համաձայն, մի ճարպիկ կին-հետախույզ համաշխարհային պատերազմի ժամանակ վոչնչացրել է 16 սրանսպորտ ու սուստրական նալ: Այդպիսի արդյունքը, վոր շատ ավելի կործանիչ է, քան յուրաքանչյուր մի գծանավի դործողութեանները, հասցնում է այն մտքին, վոր հետախույզութեանը վոչ միայն հզոր մի զենք է, վորն անփոփոխ է մնում պատմութեան ամբողջ ընթացքում, այլև համեմատաբար վոչ թանգ զենք է: Գծանավ կառուցելն ու սպառազինելը և միքանի տարվա ընթացքում պահպանելը՝ քանի գեռ չի հնացել, արժե առնվազն 100 միլիոն դոլլար, մինչդեռ ամենալավագույն գաղտնի դործակալ-հայրենասերներն անհամեմատ ավելի եժան են նստում: Հետախույզների մեծ մասը, անկախ նրանց աշխատանքի վտանգավորութեանից, ստանում են համեմատաբար վոչ մեծ վարձատրութեան: Ամեն մի կառավարութեան իր արամադրութեան տակ ունի բազմաթիվ դործակալներ:

Սաղաղ ժամանակ հետախույզներն ու գաղտնի դործակալներն իրենց պահում են բոլորովին այնպես, ինչպես պատերազմի ժամանակ, բայց ավելի մեծ վստահութեամբ են ներշնչված և մեկ վայրից մյուսը փոխադրվելու ազատութեան են վայելում:

Այդ ժամանակ հետախույզը խաղաթղթի վրա չի դնում իր կյանքը, քանի վոր հակառակորդները դառնում են հարևաններ, բնակչութեան կասկածամտութեանն զգալիորեն թուլանում է: Հետախույզի դիմակավորումը և նրա խորամանկութեանները շատ ավելի դժվար է լինում մերկացնել: Ամենայն հավանականութեամբ հետախույզն այդ առաջադրանքների կատարմանը զուղըն-

Թաց ստանում է մի քանի միանգամայն լեզալ, դործնական հանձնարարություններ: Պատերազմի ժամանակ անխուսափելի լարվածություն ու վտանգի համեմատություններ, այդպիսի աշխատանքը մի կատարյալ տոն է յուրաքանչյուր պրոֆեսիոնալ դադանի դործակալի համար:

Պատերազմի ժամանակ աշխարհը սլարսլված է լինում անանցանելի պատնեշներով: Մեկ վայրից մյուսն անցնելը վերահսկման է յենթարկվում, փոստն անցնում է ռազմական դրաքննչություններ, հետախույզի աշխատանքը հակադրվում է հակահետախույզության աշխատանքին, այն է՝ կազմակերպված հսկողություն հետախույզներին նկատմամբ, քաղաքացիական բնակչության զգաստություն, վրոն բնդհանուր առմամբ կարող է խոչընդոտ հանդիսանալ նույնիսկ ամենափորձված հետախույզի աշխատանքի համար:

Հետաքրքիր է նշել, վոր պատերազմական դործողությունները դադարելուց հետո հետախույզության աշխատանքը չի դադարում: Պետությունները միմյանց հսկում են միմյանից թշնամիների ամբողջ կրքոտություններ: Գաղտնի ծառայությունները զերբեմն կրճատվում են, բայց յերբեք չեն դորացրվում: Որպեսզի վտանգի մի տեսակ պայմանագրով նրանք չեն արձակվում իրենց տները: Վերսալի պայմանագրերը նոր եր միայն կազմվում, հետագայում Գերմանիային կաշկանդող կապերը նոր ելին միայն քննարկվում, բայց հաղթանակը տարած դաշնակիցներն արդեն սկսել ելին ուշադիր հսկել միմյանց, կարծես թե այդ միակ միջոցն եր հաղթանակողի դերն ամրապնդելու համար:

Իր եյուրթյամբ լրտեսությունն ուրիշ յերկիրը ներխուժելու անորինական մի ակտ է հանդիսանում: Մակայն այն պետություններն ել, վորոնք իրենց նվիրել են խաղաղության և կարգու կանոնի պահպանմանը, ամակցում են լրտեսությանը: Չարագուշակ ճակատում զինադադար չկա: Այդ նշանակում է, վոր թեև մարդկանց մեծ մասն ապրում և աշխատում է՝ ձրտելով իր բարեկեցությունը, պահպանելով անհատական աղնություն հայտնի կանոններ, — բնդհատակում մղվում է անբնդհատ պայքար, ինտրիգներ, վորոնք բոլորի կողմից ճանաչվում են վորպես բնական և միևնույն ժամանակ անորինական յերեույթ:

Չորս ամսվա բնթացքում, մինչև 1928 թվականի մարտի 1-ը, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում լրտեսության մեղադրանքով դատապարտված են յեղել 17 հոգի: Այնուամենայնիվ, այժմ ել, յերբ նախկին

հետախույզը կամ պահեստի սպան մեկնում է արտասահման, յեթե նա վայելում է այն սպասարկություն հետախույզական բաժնի վստահությունը, վորին նա մի ժամանակ պատկանելիս է յեղել, նրան անմիջապես տալիս են մի շարք հրահանգներ: Մեկնելու ժամանակ նա ստանում է հատուկ հարցացուցակ այն ոտաբերկրյա պետության բանակի կամ նավատորմի վերաբերմամբ (նայած նրա մասնազրկությունը)՝ վոր նա այցելում է. այդ հարցերի պատասխանները հետախույզական բաժնին պետք է տան անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները: Հետախույզական բաժնին այնուհետև կարող է հավաստիացնել, վոր ինքը յերբեք այդպիսի վորեք բան չի լսել, վոր հրահանգները արված են յեղել վորպաշտոնական կարգով. այնուամենայնիվ, առաջնակարգ ու յերկրորդ կազմի բոլոր պետություններում այդ բանը մտել է առոյրյա պրակտիկայի մեջ: Ճանապարհորդող պահեստի սպան ամեն դեպքում պարտավոր չե դադանի դործել: Ամեն դեպքում չե, վոր նրա կատարածը կարող է բնութագրվել վորպես դատապարտելի դործողություն. նրա աշխատանքը կարող է հիմնականում դիտվել վորպես լրացում զինվորական ու ծովային կցորդներին կատարած դիտողությունների, կցորդների, վորոնք կոչվում են «հավատարմագրված լրտեսներ»:

Վոր այնքան հեռու անցալում յեվրոպական մի պետության առաջարկվել եր չափազանց կարևոր մի ծովային դյուտ: Այդ դյուտի բացառիկ ոգտադործման իրավունքի համար դյուտարարը պահանջում եր յտոյր դումար՝ մեկ միլիոն Ֆունտ ստերլինգ: Մյն պետական դործիչը, վորը պետք է այդ միլիոն Ֆունտ ստերլինգն ավելացներ բյուջեյին, իսկ այնուհետև դաներ այդ դումարը, դեմ է արտահայտվում դյուտի համար վորեք վճար տալուն: Նա ցինիկաբար հայտնել եր. «Թող դյուտը գնի վորեք այլ պետություն: Մենք կարող ենք մի փոքր սպասել: Մեր դործակալները շուտով կըողանան այն, և այդ ժամանակ մենք կկարողանանք դյուտն ոգտագործել համարյա ձրի»: Այդ լրջիտ ունակիտը ներկայումս կանդան է աշխարհի յտոյրագույն բանկերից մեկի դյուտ: Նրա վերաբերմունքը պետական հետախույզության հեռանկարների նկատմամբ՝ խաղաղ ժամանակ (այդ բանը պատահել է մինչև 1914 թվականը) արժանի յե հիշատակման:

Ժամանակակից պատերազմը պահանջում է կազմակերպված հետախույզական ծառայություն և վորպես դրա հետևանք մի այլ ծառայություն՝ հակահետախույզություն: Յուրաքանչյուր պետու-

թյուն, վորը կարող ե պատերազմ վարել, պետք ե հետախույզներ ունենա. հարեաններ զաղտնի նախաձեռնություններին հակներգործելու համար նա պետք ե նաև ունենա լավ պատրաստված ու փորձված զործակալներ, վորոնք ընդունակ լինեն չեզոքացնելու մյուս պետությունների հետախույզությունը: Հետախույզը, խախտելով մյուս պետությունների իրավունքը, պատերազմի ժամանակ ռիսկի յե յենթարկում իր կյանքը, իսկ խաղաղ ժամանակ իրեն յենթարկում ե արտաքսման, բանտարկության ու թշվառության, վորովհետև նա չունի վոչ մի պաշտպանություն: Կառավարությունները չեն կարող մասնակցել անորինական ձեռնարկումներին: Նրանք խստորեն հետապնդում են ոտարեկրյա լրտեսներին: Ուստի նրանք պատժում են նաև իրենց զործակալներին, հրաժարվելով նրանցից, յերբ վերջիններս ընկնում են ծանր դրության մեջ:

Մյուս կողմից պարզ ե, վոր բանակի կամ ծովային շտաբն ինչպես խաղաղ, այնպես ել պատերազմի ժամանակ պետք ե իմանա այն ամենը, ինչ հնարավոր ե իմանալ բոլոր հավանական հակառակորդների մասին: Փորձագետները պնդում են, վոր վատ հետախույզությունը պատերազմ ե առաջացնում. համենայն դեպս այն նպաստեց վերջին պատերազմի առաջացմանը: Հայտնի յե, վոր մարտական արամագրությունն Ալստրո-Հունգարիայի ու Գերմանիայի դիվանի շտաբներում առաջ եր դալիս այն տեղեկությունների հիման վրա, վորոնք ստացվում եյին 1914 թվականի ձմեռն ու վաղ դարնանը՝ Ռուսաստանի զինվորական միջնխորության մեջ գտնվող մասնիչներից ու լրտեսներից: Ըստ հաղորդագրությունների՝ ցարական բանակը կատարելապես կազմալուծված եր: Հապա ինչո՞ւ չպետք եր շտապել առանց վողորմաձության և գլխարտության ուլտիմատում ներկայացնելու Սերբիային:

Այդ ամենը վոզբերդական սխալ եր: Ռուսաստանը կարողացավ Ռեննենկամպի և Սամսոնովի բանակները մոբիլիզացիայի յենթարկել այնպիսի արագությամբ, վոր դարձացրեց իր դաշնակիցներին: Յեվ գերմանական հրամանատարությունն այդ ժամանակվանից յեկավ այն կարծիքին, վոր իր հետախույզական ծառայությունը չարաչար սխալվել եր բելգիացիների պոտենցիալ ուժերի գնահատման հարցում:

Հետախույզների հաղորդագրությունների համաձայն Մեծ Բրիտանիան անհուսալի կերպով խրվել եր բանվորական շարժման և իտալական ապստամբության կողմից նրա սուղև դրված

դժվարին պրոբլեմների լուծման մեջ: Բայց այս անգամ ել չարաչարացան աշխարհում ամենից ավելի պատրաստված և ամենից ավելի լայն հետախույզական ծառայության հայթայթած ավյալները:

Ձեռնարկելով հետախույզների զործունեյության և նրանց ունեցած ուղղական նշանակության մանրամասն շարադրմանը, հարկավոր ե հենց սկզբից մատնանշել, վոր այն ռիսկը, վորին յենթարկվում ե հետախույզը, չափազանց մեծ չե մահվան այն վտանգի համեմատությամբ, վորին ժամանակակից պատերազմում յենթարկվում են զործող զորքերը: Ռազմական որենքները պահանջում են մահապատժի յենթարկել այն բոլոր անձերին, վորոնք մեղադրվում են լրտեսության մեջ, անկախ ետիկական նկատումներից: Յենթադրվում ե, վոր մահապատժի սպառնալիքը կղժվարացնի հարմար անձնակազմի ընտրությունը հետախույզական առաջադրանքներ կատարելու համար: Բայց իրականում այդ սպառնալիքը հետ ե պահել հետախույզի հատկություններով ոժտված չափազանց փոքրաթիվ մարդկանց: Դրանք սովորաբար դրավիչ արկածներ վորոնող մարդիկ են: Այդ տիպի սպաները, իբրև կանոն, չափազանց տաղանդավոր են լինում ուղղական զործերում. ուստի, հրամանատարները չցանկանալով ռիսկի յենթարկել իրենց արժեքավոր ստորադրյալներին հանուն վորևէ ձեռնարկման, վորը դուրս ե գտնվում զորամասի խնդիրների շրջանակից և կրում ե չափազանց վտանգավոր բնույթ, հրաժարվում եյին նրանց թողնել հակառակորդի տերիտորիան:

Պատասխանելու համար այն հարցին, թե ո՞վ ե յենթարկվում ավելի մեծ վտանգի՝ մարտի՞ կը, թե հետախույզը, անհրաժեշտ ե աչքի անցկացնել միջանի վիճակագրական ավյալներ, վորոնք վերաբերում են 1914—18 թվականներին, թեև վոչ մի տեղ չեն յեղել այնպիսի դրանցումներ, վորոնցից հնարավոր լիներ ստույգ կերպով սահմանել հետախույզների թիվը: Ծառ հետախույզ-սպանների թույլատրվում եր զործակալներ հավաքագրել և նրանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել ընդհանուր առմամբ, հաշիվ տալով միայն նրանց վրա ծախսված դումարների մասին: Ինչպես բազմիցս հաղորդվել ե, Ծերիքի Մեծը հայտարարում եր, վոր նա պատերազմական դոտում իր արամագրության տակ ունեցել ե մեկ խոհարար և 100 հետախույզ: Փրիդրիխին հարկավոր եր միայն մեկ խոհարար, քանի վոր նա ուտելու տեսակետից չափավոր եր և հաճախ քաղցած եր մնում, բայց շրջապատված լինելով ուժեղ ու հաստատակամ

Հակառակորդներով, նա կարիք ուներ զգալիորեն ավելի մեծ  
թվով հետախուզողներին, և այդպիսի հետախուզողներ ուներ, ան-  
շուշտ, իր տրամադրութեան տակ: Պրուսական հետախուզութեան  
ղեկավար Շտիրերը համաստիացնում էր Փոն Թունին և Մուլտ-  
կեյնին, վոր Ֆրանս-պրուսական պատերազմի սկզբում նա Մակ-  
Մահոնի և Բաղենի բանակներին թևերն ու թիկունքն է ուղարկել  
ՅՅ հազար հետախուզ: Մուսափելով այդ սնդուսների ծայրա-  
հեղությունից, մայր Շտեյնհաուերը յենթադրում էր, վոր Հյուս-  
սիսային Ֆրանսիայում և Բելգիայում այն մոմենտին, յերբ «Մեծ  
Բերտան» առաջին արկն արձակեց Լիեժ քաղաքի ուղղութեամբ,  
կար մոտ 8 հազար հետախուզ:

Տերիտորիաները զրավելիս խաղաղ բնակիչներին հաճախ  
զնդակահարում էին վորպես լրտեսների միայն այն բանի հա-  
մար, վոր նրանք զայրույթով էին նայում իրենց տերիտորիան  
ներխուժած հակառակորդին: Յերբեմն նրանց ամբողջ հանցա-  
գործութեանը կայանում էր այն ստորացմանը բնազդաբար ընդ-  
դիմանալու մեջ, վորին յենթարկվում էր քաղաքացիական բնակ-  
չութեանը: Սակայն Բելգիայի և Ֆրանսիայի՝ ոկուպացիայի յեն-  
թարկված զեպարտամենտների բազմաթիվ բնակիչներ դատա-  
պարտվում էին լրտեսութեան համար, նրանց յենթարկում էին  
յերկար տարիների բանտարկութեան:

Հետախուզական ծառայութեան նվաճումները զլիսավորապես  
կազմվում են միջանի հմուտ հետախուզողների աշխատանքի ար-  
դյունքներից: Մյուս բոլոր հետախուզողները ձեռք են բերում  
պատահական, կցկուտր տեղեկութեաններ, թեև այդ տեղեկու-  
թյունները յերբեմն մեծ արժեք են ունենում: Բացի դրանից,  
այդպիսի հետախուզողները շեղում են հակառակորդի հակահե-  
տախուզութեան ուղղութեանը և դառնում են ծխածածկույթի  
նման մի բան, վորը քողարկում է հետախուզութեան միջանի  
հանձարների գործունեութեանը:

Համաշխարհային պատերազմի վերջին ամիսներին հակահե-  
տախուզութեանը հասնում է իր բարձր աստիճանին և փաստորեն  
հարձակման է անցնում: Բրիտանիայի զինվորական միլիտարու-  
թյան հատուկ հետախուզական բաժնի նախկին պետ՝ բրիգադի  
ղեկերալ Գ. Ի. Կոկկերիլը պարծանքով թվարկում է իր աշխա-  
տակիցների հաղթանակները: Հակահետախուզութեանը ձերբա-  
կալում էր հետախուզողներին, բռնում էր ծովային ու ռազմական  
ինժեներացիաներ, յերևան էր բերում դավադրութեանները և ռազ-  
մադործարանների հրկիզման ու ավերման նախապատրաստու-

թյունները, բռնում էր անգլիական նավահանգիստներից նավերի  
դուրս գալու վերաբերյալ ինժեներացիաներ և դրան դուզընթաց  
զգալի չափով նպաստում էր բլոկադին: Հակահետախուզութեանը  
հաղորդում էր մաքսանենդութեան բոլոր զեպքերի մասին. նա  
թույլ չտվեց, վորպեսզի հակառակորդի յերկիր փոխադրվեր 70  
միլիոն Փոնտ ստերլինգ գումարը, և յիովին քայքայեց անդըր-  
ովկիանոսյան յերկիրների հետ հակառակորդի ունեցած հաղոր-  
դակցութեան բոլոր միջոցները:

Յեթե զեներալ Կոկկերիլը և նրա յետանդուն աշխատակից-  
ները վերկեցին Բրիտանիայի միլիոնավոր զոլլարները, ապա բոլոր  
հիմքերը կան յենթադրելու, վոր ժամանակակից հետախուզական  
ծառայութեանն այսուհետև էլ կարգաբաշխի իր զերը:

Գաղտնի ծառայութեան բոլոր արխիվները պահպանվում են  
վորպես խոր գաղտնիք, թանգարժեք նյութերը հաշվի չեն առնը-  
վում և պետկազմի փոփոխման զեպքում դատապարտված են վո-  
չընչացման: Գաղտնի ծառայութեան վերաբերյալ դրքերը պար-  
ճենկոտ մեմուարներ են («միայն խիզախներից խիզախագույննե-  
րին է թույլատրվում մեզ հետ միասին ծառայել այս վտանգա-  
վոր պոստում»), տարակուսելի մերկացումներ կամ թե կիսա-  
բերտորիստիկ և մելոդրամատիկական հայտարարութեաններ՝  
գաղտնի, հուղիչ իրողութեանների և գաղտնի ծառայութեան  
վորեւե գործակալի սխրագործութեանների մասին:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Բանակի կամ նավատորմի հետախուզական բաժին գոր-  
ծուղված սպայի գործունեութեանը թե՛ պատերազմի և թե՛ խա-  
ղաղ ժամանակ բացառապես հարձակողական բնույթ է  
կրում: Նրա նպատակն է մանրամասնորեն ուսումնասիրել մյուս  
պետութեանների նավատորմներն ու բանակները, վորովհետև հե-  
տախուզութեանն անխուսափելիորեն կապված է դրանց զարգաց-  
ման հետ:

Հետախուզութեան այն սպաները, վորոնք խաղաղ ժամանակ  
տվյալներ են ձեռք բերում այս կամ այն յերկրի զինված ուժերի  
մասին, յերբեք չեն մոռանա Գերմանիայի որինսպի: Գերմանա-  
ցիք պատերազմից առաջ բազմակողմանի տեղեկութեաններ էին  
հավաքում աշխարհի բոլոր յերկիրների մասին: Մովային ու զին-  
վորական կցորդների զեկավարութեամբ նրանք հավաքում էին  
բոլոր տվյալները նավահանգիստների, զլիսավոր քաղաքների մա-  
սին, այն բլուրների մասին, վորոնցից նրանց վրա կրակելու յեր

հրետանին, կամուրջների ու յերկաթղծերի, ճանապարհների ու ձորերի, խրամների ու ջրանցքների, բոլոր հարմարությունների ու խոչընդոտների մասին և, իհարկե, ամբողջունների, ծովալինբազանների, ցամաքային նավաչինարանների, զինանոցների մասին: Ստանալով այդ տվյալները, անհրաժեշտ եր հետևել նրանց հետագա եվոլյուցիային: Յեթե, օրինակ, վորևե յերկրում հնարված են նոր, արագածիլ թնդանոթներ, ապա անհրաժեշտ եր վերանայել այդ գործիքների կատարելագործման վերաբերյալ ոտարերկրյա բոլոր տեղեկությունները: Այդ կատարելագործման կապակցությամբ վորևե զինանոց կարող եր հնացած դուրս գալ:

Մյուս պետությունների բանակների շտաբները հիանում եյին հետախուզության զերմանական սիստեմով և այդ համարում եյին վորպես սպասնալիք իրենց հայրենիքին:

Պետությունների մեծ մասը պատերազմից առաջ սահմանափակ դումարներ եր բաց թողնում հետախուզության համար: Համաշխարհային պատերազմից հետո բոլոր խոշոր պետությունները շարունակում են պլաններ պատրաստել իրար վրա ծովային ու ցամաքային հարձակումներ դործելու համար և տեղեկություններ հավաքել լրտեսության միջոցով:

Հետախուզության պետը պարտավոր ե հակառակորդի վերաբերյալ բոլոր տվյալները պատրաստ ունենալ, նախքան դրանք կարող են պետք գալ, և վոչ մի էշխանություն չի կարող խանդարել նրան ներկայացնելու դրանք ըստ պաշտոնի իր ավագին: Ինֆորմացիա կազմելու համար պետը կարողում ե բազմաթիվ լրտեսների ու գաղտնի գործակալների զեկուլցները, համեմատում ե այդ զեկուլցները, վերլուծում ե առողջ դատողության և վորձի տեսակետից և աշխատում ե պարզել ճշմարտությունը, դենդցելով այն սխալներն ու սուտը, վորոնք կարող են լինել ամեն զեկուլցում:

Ներկայումս լավագույն հետախուզական բաժինները հրաժարվում են տեղեկություններ զնելուց: Այդ վկայում ե, վոր հետախուզական որգանները ձգտում են ավելի ճշգրիտ տեղեկություններ ստանալ: Անդլիացիք, Ֆրանսացիք, իտալացիք և ամերիկացիք դառն փորձով սովորել են և զիտեն, վոր ինֆորմացիայի ճշտության նկատմամբ փստահ լինելու համար հարկավոր ե, վորպեսզի իրենք ձեռք բերեն այն: Ասում են, թե Շվեյցարիայում համաշխարհային պատերազմի ժամանակ գոյություն ե ունեցել բորսայի կամ շուկայի նման մի բան, վորտեղ պրոֆեսիոնալ լրտեսները տեղեկություններ են վաճառել այն յերկիր-

ների մասին, վորոնց ծառայել են իրենք: Ամեն մի հետախուզ կարող եր զնել նրանցից այն ամենը, ինչ վոր հետաքրքում եր իրեն:

Տեղեկություններ ստանալու մեծ աղբյուր եյին հանդիսանում շերիների և քաղաքացիական բնակչության ցուցմունքները: Սակայն այդ բոլորը հիմնական ստուգում ե պահանջում: Պետք ե ուշի ուշով զննել պատերազմական զերիների ու սպանվածների բոլոր իրերը: Ամենափոքր մանրամասնությունը կարող ե ոզնել հակառակորդի գիտավորությունների բացահայտմանը: Սպանված հրետավորի մոտ գտնված հասարակ բացիկը կանխեց զերմանական մեծ առաջխաղացումը Շվեյցարիայում վրա՝ 1918 թ. մարտի վերջին շաբթին, թեպետ այդ կանխումը բավականաչափ ժամանակին չեր, վորպեսզի Ֆրանսացիք կարողանային վճռական դիմադրություն նախապատրաստել: 1914 թվականի հոկտեմբերին Դիկմայուզում վերցված յերկու պատերազմական զերիներ հաղորդեցին, թե զերմանական զլխավոր շտաբը կազմել ե պահաստի զնդեր, 201-ից մինչև 270 համարով, և նրանցից արեմտյան ճակատում ստեղծել ե վեց նոր կորպուս, վորոնք ծրագրված ե նետել դաշնակիցների թուլլ՝ ձախ թեի վրա:

Հետախուզությունն ոզնում ե մոլորության մեջ դցելու թշնամի կողմի գիտողներին: Լոոսի մոտ գերմանացիներն ողտադործեցին դատարկ զնացքը, վորպեսզի հակառակորդի գիտողներին համոզեն, թե ոժանդակ ուժեր են բերում: Սակայն այդպիսի խորամանկությունը հաճախ կրկնել չի կարելի: Հակառակորդի հրետանին կվոչնչացնի այդպիսի զնացքները:

Հետախուզության պետը պետք ե անընդհատ հետևի թշնամու հրետանուն, զիտենա նրա հրանոթների թիվը, նրանց դասավորությունը, կալիբրը և իրադեկ լինի ոագմամթերքի մատակարարմանը: Համաշխարհային պատերազմի շրջանում շարունակ հրանոթների նոր տիպեր մտցնելը (Ստոկսի զարմանալի մարտիլը, ձեռքի նունակներ, հրանետներ, թունավորող նյութեր) հետախուզության սպաներին հարկադրում եր միշտ արթուն լինել ու վորոշել, թե արդյոք ստացվող ինֆորմացիան պետք ե ընդունել վորպես հետախուզի յերեակայություն, թե՞ հակառակորդի հնարագիտական հանճար: Կամբրեյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից առաջ զերմանական հետախուզությունը Ֆրանսիայի իր գործակալներից մի քանի զեկուլցներ ստացավ կառուցվող տանկերի մասին, սակայն շտաբին կից տեխնիկական խորհրդատուները դտան, վոր այդպիսի դանդաղաչարժ, մեխանիկական



կառուցվածքներն ուղուտ չեն կարող բերել կուլում: Ասում են, թե այդ պահպանողականներից մեկն ինքնասպան յեղավ, յերբ տեղեկացավ տանկերի գործողության մասին: Պատերազմի ավելի ուշ շրջանում անդլիացիք շատ շփոթվեցին, տեղեկանալով իրենց հետախուզությունից, թե զերմանացիք ուղամասկատ են բերել 300-ից ավելի նոր վեց դյուլմանոց հասուբիցաներ, վորոնք պատրաստվել էյին Անդլիայում և Ռուսաստան էյին ուղարկվել «Կերենսիու առաջխաղացման» համար: Այդ հասուբիցաները վերցրել էյին ավստրո-զերմանական զորքերը, յերբ ուռուական 11-րդ բանակը 1917 թվականի աշնանը թողեց ճակատը և գործնականորեն դադարեց գոյություն ունենալուց:

Հետախուզությունը պետք է ընդունակ և նվիրված գործակալներ ունենա: 1918 թ. մարտի 24-ն էր, կիրակի օր, յերբ զերմանական զերհեռաձիգ մի թնդանոթ՝ բոլոր «Մեծ Բերտաներից» ամենախոշորը, սկսեց ուժակոծել Փարիզը: Պաշարողական զրության մեջ չհասարարված քաղաքի ուժակոծումը հաջորդեց ուժակոծիչների և ցեպելինների հարձակմանը: Բաղաքի բնակչությունն առաջին խուճապի պահին չհասկացավ Կրուպի գործած հրաշքը և յենթադրում էր, թե զերմանացիները, վորոնք այդ ժամանակ ջախջախել էյին բրիտանական ճակատը Փարիզիսից մինչև Գուզոլուր, նոր ապշեցուցիչ առաջխաղացում են կատարել ճակատի կենտրոնով և մոտեցել են Փարիզին: Իրականում թնդանոթը գտնվում էր Կրեպ ան Լաոննեյի մոտ: Սեն-Գոբեն անտառի ծայրին, Փարիզից 112 կիլոմետր հեռու: Ինքնաթիռները յերամներով թռչում էյին այդ շրջանի վրա, բայց վորովհետև զերմանացիք լավ թողարկել էյին և հաճախ տեղից տեղ էյին փոխադրում իրենց հրեշք, ուստի միայն զիչերվա դեմ հաջողվեց վորոշել թնդանոթի տեղը: Ամբողջ շրջանը յենթարկվեց ինքնաթիռային ուժակոծման և Փրանսական մարտիոցների կրակին: Սակայն հետախուզությունը չէր կարող հույս դնել պատահականության վրա. պետք յեղավ դիմելու տեղական բնակչությանը: Ժողովրդի հոժ բազմություն ցանկություն հայտնեց կատարելու այդ առաջադրանքը: Նրանցից վիճակով ընտրեցին չորս հոգի, վորոնց զիչերն ուղարկեցին զերմանական ճակատի թիկունքը՝ լյա Ֆերի և Անիզի լյո Շատոյի միջև: Մի շարաթից կամայորներից յերեքը բարեհաջող կերպով հետ բերվեցին ինքնաթիռով: Նրանք բերին տեղեկություններ, ներառյալ նաև կինո-ժապավեն՝ թնդանոթի նկարով: Նրանցից միայն մեկը չվերադարձավ:

Կալիբրը, պտուտակի կտրվածքը, վառողը, արկի կշիռը, լիցքը, բարձրացման անկյունը, այսինքն հրետալորների համար հետաքրքրություն ներկայացնող բոլոր տվյալները կամավորները ներկայացրին Շանտիլի հետախուզիչ բաժնին: Այնուհետև այդ տեղեկություններն ուղարկվեցին հրետանու Փրանսական փորձադեաներին: Փրանսական, բրիտանական և ամերիկյան Փիրմաները կարող էյին վերատեղծել այդ հրեշք: Բայց ինչի՞ համար: Գերմանական թնդանոթը շատ ջլատեց Փրանսիայի քաղաքացիական աղաքանակության բարոյական վիճակը, և դա այն միակ արդյունքն էր, վորին հասան զերմանացիք «Մեծ Բերտայի» միջոցով: Այդ թնդանոթը Փրանսացիներին ապշեցրեց մի որով: Հետախուզությունը ձեռք բերելով այդ թնդանոթի վերաբերյալ բոլոր տվյալները, նորից ապացուցեց իր յեռանդն ու գործունեյությունը:

Յերբ խոսում են համաշխարհային պատերազմի մասին, ապա միշտ հիշում են ուղամական հետախուզության բացահայտության կամ տապալման յերկու որինակ:

Առաջին որինակ. անդլո-Փրանսական, Միջերկրական ծովի հզոր նավատորմը բրիտանական ծովակալ դե-Ռոբեկի հրամանատարությամբ ուժակոծում էր Դարդանելի ամբությունները: Գերզերեղնուտ «Յելիզավետա թաղուհին» կրակում էր թերակզու ուղղությամբ, 15 դյուլմանոց արկեր արձակելով ամբոցների և Մարմարա ծովում զորք փոխադրող նավերի վրա, նաև ցամաքային կոմունիկացիոն դժերի ուղղությամբ: Այդ արկերի ներգործությունն այն աստիճան ավերիչ էր, վոր զերմանացիների ամբողջ յեռանդը չէր կարողանում պահպանել թուրքերի արիությունը: Հնարավոր էր, վոր դարձյալ մեկ համազարկ, և թանդադին նեղուցը կբացվեր: Իսկ այդ ազատ մուտք կապահովեր դեպի Սև ծով և ապա չսառչող ծովերով դեպի Ռուսաստան, կապահովեր ուղամայութեի, հանդերձանքի ու սանիտարական գույքի ազատ փոխադրումը և այնքան անհրաժեշտ հացահատիկի արտահանությունը Յելիզավայի շտեմարանից: Այդ կկանխեր նաև Գալլիպոլի կոտորածը, կպահպաներ մի քանի հազար մարդկանց կյանքը յերկու կողմերի համար՝ Միջագետքում ու Պաղեստինում և առնվազն մեկ միլիոն մարդկանց կյանքը՝ ուռուական ու ուռումինական ճակատներում, վորտեղ զենքի պակասության հետևանքով ճակատամարտերը, 1915 թվականից հետո, կատարյալ կոտորածի էյին նման: Բայց դաշնակիցները հաչի չառան զրությունը: Թուրքական կառավարությունը, ինչպես հետագայում դաշնա-

կիցներն իմացան ամերիկյան դեսպան Հենրի Մորգենտաուէից, համոզված լինելով, վոր դե-մոկրատիկ ետկադրան կըրպոլի Կոնս-տանդնուպոլիսը, խուճապահար փախչում եր Փոքր Ասիա, պաշ-տոնական արխիվները բեռնած այն դնացքների վրա, վարոնք պետք ե ուղևորվելին Անատոլիա: Յեվ այդպիսի բոպելին դաշ-նակիցները զաղարեցրին ամբակոծությունը: Հետախուզության բացակայությունը, վորը կկարողանար ժամանակին տեղյակ դարձնել հայկական հաջողության մասին, հասցրեց այն բա-նին, վոր դաշնակիցները ծովային ուժերը ձեռքից բաց թողին իրենց բոլոր առաջնությունները:

Մի այլ որինակ. 1917 թվականը պարտվողականության կա-տաղի պրոպագանդայի տարի յեր Փրանսիայում: Պատերազմից հոգնած յերկրի գորքի բարոյական վիճակը խիստ ճնշված եր: Այն բանակի մարտունակությունը, վորը մեկ տարի դրանից առաջ հակառակորդի տեղատարափ կրակի տակ պահպանում եր վերդե-նը, ուժեղ կերպով խախտվել եր: Մի քանի գորամասեր խուճու-թյուն եյին բարձրացրել, չցանկանալով մեկնել վտանգավոր հառ-վածները: Նրանք հետ դարձան և ուղևորվեցին նույն այն ճանա-պարհով, վորով յեկել եյին, իսկ այն գորամասերը, վորոնց նը-րանք պետք ե փոխարինելին, հնարավոր չեր յերկրորդ անգամ ուղղաճակատ ուղարկել: Յեվ այդպես, մի ամբողջ որվա ըն-թացքում ուղղաճակատի չափազանց կարեւոր հատվածը պաշտ-պանվում եր մի խումբ հրետավորների ու սապյորների միջո-ցով: Սակայն գերմանական հետախուզությունն այդ հատվածում չունեւ հետախուզներ, վորոնք իրագեկ լինելին ստեղծված ամ-բողջ դրությանը և ժամանակին իրազեկ դարձնելին գեր-մանական հրամանատարությանը: Այդ որվա վճռական գրոհը պատերազմի ամենահեշտ նվաճումը կհանդիսանար արեւմտյան ճակատում, մինչդեռ հակառակորդը վոչ մի գրոհի չձեռնարկեց: Փրանսացիներն շտապ կարգով գորք եյին փոխադրում ձեղը-վածքը ծածկելու համար, իսկ Կիլայտարում գտնվող գերմանա-ցիները կույր եյին և չեյին կասկածում Փրանսացիների թուլու-թյունը:

Գեներալ Կոքսը՝ վորն աշխատում եր բրիտանական եքսպե-դիցիոն ուժերի հետախուզական բաժնում, չափազանց խորաթա-փանց ու լավատեղյակ մարդ եր: 1918 թվականի փետրվարին և մարտի սկզբներին նա վոչ միայն ստույգ կերպով նախադուշա-կեց այն տեղամասը՝ Պիկարդիայում, վորտեղից Լյուզենդորֆը պատրաստվում եր հարձակման անցնել, այլ և մատնանչեց այդ

հարձակման որը (մարտի 20-ին կամ 21-ին): Կոքսը և նրա զի-նակիցները համարյա ստույգ կերպով հաշվել եյին այն ուժերի թիվը, վոր Լյուզենդորֆը և Փոն Գուույերը մտադիր եյին ուղար-կել Հաուֆի 17-րդ դիվիզիայի դեմ, ավելի քան 64 կիլոմետր յերկարություն ունեցող ճակատով: Նրանք հաղորդեցին, վոր գերմանական այն 60 դիվիզիաներից, վորոնք հարձակվելու յեն այդ ճակատում, 23-ը կհարձակվեն անմիջորեն Սեն-Կանտենի վրա, վորտեղ Հաուֆն ուներ ընդամենը 4 դիվիզիա միայն: Սա-կայն չնայած այդ առաջնայն վորոշակի նախադուշացմանը, լրա-ցուցիչ ուժեր չուղարկվեցին: Մարտի 21-ի լուսադիմին մտա-խուզի հետեից յերեացին գրոհող գերմանական զորքերը, իսկ ըրացուցիչ ուժերը յեկան միայն մարտի 24-ին, և այն ել աննշան թվով՝ ընդամենը 3 դիվիզիա միայն: Այս կուպիտ վրիպման հա-մեմատությամբ հետախուզության փոքրաթիվ վրիպումները կորցնում են ամեն մի նշանակութուն:

Չորահալաքը Փրանսիայում պատերազմի առաջին յերեք շա-բաթներին չափազանց վատ եր կազմակերպված: Գերմանական մի քանի հրամանատարների կարծիքով այդ հանդամանքը կարելի յեր ոգտազործել և խուսափել Բելգիայի չեզոքությունը խախ-տելուց: Նրանք գտնում եյին, վոր վերջին դեպքում Մեծ Բրի-տանիան հենց անմիջապես չեր միանա պատերազմին և հնարավոր կլիներ գերմանական նախտորմն ոգտազործել վորպես հարձակո-ղական դենք Փրանսիայի ու Ռուսաստանի դեմ:

Լիեժի պաշտպանությունն առաջին խոչընդոտն եր, վոր չեր նախատեսված գերմանական շտաբի կողմից: Բնականաբար հետա-խուզությանը մեղադրեցին այն բանի համար, վոր նա ցույց ե տվել փակ դուռը, փոխանակ բաց լուսամուտը ցույց տալու:

Պատերազմի ժամանակաշրջաններից մեկում հետախուզու-թյան անդլիական սպաները հրահանգ ստացան չինայել վոչ ծախս, վոչ աշխատանք՝ ձեռք բերելու Ֆոկկերի այն նոր ինքնա-թիռի դժադրերն ու սպեցիֆիկացիան, վորը հենց նոր եր ընդուն-վել գերմանական ողային ուժերի սպառազինման համար: Գեր-մանական մի դժգոհ յենթասպայի, վոր դեռ անցյալում ել կապ եր ունեցել Բելգիայում գտնվող բրիտանական մի գործակալի հետ, հաջողվում ե համոզել, վորպեսզի նա իր Ֆոկկերով թռչի և վայրեջը կատարի բրիտանական ճակատի թիկունքում: Յենթա-սպան ուրախությամբ ընդունեց 10 Փունտ ստերլինդ կանխավճա-րը և դարձյալ 50 Փունտ ստերլինդ ել ստացավ ինքնաթիռը հա-ջողությամբ տեղ հասցնելուց հետո: Անկասկած, այն ամենաու-

11-289299



ժեղ շարժառիթը, վորը բրիտանական գործակալն սղտագործեց յենթասպային համողելու ժամանակ, այն հայտարարութիւնն էր, թե անձնապես գործակալի համար պատերազմը բարեհաջող կերպով կավարտվի:

Շատ դասալիքներ վորձում էյին լավ ընդունելութիւն ապահովել իրենց համար, քիչ թե շատ հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդելով իրենց հրամանատարների պլանների մասին:

1917 թվականին մի քանի ելզասցիներ դասալքում են և անցնում Փրանսացիների կողմը, նախագգուչացնելով պատրաստվող գրոհի մասին, վորին, դասալիքների կարծիքով, նրանք առիթ չէյին ունենա մասնակցելու: Հետախուզութան սպաները դբաղվեցին այդ մարդկանցով, քանի վոր յեռամյա կռիվն ամենևին չէր վկայում ելզասցիների ազնվութան մասին: Արդ՞ո՞ք գերմանական հրամանատարութիւնը չի ցանկանում Փրանսացիներին նախապատրաստվող գրոհի միտք ներշնչել, — մտածեցին Փրանսացիները: Բայց այս անգամ հետախուզութիւնը չափազանց դանդաղ էր գործում: Նախադուշակված գրոհն սկսվեց ճիշտ մատնանչված ժամանակ, և Փրանսական ղինվորները, վորոնք ամենայն հավանականութամբ հայատում էյին ելզասցիների հաղորդած տեղեկութիւններին, դատանորեն ջախջախվեցին, փոխանակ հետ մղելու գրոհը, յեթե նման նախագգուչացումն ինչպես հարկն է ոգտագործվեր նախապատրաստման համար:

Համաշխարհային պատերազմն սկսվելուց մի քանի տարի առաջ «Բեռլինի Վիկտորիա ապահովադրական ընկերութիւնն» իր «հատուկ բաժանմունքն» ուներ Փարիզում, ըստվորում այդ բաժանմունքի բոլոր ծառայողներն ու գործակալները պրուսական պահեստի սպաներ էյին: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ բոլոր ծառայողները փոխարինվում էյին նորերով և վերադառնում Բեռլին, բայց նախքան վերադառնալը նրանցից յուրաքանչյուրը պարտադիր կերպով եքսկուրսիա յեր կատարում հանրապետութան արևելյան դեպարտամենտներում: Ապահովագրութան բոլոր մասնագետները նախապատրաստվում էյին ռազմական հետախուզութան մեջ աշխատելու համար: Յերբ պատերազմն սկսվեց, նրանք արդեն պատրաստ էյին:

Գուցե այժմ ժամանակը յեկել է հետախուզութանը մեղադրելու և ասելու, վոր գերմանական գեներալներն առաջ նետվեցին այն պատճառով, վոր շատ լավ գիտէյին ճանապարհը: Մի քանի տարի սրանից առաջ մի ղնդապետ դասախոսութիւններ էր կարդում Փրանսական գլխավոր շտաբի ակադեմիայում: Գասախոսու-

թիւնները գրավեցին մասնագետների ուշադրութիւնը, վորովհետև դասախոսը չափազանց շնորհալի կերպով ծաղրում էր գերմանացիներին 1870 թվականին կիրառած նրանց տակտիկայի համար: Հետագայում այդ դասախոսը—Ֆերդինանդ Ֆոշն—իրենց ցույց տվեց վորպես մանեյրի վարպետ, ուստի մենք ե՛լ ավելի մեծ վստահութամբ կարող ենք դատապարտել պատերազմը վարելու պրուսական մեթոդները: Բայց ամենից արտուրդային և անխմաստ յերևույթը գերմանական բանակում—այդ ռազմական ու ծովային հետախուզական ծառայութիւնների կոնֆլիկտներն էյին: Նրանցից յուրաքանչյուրն ստանում էր զգալի գումար (վոչ պակաս 12 միլիոն մարկից) և, այնուամենայնիվ, յուրաքանչյուրը նախանձում էր գաղտնի բյուջեյում գեմացիների գրաված տեղին: Թե ինչպիսի ընդհարումներ էյին տեղի ունենում մինչև 1914 թվականի ոգոստոսը, հայտնի չէ. բայց յերբ վրա հասավ ճգնաժամը, հետախուզութան յերկու բաժինները կարծես թե գտնվում էյին «քաղաքացիական պատերազմի» վիճակում, մըրցում էյին միմյանց դեմ և միմյանց վերաբերվում էյին ավելի մեծ թշնամութամբ, քան ղեպի հակառակորդը: Ռազմական հետախուզութան գործակալների բոլոր տեղեկութիւնները համարվում էյին հակասական և զուրկ վորեւէ արժեքից: Այդպես էյին պնդում ծովային հետախուզութան սպաները, բայց յերբ ծովային հետախուզութան տեղեկութիւններն ընկնում էյին ռազմական հետախուզյոյների ձեռքը, վերջիններս ե՛լ ավելի դադաղած էյին ցեխը կոխում այդ տեղեկութիւնները: Դաշնակիցների գործակալները և այլ աշխատակիցները, ինչպես նաև հետախուզութիւնը, ոգտագործում էյին այդ կոնֆլիկտն իրենց շահերի ոգտին, այն ե՛ առաջինները կողոպտում էյին գանձարանը, իսկ մյուսները ձեռք էյին բերում իրենց համար անհրաժեշտ տեղեկութիւնները: Հակառակ դրան, պատերազմի շրջանում դաշնակիցների հետախուզութիւնները համագործակցում էյին համերաշխ կերպով, մի բան, վորը վոչ միշտ կարելի յե նշել այդ պետութիւնների քաղաքացիական կամ ռազմական իշխանութիւնների հարաբերութիւններում:

Գաղտնի ծառայութան պրոֆեսիոնալների կոլեկտիվի մեջ ներծծվում էյին բազմաթիվ կամավորներ, մի հանդամանք, վորը վկայում է, թե նորեկներին լավ ընդունելութիւն էր ցույց տրվում: Հրետանային հիանալի հետախուզութան կազմակերպումը չափազանց կարևոր մի ավանդ էր, վոր Փրանսացիները

մտցրին ընդհանուր դործի մեջ: Այդ կազմակերպութեան նպատակն էր ստանալ այն բոլոր տեղեկութիւնները, վորոնք վերաբերում են հակառակորդի հրետանուն, ըստվորում ոգտագործվում էր նույնիսկ քաղաքացիական բնակչութիւնը, ինչպես սղամարդիկ, նույնպես էլ կանայք, վորոնք յերկար ժամանակ ազմաճակատին մոտիկ գտնվելու շնորհիւ սովորել էին ձայնից վորոշել դերմանական մարտկոցները: Խաղաղութիւն կնքելուց կարճ ժամանակ առաջ դաշնակից խոշոր պետութիւններից յուրաքանչյուրն արդեն ձեռնարկել էր հատուկ հրետանային հետախուզական ծառայութեան կազմակերպմանը՝ Ֆրանսական բանակի որին նախով:

Գերմանիայում սովորաբար դանգասովում էին այն բանից, թե այլևս յերբեք չի լինի այնպիսի հետախուզող, ինչպես Վիլհելմ Ծտիբերը: Այդ նշանակում էր, վոր հետախուզութեան մեծ վարպետի ժառանգորդները, չնայած իրենց բոլոր տվյալներին, նրա պատահական ընդորինակողներն էին միայն: Պատերազմի ժամանակ Լոնդոնում, մի մեկուսացված առանձնասենյակի մեջ, կարելի յեր հանդիպել (բայց վոչ այլ կերպ, քան նրա համաձայնութեամբ) մի բարեհոգի փոքրիկ մարդու, վորը նախաստի յեր, փոխծովակալ ու դադտնի սպասարկութեան պետ է վորի մեթոդները դադտնի էին նույնիսկ Բիսմարկի խուզարկուների համար: Սըր Ռեյչինալդ Հոլլը արքայական նախատորմում հայտնի յեր վորպես հրետանու հարցերի փորձագետ է վորպես մասնագետ՝ պայթուցիկ նյութերի բնագալառում: Բացառիկ հնարամտութեան տեր այդ սպան (հնարամտութիւն, վորը դրսևորվեց 1911 թվականին, մասնավորապես մի նալ հմտորեն փրկելու մեջ) հսկայական անձնական հմայք ուներ: Նա հիանալի տիրապետում էր ռոտար լեղունների է գրադլում էր համաշխարհային քաղաքակառնութեան հարցերի ուսումնասիրութեամբ: 1914 թվականի հոկտեմբերին նա նշանակվեց ծովային հետախուզութեան պետ: Փայլուն դալաղի որ ջերմ հայրենասեր, վորեւէ անձնական հաշիվներից հեռու Հոլլն իր ստորադրյալներին վորեւէ չհուր էր դիմելու բազմաթիւ տարրիկակ ու վտանգավոր ձեռնարկումների: Նրա նվաճումները շատ անաչառ գիտողների հարկադրում էին բրիտանական դադտնի սպասարկութեան բաժինը ձանաչել վորպես ամենագործունը այն բոլոր բաժինների մեջ, վորոնք համաշխարհային պատերազմի շրջանում վորեւէ տեղ գործում էին: Հոլլը միշտ ձգտում էր գտնել առաւել գործուն միջոցներ՝ պատերազմը

չահելու համար: Նրա հետ աշխատող ամերիկյան ծովային սպաները խոր հարգանքով էին խոսում բրիտանական ծովային հետախուզութեան մեջ գոյութիւն ունեցող փոխադարձ համագործակցութեան է ընկերութեան մասին:

Բրիտանական ծովային հետախուզական բաժինը մեծագույն նվաճումներ ձեռք բերեց այն մարդու ջրի տակ թափանցելու ընդունակութեան շնորհիւ, վորն արժանի յէ ավելի բանի, քան թուրքիկ ճանաչման: Նախաշինարար Ե. Չ. Միլլերը չափազանց ընդունակ ջրասույղ էր: 1914 թվականին ծովային դպրոցին կից ջրասուզային դործի հրահանգիչ նշանակվելուց մեկ տարի հետո, նա սուաջադրանք ստացավ իջնել ջրի տակ՝ գտնելու դերմանական այն սուզանալը, վորը կարճ ժամանակ դրանից առաջ թնդանութի կրակից խորտակվել էր Կենտի ծովափին: Խորտակված սուզանավի յենթադրական տեղը նշված էր խարսխանշանով: Միլլերին հանձնարարվում է ձեռք բերել սուզանավի է նրա վրա յեղած սարքերի կոնստրուկցիայի ու կառուցվածքի վերաբերյալ բոլոր հնարավոր տվյալները, վորոնց մասին ծովակալութիւնը չէր կարողանում բալականաչափ տեղեկութիւններ ստանալ դերմանական ծովային բազաներին կից գործող իր գործակալներից: Ողատար խողովակները խճճելու վտանգի տակ, Միլլերը արկի բաց արած անցքի միջով սողոսկում է սուզանավի կորպուսի մեջ է ուշադիր հետադորտում սուզանավի ներքին կառուցվածքը: Միլլերը սոսկ նախաստի չէր, վորը կատարում է իր պարտքը, նա նաև մեծ նախաձեռնութեան տեր ջրասույղ էր: Նա իր համար ճանապարհ է բաց անում դեպի սպայական խուցը, վոր գտնվում էր նալի հետին մասում, է սեյֆի մեջ գտնում է չափազանց թանգաղին մետաղյա մի արկը, վորի միջից դուրս են գալիս ականային նոր սարքերի պլանները, դերմանական ծովային կողերի յերկու դիրք է մի դադտնի կող՝ կայսերական ծովային նախատորմի հետ կապ պահպանելու համար:

Այդպիսով սկսվում է Լոնդոնի ծովային հետախուզական բաժնի դադտնի աշխատանքը, վորի մեջ հոչակավոր «40-րդ սենյակը» կարևոր դեր խաղաց: Միլլերի սկզբնական հաջողութիւնն անսպասելի մի բան էր, իսկ այնուհետև նրա արտակարգ ճարտկութիւնը, համարձակութիւնը, մեծ խորութիւններում ձնչմանը դիմադրելու նրա ընդունակութիւնն ողտագործիցին այնքան, վորքան հնարավոր էր: Ստեղծվեց հատուկ մի կազմակերպութիւն, վորը նրան է ողային պոմպերն ու մնացած հանդերձանքը փոխադրում էր Բրիտանական ծովափի այն կետը, վորտեղ խոր-

տակիւն էր մի վորեւե գերմանական սուզանավ: Սուզանավերն աղետի եյին յենթարկվում և ընդմիջտ անհետանում բոլորի համար, բացի Միլլերից: Նա սլանում էր այնտեղ, վորտեղ հաղթող նավը թողնում էր խարսխանչանը, և յեթե միայն յեղանակը թույլ էր տալիս, իջնում էր ծովի հատակը: Նա հաճախ հարկադրված էր լինում ողտաղործել պայթուցիկ արկեր՝ սուզանավի ներսը թափանցելու համար, բայց նա ամեն անգամ թափանցում էր սուզանավի մեջ, չնայած սպառնացող վտանդին, և ապա յերեվում ջրի յերեսը, ձեռքին բռնած մի նոր մետաղյա արկը, վորը պարունակում էր հակառակորդի նոր կողեր ու սլաններ:

Ժամանակի ընթացքում նա նույնքան լավ ծանոթացավ գերմանական սուզանավի ներքին կառուցվածքին ու բոլոր հարմարանքներին, ինչպես յուրաքանչյուր գերմանական ինժեներ: Մինչև 1918 թվականի նոյեմբեր ամիսը ծովի հատակին սլանկել էյին ավելի քան 60 սուզանավ, և դրանք բոլորը, չնչին բացառութեամբ հետադուրված էյին Միլլերի կողմից: Գերմանական նավատորմի հրամանատարները մշտապես փոխում էյին ականաղաչտերի գասավորութիւնը, դադանի կողերն ու հատուկ հրամանները, բայց բրիտանական հետախուզութիւնը շախաղանց արագորեն իմանում էր այդ բոլոր փոփոխութիւնները մասին:

Մի քանի դեպքերում 24 ժամվա մեջ ծովակալութիւնն ստանում էր մինչև 2000 բռնված հաղորդագրութիւն: Բոլոր գերմանական կողերն ու ծածկագրերն արագորեն կարգացվում էյին, թեև սկզբնական շրջանում այդ փաստաթղթերից յուրաքանչյուրը մի կատարյալ հանելուկ էր: Անդրխացիները պնդում են, վոր նրանք Գոգդեր Բանկի մոտ տեղի ունեցած ճակատամարտից մեկ օր առաջ գիտեյին գերմանական ուժերի դուրս դալու մասին, տեղյակ էյին նրանց թվական կազմին ու շարժման ուղղութեանը և գիտեյին նաև Յուտլանդական ճակատամարտի նախապատրաստման մասին, չնոքհիվ բռնված ու վերծանված ռադիոհրամանների: Սակայն մի չափազանց լավատեղյակ փորձագետ գտնում է, վոր Յուտլանդական ճակատամարտի ժամանակ բրիտանական ծովային հետախուզութիւնը հանկարծակիի բերվեց, վորովհետև վո՛չ բռնված հաղորդագրութիւնները, վո՛չ Կուկսհաֆենից դործակալների ուղարկած տեղեկութիւնները ժամանակին հաշվի չէյին առնվել: Գուցե այդ ճիշտ է. սակայն «40-րդ սենյակում» վերծանված հարյուրավոր այլ գրութիւններն ու հաղորդագրութիւնները՝ յերթևեկող սուզանավերի, հարձակման պատրաստվող ցեպուրիներին մասին, այնուհետև, նավատորմին տրվող

կողային հրամանները, արտաքին դործերի միմիտութեան հրահանգները չեզոք յերկիրներում գտնվող դեսպաններին, —անվիճելիորեն ողտաղործվում էյին դաշնակիցների շահերի ոգտին: «40-րդ սենյակից» դուրս յեկավ Յիմմերմանի այն կործանիչ հեռագիրը Մեքսիկայի գերմանական դեսպան Փոն Եկգարդտին, վորի պատուութիւնը նկարագրված է դեսպան Ռուդեր Հարիս Պեջի հռչակավոր նամակներից մեկում:

Նախագահ Վիլսոնը դեռ չարունակում էր չեզոքութիւն պահպանել. նա հասկանում էր, վոր յերկիրը կանդամ է պատերազմի շեմքին, բայց չէր ցանկանում ընթանալ իր բոլոր իդեալներին հակասող ուղիով: Յիմմերմանը ցանկանում էր շփոթութիւն ստեղծել Նոր Աշխարհում՝ խուսափելու համար յեվրոպական դործերի մեջ Ամերիկայի միջամտութիւնից: Նրա հեռագիրը Փոն Եկգարդտին առաջարկ էր պարունակում Մեքսիկայի հետ Միացյալ Նահանգների դեմ դաշինք կնքելու և ձապոնիայի հետ համադործակցութիւն ստեղծելու մասին: Մեքսիկային հրապուրելու առարկա պետք է ծառայեր ԱՄՆ-ի հարաւարեւմտյան ժասում գտնվող տերիտորիայի հափշտակումն ու աննեքսիան: Այդ առաջարկն ամբողջովին ֆանտաստիկ էր, սակայն դա այն վճռական խթանը հանդիսացավ, վորն ամերիկյան կառավարութեանը հարկադրեց մտնել պատերազմի մեջ:

Լայն հասարակութեան համար անհայտ մնաց այն դերը, վոր խաղացել էր սըր Ռեյլինալդ Հոլլը: Յիմմերմանի հեռագիրը բռնել էյին բրիտանական ծովային հետախուզութեան դործակալները և վերծանել էյին Հոլլի ստորագրյալները: Բայց հետագա բխտումները հեշտացնելու նպատակով ծովային հետախուզութեան պետը գերմանական զայրացած չինովիկներին ուղղեց կեղծ հետքով: Նա Լոնդոնի մի քանի ժուռնալիստների, վորոնց հոգվածները կարող էյին Գերմանիա ընկնել Հոլլանդիայի, Դանիայի կամ Շվեյցարիայի վրայով, առաջարկեց իրեն մեղադրել այն բանի համար, վոր ծովային բաժինն անընդունակ յեղավ այդ կարևոր հաղորդագրութիւնը բռնել Փոն Եկգարդտին դեռ չհասած, մինչդեռ Մեքսիկայում գտնվող ամերիկյան դադանի դործակալները կարողացան հեշտութեամբ գողանալ այդ փաստաթուղթը:

### ՇԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԻՍԵՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռազմական լրտեսութիւնը հետախուզութեան հատկապես վտանգավոր տեսակն է: Հետախուզութիւնը պատվավոր դրադմունք էր մինչև այն ժամանակ, յերբ պատերազմն ընդունեց վիթ-

խարի թափ, վորը պահանջում եր ամբողջ ժողովուրդների մորե-  
լիզացիա: Նույնիսկ մարշալները զգեստը փոխում և հետախու-  
զության եյին գնում (որինակ՝ մարշալ Պեյուն): Փրանսական  
մեծ մարշալ Կատինան հպարտանում եր այն բանով, վոր մի ան-  
գամ ինքն անխաճատի կեղտոտ ցնցոտիներ ե հագել Արբաս թա-  
փանցելու համար, վորը պաշարել եր իր բանակը: Անդրիական  
թագավոր Ալֆրեդը վոչ պակաս «մեծ» եր, վորովհետև նա զգես-  
տը փոխած գաղտնի այցելեց դանիացիների ճամբարը, գնահատե-  
լու համար այն վտանգը, վորն սպառնում եր նրա արևմտյան  
սաքսոնական թագավորութայնը:

Ասպետութայն դարաշրջանում հետախուզութայնն ամօթալի  
զբաղմունք եր համարվում, և վորոչ ժամանակ բանակների հրա-  
մանատարները հրաժարվում եյին ողտվել հետախուզութայն ծա-  
ռայութայնից: Այդ ժամանակ զոգերը սովորական զոգութայն  
համար կախազան եյին բարձրացվում, իսկ պրոֆեսիոնալ լրտե-  
սը վայելում եր վորոչ արտոնութայններ: Ռազմական հետախուզող  
Ռոբինզոնը, վորը մերկացվեց Լոնդոնում 1757 թվականին, Տաու-  
երի բանտում նստեց ընդամենը 6 ամիս, վորից հետո ազատ ար-  
ձակվեց: Դրանից կարճ ժամանակ անց վոմն դոկտոր Հենսի,  
վորը գտտվում եր 1758 թվականի հունիսին, անսպասելի կերպով  
դատապարտվեց կախաղանի: Դատարանում նա հարց տվեց՝ կա-  
րելի՞ յե, արդյոք, հետախուզողի հետ այնպես վարվել, ինչպես  
սովորական խաբեբայի հետ են վարվում (Կոլեն, «Սաքսոնական  
մարշալի պատերազմը»):

Մենք տեղեկութայններ չունենք այն մասին, թե ի կատար  
ածվե՞ց արդյոք Հենսիի մահապատիժը, բայց այդ մահապատիժի  
հնարավորութայնը մեծ հուզմունք առաջացրեց գաղտնի գործա-  
կալների շրջաններում: Մահապատիժն ահեղ նորմուծութայն եր  
և նա վախեցրեց Անդրիայում Լյուդովիկոս 15-րդի համար աչ-  
խատող շատ գործակալների: Փրիդրիխ Մեծը մոտավորապես  
նույն այդ ժամանակ վերջ դրեց հետախուզութայնը՝ վորպես ու-  
րախ ալանտյուրայի: Փրիդրիխն աչքի յեր ընկնում՝ զորավարի  
բնածին տաղանդով, և այդ ամենից ավելի պարզ արտահայտվեց  
հետախուզյունների ողտագործման մեջ: Նրան համարում են կազ-  
մակերպված ռազմական հետախուզութայն հայրը, իսկ հետա-  
խուզութայն մայրը՝ անհրաժեշտութայնն ինքն ե:

Սկզբում Փրիդրիխը յերազում եր Վոլտերի գափնինների մա-  
սին: Նրա պամֆլետները տարածվում եյին ամբողջ Յեվրոպա-  
յում: Փրիդրիխը, վորը բոլորին հայտնի յե վորպես «հողեր

հափշտակող», իր «հանցագործութայնների» ցուցակին ավելաց-  
րեց վատ մանրններն ու ցինիզմը: Չափազանց աղբեղիկ բու-  
դուարներում քննարկվում եր այն հարցը, թե ինչպես հետ պահեն  
նորեկուկին: Ծուռով Փրիդրիխը հասկացավ, վոր Ռուսաստանն ու  
Փրանսիան միանում են Ալստրիայի հետ, և վոր Սաքսոնիան ու  
Շվեդիան կհեռան նույն այդ որինակին:

Փոխանակ զբաղվելու փրիստիպայութայնը ու պամֆլետնե-  
րով, Փրիդրիխը պետք ե դառնար իր ժամանակի մեծ զորավարը  
այլապես այդ դաշինքը կձգմեր նրան: Նա հաշվի պետք ե առնեթ  
իր փոքր, աղքատիկ թագավորութայն իրազրութայնը և լավ ճա-  
նաչեթ հակառակորդի ռազմական ուժը: Նա մեկ անգամ արդեն  
հաղթել եր Ալսաթրիային, բայց վորպեսզի հաղթեր նաև  
այդ յերկիրներին, նա պետք ե տեղյակ լինեթ նրանց բոլոր մա-  
դրութայններին: Ուստի Փրիդրիխը գաղտնի սպասարկութայնն  
այնպես կազմակերպեց, վոր կարողանար իր սլանները կառուցել  
լայն ու փաստական ինֆորմացիայի հիման վրա: Նրա գաղտնի  
սպասարկութայնն այն ժամանակվա ամենախոշոր ռազմական  
նորմուծութայնը հանդիսացավ, ըստվորում գաղտնի պատե-  
րազմի նրա մեթոդները մեկ ու կես դար հետո ել դեռ պահպանեթ  
եյին իրենց ուժը ռազմական գործի մյուս բոլոր ընդավառնե-  
րում: Փրիդրիխը պահում եր հարյուրավոր հետախուզյուններ և ան-  
ձամբ ստուգում ու համեմատում եր նրանց հաղորդած տեղեկու-  
թայնները: Նա իր գործակալներին բաժանում եր չորս կատեգո-  
րիայի՝ 1) սովորական լրտեսներ, վորոնք հավաքագրված եյին  
չքավորութայն միջից և դո՛հ եյին աննշան դումար վաստակելու  
կամ զինվորականին ծառայութայն մատուցելու հնարավորու-  
թայնից, 2) յերկու տիրոջ ծառայող մարդիկ, անհո՛սալի  
ռենեգատներ ու վուլգար տեղեկատուներ, վորոնք պիտանի յեն  
գլխավորապես հակառակորդի թիկունքում կեղծ տեղեկութայն-  
ներ տարածելու համար, 3) բարձրաստիճան մարդիկ, պալատա-  
կաններ ու աղնվականներ, շտաբի սպաներ ու դավադիրներ, վո-  
րոնք ամբողջ ժամանակ պահանջում եյին խոշոր դումարներ կամ  
արտոնութայններ, 4) այնպիսի անձեր, վորոնք հարկադրված  
են հետախուզյուն դառնալ հակառակ իրենց ցանկութայն: Պրու-  
սական յեռանդուն թագավորը վոչ միայն կրասիֆիկացիայի յեր  
յենթարկել գործակալներին, այլև կանոններ եր մշակել բոլոր  
կատեգորիաների գաղտնի գործակալների հավաքագրման ու ող-  
տագործման վերաբերյալ:

Փրիդրիխը հաշվի չառավ հայրենասեր-հետախուզյին: Նա

ուեալիս եր, ցինիկ և բացարձակ միապետ: Պետութիւններ կա-  
ռավարողները նրա ժամանակներում սակաւ էին դորձ ունենում  
խոհական հայրենասիրութեան հետ: Ֆրանսական հեղափոխու-  
թիւնը դեռ Յեվրոպան չեր բոցալառել նացիոնալիստական խան-  
դավառութեամբ: Սպանոսալիքներ ու կաշառք, աստիճանը բարձ-  
րացնելու և վաստակ ձեռք բերելու խոստումներ, — ահա այն մի-  
ջոցները, վորոնցից ոգւովում եր Ֆրիդրիխը:

Այսպիսի քաղաքագետներ, ինչպիսիք էին Գրոցիուսը և Մակ-  
կիալեիլին, դրում էին ի պաշտպանութիւն լրտեսները ոգտա-  
գործման: Բայց մեր որերին սըր Ռոբերտ Բադեն—Պաուելը վար-  
կաբեկեց իրեն «Իմ արկածները վորպէս հետախույզ» գրքով:  
Նապոլեոնը, վորն իր արամագրութեան տակ ուներ խնամքով կաղ-  
մակերպված ու թանգ նստող վոստիկանական գաղտնի սպասար-  
կութիւն, հաճախ կրկնում եր. «Լրտեսը բնածին դավաճան է»:  
Նա հիմնովում եր գլխավորապէս կաշառման և սպանոսալիքների  
վրա:

Այսպիսով, հետախուզութեան սխտեմատիղայեայի գործում  
վոչ մի նորմուծութիւն չի յեղել այնքան ժամանակ, մինչև վոր  
յերեւան յեկավ մի այլ պրուսացի՝ Շտիբերը, Բիսմարկի ժամա-  
նակիս հետախուզութեան այդ մեծ վարպետը: 1870 թիւին ռազ-  
մական լրտեսութիւնն ուժեղ չափով դարդացավ, ըստօրում  
գործակալները վխտում էին ամենուրեք և իրենց պահում էին  
այնպէս, ինչպէս մինչ այդ յերբեք չէին պահել: Շտիբերի առա-  
ջին փորձերը վերաբերում են մինչև 1866 թիւական ընկած ժա-  
մանակաշրջանին, յերբ նա Ավստրիայում կաղմակերպեց այնպիսի  
հետախուզութիւն, վորի արդիւնքները պատմութեան մեջ իրենց  
հալասարը չունէին: Նրա համար որինակ եր վոչ թե Ֆրիդրի-  
խը, այլ Մովսեսը: Յերբ այդ մեծ մարգարեն իր 12 տոհմակից-  
ներին ուղարկեց զիտելու յերկիրը, նա վերջիններին չսահմանա-  
փակեց զուտ տեղագրական բնույթի առաջադրանքով: Յեհովայի  
հետ ունեցած սովորական խորհրդակցութիւնից հետո նա պատ-  
րաստ եր ստույգ ցուցումներ տալու ազրեսիվ գաղտնի սպասար-  
կութեան համար: Յերբ Մոլտկեն հարձակվեց Մակ—Մահոնի վրա  
և անցավ Հոննոսը, Ֆրանսիայի հյուսիսային մասում, ուր նա  
ներխուժեց, վխտում էին պրուսական հետախուզները: Մտրաս-  
քուրդից մինչև Սենա ընկած տարածութեան վրա Շտիբերն ուներ  
36 հազար դորձակալ:

Բիբլիական առաջնորդն իր տոհմակիցներին հրամայեց բարձ-  
րանալ սարի վրա, դիտել յերկիրը և այդ յերկրում ապրող մարդ-

կանց, վորոշել՝ շա՞տ ե նրանց թիւը, թե քիչ, ուժե՞ղ են նրանք,  
թե թույլ, ինչպի՞սին ե հողը և ինչ քաղաքներ ունեն նրանք,  
արդո՞ք վրաններո՞ւմ են ապրում, թե տներում: Ապա նա խոր-  
հուրդ տվեց նրանց իմանալ, թե արդավա՞նդ ե արդո՞ք հողը և  
ի՞նչ անտառներ կան այդ յերկրում: Յեվ Շտիբերի կողմից Նապո-  
լեոն Յ—րդի տերիտորիան ուղարկված գումարտակները 1868 թիւա-  
կանից սկսած հենց այդպիսի տեղեկութիւններ էլին հավա-  
քում: Դեպի Փարիզ տանող ճանապարհի յուրաքանչյուր քայա-  
փոխը նշված եր քարտեղի վրա և ստուգված ըստ մասշտաբի,  
կարծես թե ռազմական հարձակումը ճշգրիտ զիտութիւն ե,  
ինչպէս աստղաբաշխութիւնը կամ մասթեմատիկան: Ֆրանսական  
հակահետախուզութիւնը չափազանց թույլ եր և վոչինչ չեր կա-  
րող անել մեծածախ դավաճանութեամբ գրադված 36 հազար ռե-  
զիդենտների կամ տուրիստների դեմ: Այդչափ մեծ թիւով հետա-  
խույզների գործունէութիւնը պետք ե վոր զգալի լիներ: Նրանք  
տեսնում էին ամեն ինչ և փոշեծուծի նման ներծծում էին այն  
ամենը, ինչ անհրաժեշտ եր Շտիբերի համար:

Այն անդերադանցելի արագութիւնը, վորով պրուսական բա-  
նակները 1870 թիւականի կամպանիայի ժամանակ շարժվում էին  
դեպի Փարիզ, զղալիորեն վերադրվում ե ներխուժման գոտինե-  
րում Շտիբերի կողմից կատարված նախապատրաստութեանը: Այդ  
հաջողութեան միտքը հետագա 40 տարիների ընթացքում իշ-  
խում եր Յեվրոպայի բոլոր գաղտնի սպասարկութիւնների և  
հետախուզութեան նախադժերի վրա: Հետախուզութիւններից  
նրանք, վորոնք չէին պատրաստվում նմանել Շտիբերին, այ-  
նուամենայնիվ պլաններ պետք ե մշակել այդպիսի վտանգը հետ  
մղելու համար: Այս բոլորը հասցրեց հատուկ դպրոցների ստեղծ-  
մանը, վորը միակ նորմուծութիւնն եր ռազմական գաղտնի դըպ-  
րոցի սխտեմում՝ Շտիբերի հաղթանակից մինչև համաշխարհային  
պատերազմի սկիզբն ընկած տասնամյակների ընթացքում: Վոր-  
քան ել դրավիչ թիւ նման հաստատութիւնը, այնուամենայնիվ  
հետախուզական դպրոցը գլխավոր շտաբի միայն յերկրորդական  
ակադեմիան ե, վորտեղ հետախուզական գործի ընդունակու-  
թիւնները կարող են կուլտիվացիայի յենթարկվել տեխնիկական  
այնպիսի պատրաստութեան հետ, վորն ապագա հետախույզի գոր-  
ծունէութիւնը կուղղի դեպի անմիջական նշանակութիւն ու-  
նեցող բնագավառները: Մինչև պատերազմը գերմանական հետա-  
խուզական դպրոցները վորոչ փառք էին վայելում Յեվրոպայում:  
Գաստվանդոնները, անկասկած, չափազանց լավն էին և վերին

աստիճանի պահանջկոտ, բայց և այնպես յեղել են դեպքեր, յերբ մինչև համաշխարհային պատերազմն այդ դպրոցն ավարտած դերմանական դործակալները բանտ են նետվել իրենց դործած սըխալների պատճառով:

Դաշնակիցները պատերազմի շրջանում մշակեցին մի շարք կարգապահական տուժանքներ, վորոնք կիրառվում էին դադանի սպասարկութան մեջ դործած դանցանքների համար: Շտիբերի հետախուզական մեխանիզմը հենց միանգամից կորցրեց իր հավասարակշռութունը, յերբ նա բաղխվեց դոն հակառակորդին: Յերբ Բրյուսսելը նոր եր միայն գրավված, գերմանական սպանեքը յերկաթուղով դալով այնտեղ, առանց վորք իսկ տատանվելու, կառավարներին տալիս էին այն շենքերի հասցեները, վորոնք բերդիական մայրաքաղաքում նախանշված էին սպաների համար: Այդ նման եր հիանալի կերպով կազմակերպված մի ուրախ ուղեորության: Միևնույն ժամանակ դա դադանի պատրաստության շտիբերյան մի տրյուկ եր, բայց համարյա վերջին տրյուկն արդեն չարագուշակ ու սպառնալի առաջխաղացումների մեջ:

Գերմանական սպասարկության դժբախտությունն այն եր, վոր նրա ղեկավարները չէին կարողանում արագորեն կողմնորոշվել այն նոր պայմաններում, վորի մեջ Գերմանիան ընկալվեց ֆրանս-պրուսական պատերազմից հետո:

Գերմանական սպասարկությունը բաժանվում եր բանակային հետախուզության, ծովային հետախուզության և անհատական կորպուսի: Առաջինն աշխատում եր գլխավոր շտաբի ղեկավարությամբ, վորն, ըստ լուրերի, ցանկանում եր ղեկավարել նաև յերկրորդին: Արտաքին գործերի մինիստրությունը ղեկավարում եր յերրորդ կազմակերպությունը, ըստվորում այդ ղեկավարությունը կիրառվում եր կայսեր անմիջական հսկողության տակ: Հետախուզական դպրոցները միացված էին գլխավորապես դադանի սպասարկության առաջին յերկու բաժինների հետ, և դասարանները կոմպլեկտավորվում ու ղեկավարվում էին վոր ալեյի դադանի կերպով, քան ռազմական գերատեսչության մյուս շտաբայինները: Գաղանի սպասարկության պետերն իրենք էին դասավանդում այդ դպրոցներում և մանրամասն քննարկում էին գանազան հնարամիտ գործողություններ: Գլխավոր շտաբի գլխավորական ինժեներները դասախոսություններ էին կարգում ամբությունների կառուցման մասին, յեռանկյունաչափությունից, տեղագրությունից ու դժագրությունից:

Հետախուզը պետք է կարողանա ճիշտ վորոշել վայրի բարձ-

րությունը, անկյունները, հեռավորությունը և ուղիքը: Մի խոսքով, նա պետք է դառնա դիտող, ըստվորում իր դիտողությունների մեջ նա պետք է հույս դնի իր տեսողության ու ինտուիցիայի վրա միայն: Հայտնի յե, վոր մինչև 1914 թվականի ամառը Մեծ Բրիտանիայում գործող մի գաղանի գործակալ հեռավորությունը քայլելով չափելու և անկյունների պատահական դիտողության ու դրան հաջորդող յեռանկյունավորման միջոցով յարդի ու վոննաչափի ճշտությամբ հաշվել եր հյուսիսում գտնվող մի մեծ ու կարևոր կամուրջի չափը: Առանց վորևե կասկած առաջացնելու տեղական բնակիչների մեջ, նա նույնիսկ վորոշել եր, թե քանի մարդ կարող է տեղավորվել այդ կառուցման մոտակայքում. նա ուսումնասիրել եր կամուրջի հիմքը, կամուրջի հաստարանների յերկրաբանական տեսակը, և վորոշել, թե իր կարծիքով ինչ քանակությամբ դինամիտ եր անհրաժեշտ այդ կամուրջը «հիմնական վերանորոգման» յենթարկելու համար՝ Գերմանիայի և Բրիտանիայի միջև պատերազմ ծագելու դեպքում:

Համաշխարհային պատերազմի ժամանակ հետախուզիչների պատրաստումը գերմանական դպրոցներում, ըստ յերևութին, կատարվում եր հազճեպորեն, անփույթ կերպով և վորգերմանական վորով: Մինչև պատերազմն այդ պատրաստությունը կատարվում եր այնպես, վոր Ե-Տ ամսվա ընթացքում դպրոցները տալիս էին գործակալների այնպիսի շրջանավարտներ, վորոնց կրթությունն իրազեկ և անաչառ անձերի կարծիքով չէր զիջում շատ տեխնոլոգիական ինստիտուտների տված կրթությանը: Սակայն պետք է հաշվի առնել այն հիմարտությունը, վոր տեխնոլոգիայի ինտենսիվ ուսումնասիրությունը հակառակ է տաղանդավոր հետախուզիչ բնությանը: Շտիբերի-Շուլմեյստերի տիպի բնածին վարպետները յերբեք չեն ցանկանա դպրոց հաճախել: Պուցե հենց դրանով է բացատրվում գերմանական գործակալների ակտիվությունը իտաղդ ժամանակ, և նրանց լիակատար ճախողումը համաշխարհային պատերազմի պայմաններում: Պետք է նաև նշել, վոր գերմանական սպասարկության ղեկավարները, չնայած իրենց դպրոցների նկատմամբ ունեցած վստահությանը, մինչև պատերազմը մշտապես գործ ունեյին մի շարք մութ անճանավորությունների հետ, վորոնք զբաղվում էին ամբոցների ուսումնասիրությամբ և ստացած տեղեկությունների վաճառքով նրան, ով դրանց համար ալեյի կվճարեր:

Մի կողմ թողնելով ռազմական հետախուզիչների՝ ժամանակի ընթացքում սրբազորված ֆրիդրիխյան կլասիֆիկացիան, պետք



ենչել, վոր ժամանակակից հետախուզչն անկախ իր նշանակութիւննից ու բնույթից, պետերին հայտնի յե միայն իր աշխատանքի ատեսակով: Հետախուզչը կարող է լինել ռեզիդենտ, վոր նստում է վորեւէ տեղում և սպասում բարենպաստ մոմենտի, կամ թե շրջագայում է յերկրում՝ նրա գաղտնիքները մեջ թափանցելու նպատակով: Վերջինիս աշխատանքը կարող է չափազանց ոգտակար լինել խաղաղ ժամանակ, և յերբեմն չափազանց եֆեկտիվ արդէյունքներ տալ պատերազմի ժամանակ: Շրջագայելով յերկրում՝ հետախուզչ-ռեզիդենտն ավելի նվազ չափով է կասկածելի և տալիս է ավելի ստույգ տեղեկութիւններ, քանի վոր նա հաղորդում է այն մասին միայն, ինչը տեսել է սեփական աչքերով: Սիրողը, պրոֆեսիոնալը, հայրենասերը, ռենեգատը, վարձկանը, — բոլորը կարող են զգոն, ճշմարիտ ու շրջահայաց լինել կապի միջոցների ընտրութեան գործում. նրանցից յուրաքանչյուրը կարող է խուսափել անդուլտ արարքներից, իսկ հետախուզչութեան վոչ մի պետ դրանից ավելին չի պահանջի նրանցից: Ռեզիդենտին շատ ավելի դժվար է հայտաբերել, և սովորաբար հակառակորդը նրան գտնում է հետախուզչ-սուրհանդակներին կամ տեղեկութիւններ հափաքողներին հետապնդելու միջոցով, վորոնք յերբեմն կոչվում են «փոստարկղներ»: Յերբեմն ռեզիդենտն ինքն է մատնում իրեն՝ տեղեկութիւնն անմիջորեն ուղարկելու վորեւէ ֆանտաստիկ փորձով:

Գերմանական սպասարկութեան առանձին գործակալներ համախմբված էյին մի կազմակերպութեան մեջ, և պատերազմը հայտարարվելուց հետո հակառակորդի հակահետախուզչութեան կողմից հայտաբերված յուրաքանչյուր գործակալ իր հետեւից տանում էր մի շարք ուրիշ գործակալներ: Հակահետախուզչութիւնը հայտաբերեց Ֆրիդրիխ Մեծի սիստեմի մեջ Շտիրբերի և նրա կլիկի կողմից կատարված նորմուծութիւնների մեծ մասի սնանկութիւնը: Ժամանակակից գաղտնի սպասարկութիւնն ազդարարել է, վոր հետախուզչների լեզեոնները, կոհորաները և նույնիսկ միասին գործող փոքրիկ խմբերն ավելի մեծ վտանգ են ներկայացնում, քան թե առանձին-առանձին ղեկավարվող և միմյանցից անջատ գործող նույն թիւով գործակալները: Զինվորական մասնագետները, վորոնք սիրում են ընդդէմել, թե պատրաստութիւնն բազմապատկուցումը մարդկանց ամբոխը դարձնում են կարգապահութիւնը մարդկանց ամբոխը դարձնում են կարգապահ բանակ, բնականաբար չէյին կարող համաձայնվել այն մտքի հետ, վոր հետախուզչի համար անբարենպաստ են այն պայմանները, վորոնք բարենպաստ են գինվորի համար: Համառ-

խարհային պատերազմի սկզբին հետախուզչական բաժինները այն ղեկավարները, վորոնք գործում էյին Շտիրբերի սիստեմով, պատերազմի հենց առաջին շաբաթներից ստիպված յեղան սեփական փորձի հիման վրա հանդէլ ընդունված սիստեմների ու կանոնների ժխտմանը:

Պատերազմը հայտարարվելուց մեկ ամիս հետո Լոնդոնի հակահետախուզչութիւնը ծանոթացավ վոմն կարլ Գուստավ Եռնստի՝ մի վարսավիրի հետ, վորն իրավարանորեն բրիտանական հայտակ էր, քանի վոր ծնվել էր Անգլիայում: 16 տարի այդ մարդն ապրում էր կայեղոնյան Ռոդը վրա գտնվող միլենույն տան մեջ և ամենայն հավանականութեամբ այդ ամբողջ ժամանակամիջոցում փոստ է ստացել, վորպէս գերմանական հետախուզչութեան սպասարկութեան «փոստարկղ» Մեծ Բրիտանիայում: Ինչպէս հետագայում պարզվեց, նրա ռոճիկը յեղել է ամսական ընդամենը 1 ֆունտ ստերլինգ, բայց յեթե այդ գումարն աննշան է թվում, ապա նրա աշխատանքի հետ կապված ռիսկը նույնպէս մեծ չէր, իսկ ջանքերն էլ ավելի քիչ էյին: Գործակալների համար հրահանգներ պարունակող ծրարները կապոցներով հասցնում էյին նրան Շարլոտտենբուրգում գտնվող գերմանական հետախուզչական կենտրոնից: Բոլոր ծրարների վրա փակցված էյին լինում անգլիական նամակագրոչման և Եռնստին միայն մնում էր այդ ծրարները դրել մոտակա փոստարկղը: Իր մոտ ստացվող բոլոր պատասխանները նա ուղարկում էր իր գերմանական տերերին: Այդպիսով նրա գործունեութիւնն այն աստիճան պատահական էր ու սովորական, վոր նա վոչնչով չէր կարող մատնել իրեն: Բացառութեամբ անուններից ու հասցեներից (վերջիններս փոփոխվում էյին շատ սակաւ) նա շատ քիչ բան գիտեր կամ նույնիսկ վոչինչ չգիտեր այն կենտրոնախույս ուժի մասին, վորի գործողութիւնն ապահովում էր ինքը:

Գերմանացիները գտնում են, իսկ անգլիացիները չեն փորձում վիճարկել, վոր Եռնստի, այդ տիպիկ «փոստարկղի» ճախողումն արդէյունք էր անգլիական մի գործակալի աշխատանքի, վորին հաջողվել էր սողոսկել գերմանական հետախուզչական կենտրոնի գաղտնիքների մեջ: Համեստ, ամենքի համար անհայտ այդ վարսավիրը նամակագրութիւն ուներ 22 թղթակիցների հետ, ըստվորում դրանք բոլորն էլ գերմանացիներ էյին՝ ինամքով դասավորված Բրիտանիայի ծովային ու զինվորական զանազան կենտրոններում: Նրանցից մեկը Բրիտանիայի մեկնեց 1914 թվականի ոգոստոսի 4-ին և այդպիսով պատահաբար, թե նա-

Ասազգացման չնորհիվ, խուսափեց տապալումից: Ինքը Եռնասը վոչ մի հիմք չուներ տաղնապ բարձրացնելու և փրկվելու հնարավորութիւնն էլ չուներ: Նա ձերբակալվեց ուղոստոսի 5-ին, ածեւին ձեռին. այն բոլոր 21 դործակալները, վորոնք մնացել էին Անգլիայի պատերազմական նախապատրաստութեանը վերահսկելու նպատակով, հենց նույն ուրը կալանքի տակ առնվեցին:

Եռնասը դատապարտվեց յոթը տարվա տաժանակիր աշխատանքի: Մյուսներին, վորպէս գերմանահպատակներ, միայն յերկրի ներսը տանելով չեզոքացրին մինչև պատերազմի վերջը: Հակահետախուզութեան այդ նվաճումը գերազանցեց հետախուզութեան պլանների քայքայման մինչև այդ հայտնի բոլոր դեպքերից: Գերմանական հետախուզական սպասարկութիւնը մեկ հարվածով քուցեց. Լոնդոնի ամենախիտ մատախուզից շատ ավելի թանձր քողը պատերազմ հայտարարվելուց անմիջապէս հետո պատեց Բրիտանիային: Պրուսական զենեղալ Փոն Կլուկը պատմել է, թէ վորքան մեծ է յեղել նրա զարմանքը, յերբ իր առաջին բանակի ավանդարդն անսպասելի կերպով հանդիպել է բրիտանական կանոնավոր զորքերի: Անգլիական հակահետախուզութիւնը թաղցրել էր եքսպեդիցիոն ուժերն իր ամենամոտիկ հակառակորդից: Յեւ վեթե բրիտանական մշտական բանակը լինէր նույնքան մեծ, վորքան մեծ էին Փոն Կլուկի ուժերը, ապա նա այն աստիճան զարմացած կլինէր, վոր այդ զարմանքը կզգացվէր Մոնսից մինչև Տաննենբերգ:

Առաջին ձախողումներից հետո հետախուզութեան գերմանական ղեկավարները դադարեցին հավատալ իրենց կազմակերպութեան անխալականութեանը և սկսեցին արհամարհել, վոչ սակաւ դեպքերում մեղադրել իրենց: Ասում էին, թէ հետախուզական կարևոր առաջադրանքները շատ հաճախ տրվում էին անկուշտուրական ու տիմար անձերի: Եռնասը—այդ վարսավիրը և ծնունդով ոտարեկրացին—Անգլիայում հենց սկզբից ձախողեց ամեն ինչ:

Գերմանական դադանի սպասարկութիւնը սնանկ դուրս յեկավ վոչ, իհարկէ, կապույտ արջան պակասութեան հետեանքով. նրա անհաջողութիւնները կարող են վերադրվել հնացած ստրատեգիային: Շտիբերի նման հանձարը հաշի կառնեք փոփոխութիւնները և կաշխատեք քաջ չղալ պոչում: Մակայն արդարութիւնն ասելով Շտեյնհաուսերի և նրա կոլեգաների մասին, վորոնք 1914 թվականին ղեկավարում էին գերմանական հետախուզութիւնը, պետք է նշել, վոր գլխավոր ձախողումները տեղի

էին ունենում վոչ յեւրոպական կոնտինենտում: Մեծ Բրիտանիան, Հյուսիսային Ամերիկան և Արևելքն ամուր ընկույզներ էին, վորոնք դիմադրում էին ամեն մի ճնշման, իսկ Շտիբերը ցուցումներ չէր թողել այն մասին, թէ ինչպէս պետք է սողոսկել ցամաքային սահմաններ չունեցող հակառակորդի կողմը:

Հենց վոր Շարլոտտենբուրգյան կենտրոնում հասկացան Բրիտանիայում տեղի ունեցած ձախողման նշանակութիւնը, անմիջապէս ձեռնամուխ յեղան աշխատանքի. անհրաժեշտ էր փոխարինել Եռնասին ու ձերբակալած 21 դործակալներին: Որհուրք ատանալու համար կենտրոնը դիմում է Հոլանդիայում, Շվեդիայում ու Դանիայում գտնվող զանազան խոչոր դործակալներին: Գերմանական հետախուզութիւնը պահանջում է վճռական միջոցներ ձեռք առնել, բայց հետագա ամիսների անցքերը դործակալների մի նոր խումբ էլ ուղարկեցին բանտերն ու Թաուեր՝ գնդակահարութեան: 1914 թվականի աշնանն ականակիրներով, շոգենավերով, բուքսիրներով ու թիալարով նավակներով Անգլիա ժամանեցին մոտ քառորդ միլիոն բելգիական դադթականներ: Այդ մասսայական շարժումը քողարկում էր զգալի թվով լրտեսների սողոսկումը, քանի վոր բրիտանական իշխանութիւնները չէին կարող բոլոր յեկողներին իխտ հարցաքննութեան յենթարկել: Այդ խմբի դործակալներից մեկն այն աստիճան հանգուզն յեղավ, վոր նույնիսկ նկատողութիւնն արեց անգլիական ծովափնյա պահպանութեանն այն բանի համար, վոր իրեն չափազանց արագութեամբ էին բաց թողել և հիշեցրեց նրան, վոր պատերազմի ժամանակ կասկածանքով պետք է վերաբերվել դեպի բոլոր ոտարեկրացիները:

Բելգիացիների հետ Անգլիա սողոսկած գերմանական դործակալները չարդարացրին այն հույսերը, վոր դնում էին նրանց վրա հետախուզութեան ղեկավարները: Նրանց չհաջողեց վերականգնել Եռնասին և արգելափակված թղթակիցների աշխատանքը:

Իրանցից առաջինը ձախորդ հայրենասեր Կարլ Հանս Լոդին էր: Լոդին գերմանական նավատորմի պահեստի ավագ լեյտենանտ էր և լավ ծանոթ էր Անգլիային, քանի վոր անցյալում վորպէս ուղեցույց ծառայել էր «Համբուրգ—Ամերիկա—Լայոն» ֆիրմայում: Նա վորոչ ժամանակ ապրել էր Ամերիկայում և տիրապետելով լեզվին՝ ամերիկյան ակցենտով, իրեն ներկայացնում էր վորպէս ամերիկացի: Չերբակալվածների մեծ մասը վոչինչ չդիտեք անգլերեն խոսակցական լեզվի առանձնահատկութիւնների մասին և

հենց այդ պատճառով էլ առեփեց: Մինչդեռ Լոզին առեփեց էր հետքերը թաղցնելու փութաջանության ու ավելորդ ջանքերի համար: Այն բանից հետո, յերբ Գերմանիայում հայտնի դարձավ նրա ձախողումը, դադարնի սպասարկության պաշտոնյաները նրա մասին հիշում եյին միայն դատապարտելու համար և պնդում եյին, վոր նա մի շարք վրիպումներ և թույլ տվել և կասկած ու զգաստություն և առաջացրել չըլիկ դործակալների վերաբերմամբ, վորը հասցրեց մյուս դործակալների հայտարարմանն ու մահվան դատապարտվելուն:

1914 թվականի սեպտեմբերի առաջին կեսին Լոզին յերևաց Եգիպտոսը՝ ամերիկացի Չարլզ Ե. Ինգլիսսի անվամբ տրված անձնազրով: Իսկական Ինգլիսսը դրանից կարճ ժամանակ առաջ յեղել էր Բեռլինում և հոգում էր վիզա ստանալու համար: Բայց նա ստիպված և լինում վորոչ ժամանակ սղասել, վորովհետև արտաքին դործերի մինիստրությունն անհասկանալի կերպով «կորցրել էր» նրա փաստաթուղթը, վորով հետագայում Լոզին ձերբակալվեց Շոտլանդիայում: Սովորական ձևով ներդուրթյուն խնդրելուց հետո ամերիկյան դեսպանության պահանջով Ինգլիսսին ուրիշ անձնազիր տրվեց: Այդ ժամանակ Լոզին հեռագիր և ուղարկում Ստոկհոլմ, աննկատելի կերպով հյուրանոցից փոխադրվում և մի մասնավոր բնակարան և վարձով մի հեծանելով վերցնելով սկսում և ուսումնասիրել չըլակայքը: Նա չափից դուրս հարցեր և սալիս, կասկածելի հետաքրքրություն ցուցաբերելով դեպի Ռոզիտայի նավահանգիստը, դրսևորելով ծովային դործերին վերաբերող դիտելիքներ, վորոնք վոչ մի ընդհանուր բան չունեյին սովորական տուրիստի դիտելիքների հետ: Լոզին հենց էր առաջին հեռադրից հետո կասկածի տակ և առնվում: Նա հեռագիրը հասցեյադրել էր Ստոկհոլմ՝ Ադոլֆ Բուխարդի անունով և չմտածված կերպով վորձում էր իրեն ներկայացնել վորպես մի մարդ, վորը թշնամական զգացմունքներ և տածում դեպի Գերմանիան: Բայց գրաքննությունն այնքան էլ դրոբահամալատ չէր: Յեթե մեկը գրում և չափից ավելի կանխամտածորեն, ապա գրաքննությունն էլ էր հերթին հատուկ ուշադրություն և նվիրում նրան: Լոզիին հետևող դործակալներն սկսում են փոստի ոգնությամբ օտուզել նրա անչնորհ խորամանկությունը, նրա նամակները բաց են արվում՝ քիմիական մշակման յինթարկելու համար: Պարզ և, վոր չեզոք պետության վոչ մի հպատակ և վոչ մի ամերիկացի Լոզիի տեղը լինելով փող չէր ծախսի հեռագրի վրա, չեզոք պետության մի այլ հպատակի՝ գերմանացիների ան-

հաջողությունների առթիվ էր հրճվանքն արտահայտելու համար:

Լոզին չէր ոգտվում կողից, չէր գործադրում խորամանկություն կամ դադարնի հաղորդադրությունների վորևէ այլ ձև: Նա դալիս և Լոնդոն, իջնում մի փոքր հյուրանոցում և ուսումնասիրում հակադային պաշտպանության կառուցումները, այնուհետև վերադառնում և Եգիպտոսը, իսկ այնտեղից գնում Լիվերպուլ՝ ոժանդակ հաճանավերի վերասարքավորված ովկիանոսային շոգենավերը դիտելու համար: Նա Բուխարդին ուղարկում և 5 նամակ, վորից միայն մեկն և հասնում Եգիպտոս: Այդ նամակի մեջ Լոզին հաստատում էր Շոտլանդիայում ափ հանված և այն տեղից Ենայի վրա տեղի ունեցող դործողություններին մասնակցելու համար Փրանսիա ֆոխադրվող ուսական բանակի մասին տարածված անհեթեթ լուրերը: Լիվերպուլից նա ուղևորվում և Հոլիհեդ, Գուրլին-Վիլլարնեյմ, այնտեղից Կլիստոունին կից ծովային բազան: Բայց Բուխարդին ուղարկած նրա վերջին նամակը բավականաչափ հանցանշական էր, և նա Սկոտլանդ Յարդի պահանջով կայանքի տակ առնվեց իտլանդական փոստիկանության կղզից: Չորս ուր անց, հոկտեմբերի 30-ին Լոզին կանգնած էր Լոնդոնի զինվորական դատարանի առաջ:

Բացի կեղծ անձնազրից նրա իրերի մեջ գտել էյին մի հուշատետր՝ ծովային հարցերի վերաբերյալ դիտողություններով և Բեռլինում, Համբուրգում ու Ստոկհոլմում բնակվող մի շարք անձերի հասցեներով: Բուխարդին ուղարկված 4 նամակների պատճենները նույնպես պահված էյին այդ ծոցատետրի մեջ: Նա չէր պաշտպանվում և իրեն պահում էր վորպես մի մարդ, վորը կատարել է իր պարտքը, առանց ամաչելու դրանից և առանց վախենալու սպամվող հետևանքներից:

Լոզիի մահից հետո Մեծ Բրիտանիա յեն ուղարկվում մեծ թվով դործակալներ, գլխավորապես Անտվերպյենի և Վեդելի հետախուզական դպրոցներից: 1914 թվականից շատ առաջ դերմանական հետախուզական սպասարկությունը հավաքել էր Փրանսիայի ու Ռուսաստանի պոտենցիալ ռազմական ուժերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները: Ուստի այդ յերկրներում դործող հետախուզությունը կարող էր սահմանափակվել զորքի շարժման, դնդերի և դիվիզիաների թվական կազմի ու բարոյական վիճակի, ռազմաթերթի արտադրության ու բեռնման վերաբերյալ սովորական դիտումներ կատարելով: Բայց Բրիտանիայում նախապատրաստական աշխատանք էր տարվում կամավորա-

կան մեծ բանակ ստեղծելու, բանվորների հուզումները շարունակվում էին, Իսլանդիան հուզմունքի մեջ էր և մարտում անպարտելի բրիտանական նավատորմը պրկում էր իր բրկազան, վորը պետք է ողապարան դառնար Գերմանիայի վզին, ցամաքի հաղթանակներից անկախ: Գործակալ-ուղղորդները կարողացան կատարել Ֆրանսիայում և Ռուսաստանում նրանց առջև դրված խնդիրները: Մեծ թվով այդպիսի գործակալներ մնացել էին այդ յերկիրներում, ըստվորում նրանցից շատերը մնացին չհայտարարված և ժամանակ առ ժամանակ լուրջ ծառայություններ ելին մատուցում իրենց կենտրոններին: Իսկ Անգլիան վոչ միայն հրապարակից վերացրեց մինչև պատերազմի հայտարարվելն իր յերկրում տնկտուված և վարսավիր Եռեստի միջոցով Գերմանիայի հետ կապ պահպանող բոլոր գործակալներին, այլ և իր ձեռքումն էր պահում այն դադարների մեծ մասը, վորոնք հանդիստ չէին տալիս Շտեյնհուսերին ու նրա կողմերին:

15 որվա ընթացքում (1915 թվականի մայիս-հունիս) հայտարարվեցին ու ձեռքարկվեցին յոթը գործակալ: Ըստվորում այդ գործակալներից վոչ մեկը չափազանց վտանգավոր բնագավառում կատարվող աշխատանքի հասարակ սիրահար չէր, նրանցից վոչ մեկը զուրկ չէր նախնական պատրաստությունից: Այդ յոթը գործակալներից յուրաքանչյուրը նախորդ ստացել էր վորոշ պատրաստություն, թեև նրանց ուսուցիչները յեղել էին այնպիսի մարզիկ, վորոնք ունեյին զուտ տեսական գիտելիքներ, քանի վոր Գերմանիան նրանց որով վոչ մի պատերազմ չէր վարել: Ուսուցիչները կարող էին միայն պատմել խաղաղ ժամանակ, հակահետախուզության բացակայության պայմաններում տեղի ունեցող լրտեսության տարբերությունն այն հետախուզություններից, վորը կատարվում է մի դարաշրջանում, յերբ մարզիկ մահացու կոիվ են մղում միմյանց դեմ, իրենց տրամադրություն տակ ունեն յերիտասարդ, բայց զգոն հակահետախուզություն, վորն որեցոր կատարելագործվում է: Այդ տարբերությունը չափազանց շոշափելի յեր: Այդ յերկու շարքի վա ընթացքում ձեռք բերել քիչ թե շատ արժեքավոր տեղեկություններ: Նրանցից վոչ մեկն Անգլիա չէր յեկել համբավավոր հանձնարարությամբ, զադտնի սպասարկության ասպարեզում ունեցած մեծ փորձով կամ բոլոր տեսակի խոչընդոտները հաղթահարելու բնածին ընդունակություններ:

Խեղացի ու բանխմաց հետախուզները հաղվադեպ են տապալվում, իսկ նոանցից լավագույնները նույնիսկ կասկած էլ չեն հարուցում: Դրանով է բնորոշվում լրտեսություն արվեստը, վորը հիմնականում հանդում է յերեք մոմենտի՝ 1) իմանալ ամենաարժեքավոր փաստաթղթերի տեղը, 2) մնալով աննկատելի՝ ձեռք բերել դրանք և արագորեն պետին հանձնել այն ամենը, ինչ հաջողվել է ստանալ և 3) այնպես անել, վոր հակառակորդը չիմանա, թե իր պլանները հայտնի յեն դարձել:

Յեթե այդ պայմաններից յերկրորդը կամ յերրորդը խախտվեց, ապա ամեն ինչ խորտակվում է—գործակալը կատապալի ինչպես իր մոտ՝ հայրենիքում, այնպես էլ արտասահմանում:

Արժեքավոր փաստաթղթերի տեղը վորոշելն ավելի քիչ չափով է դժվար, քան այդ թվում է, մանավանդ պատերազմի ժամանակ, յերբ ամենասովորական բաները կարող են նշանակություն ունենալ հակառակորդի շտաբի համար: Այլելին՝ շատ գործակալներ ստույգ հրահանգ են ստանում, թե ի՞նչ տեղեկություններ պետք է ձեռք բերել, վորոտեղից կարելի յե ստանալ այդ տեղեկությունները և այլն: Այդ ամենից հետո, տեղեկությունները ձեռք բերելն այնքան էլ մեծ սխրագործություն չէ: Ամեն մի գաղտնի գործակալ կարող է կատարել այդ: Տեղեկություններ հաղորդելը շատ ավելի դժվար է ու վտանգավոր, քան դրանք ձեռք բերելը: Հետախուզ-սիրողը, հուզված գաղտնի տեղեկություններ ստանալու գործում ունեցած խաբուսիկ հաջողությունից, յերևակայում է, թե իրեն տրված առաջադրանքը համարյա լիովին կատարված է: Բայց զգուշ պրոֆեսիոնալը գիտե, վոր ամենամեծ վտանգը դեռ առջևումն է: Ժամանակակից զբաղմունքից ու հակահետախուզության պայմաններում, չնայած մի շարք հնարամիտ դյուտերին ու քիմիական նորմուծություններին, գործակալը չափազանց խոցելի յե դառնում այն պահին, յերբ նա փորձում է հաղորդել իր դիտողությունները կամ հայտնությունները:

Պատերազմի ժամանակ տեղեկություններ հաղորդելու պրոբլեմի վրա այնքան ուշադրություն էր գործադրվում, վոր յերրորդ պայմանի մասին, այն է՝ հակառակորդից թաղցնել, վոր նրա գաղտնիքները ծանոթ են, մտաբերվեց շատ ավելի ուշ: Նայած հանդամանքներին՝ հետախուզները մերթ հիշում էին այդ, մերթ՝ արհամարհում: Պետք է հիշել, վոր վոչ մի բան չարհա-

ճարհող հետախուզող կղերականցի մյուսներին և նրանցից ափելի յերկար կապրի:

Հաշտութունը կնքվելուց հետո մի Փրանսական զաղանի զոր-  
ձակալ հայտարարեց, վոր ինքը բազմիցս յեղել է մայր Փոն-  
Քյուլովի դերմանական հետախուզական կենտրոնում, վորը  
գտնվում էր Շվեյցարիայի մայրաքաղաքի արվարձանում: Այդ  
մի իսկական ամբողջ եր, մի կենտրոն, վորը ղեկավարում էր  
Փրանսական կենտրոնի և աջ թևի բանակների թիկունքում զոր-  
ձող հետախուզյունների մեծ մասին: Նախկին հակառակորդներին իր  
խոսքերի ճշտության մեջ համոզելու համար զործակալը համար-  
ձակորեն նկարագրել է հետախուզության գլխավոր շենքը—դորդի  
ու հատակի տախտակների տակ գտնակ՝ զանգերով, վորոնք  
տաղնապ էյին բարձրացնում, յերբ նրանց վրա վտոք էր դրվում.  
բազկաթոռներ և նույնիսկ բանալիներ՝ զխտավորյալ կերպով  
թողնված վակերի մեջ ու միացված բարձր լարվածութունն ու-  
նեցող ելեկտրալարերի հետ: Անկախ այն բանից, թե նա առաջին  
անգամ ինչպես է թափանցել այդ զաղանի ապաստարանը (ար-  
դյոք կաշառքի, թե՞ սեփական համարձակության շնորհիվ), նրա  
զգուշութունն ու իրազեկութունը նրան թույլ էյին տալիս կրկի-  
նել այդ այցելութունները: Գործակալը կարողացավ հասնել  
դրան միայն շնորհիվ այն բանի, վոր նրա հետախուզական ամ-  
բողջ գործունեյությունը հեռքեր չէր թողնում:

Հայտնի չէ նաև, վոր մի դերմանական զործակալ վորպես  
թարգմանիչ յերկար տարիների ընթացքում ծառայել է Փրանսա-  
կան զինվորական դատաբանում և մասնակցել է լրատվության  
մեջ մեղադրվող անձերի դատավարութուններին: Այդ ժարդը  
սառնարյուն կերպով և դերասանական ինքնատիրապետմամբ ներ-  
կա յեր գտնվում իր կոլեգաների դատապարտմանը, բայց յեր-  
բեք վորևէ զգացմունք չէր ցուցաբերում նրանց նկատմամբ:  
Նրա խնդիրը, վորպես զործակալի, այն էր, վոր իր պետին  
պետք է տեղեկութուններ հաղորդեր, թե Փրանսացիներն ինչպես  
են հայտարարում ու դատում հետախուզյուններին, մի բան, վորը  
հակայական նշանակութուն ունեն որ զործակալներ պատրաստող  
և ուղարկող պետերի համար:

Այդ թարգմանչի նման հետախուզյուններն իշխանության ձգտող  
բացառիկ ու հատկապես վտանգավոր տիպեր են: Բավարական  
թագաժառանգի շտաբում գտնվում էր բոլորի կողմից չափազանց  
բարձր գնահատված մի յերիտասարդ մայր. նրա անդուլ ջանա-  
սիրութունն ընդհանուր զարմանք էր առաջացնում: Իշխան

Ռուսերեսախի՝ բոլորի կողմից հարգված այդ ողնական իրապես  
անդլիար՝ յեր: Նա կապ ունեն բրիտանական հետախուզական  
բաժնի հետ, վորը նրան Գերմանիա յեր ուղարկել գեռ նախքան  
պատերազմը, ինչպես Տրեդին, Բրենդոնին և բազմաթիվ այլ  
արևածախնդիրներ: Պատահական հանդամանքները նրան հասցրին  
բարձր պաշտոնի, և նա իր ճարպկության ու խելքի շնորհիվ այդ  
պաշտոնում մնաց մինչև գինաչաղար կնքվելը: Գրանից հետո նա  
վերջապես փոխեց իր համադրեստը և մասնակցեց հաշտության  
բանակցութուններին: Նրա արժեքն իբրև գործակալի այն ժա-  
մանակամիջոցում, յերբ նա վորպես մայր ծառայում էր բա-  
վարական շտաբում, կարող է գնահատվել միայն յենթադրա-  
բար: Հնարավոր է, վոր նրա ամբողջ աշխատանքը գլխավորա-  
պես կայանում էր մշտական գաղտնի կապ կազմակերպելու մեջ,  
վորը գնալով ափելի ու ափելի դժվարին խնդիր էր դառնում,  
վորքան ափելի յեր աճում իշխանի վստահութունը գեպի նա: Նա-  
խանձոտ ընկերներն ու ստորադրյալները կարող էյին նրան հե-  
տևել ափելի մանրամասն, քան գեղեկտիվները\*): Այնուամենայ-  
նիվ յենթադրվում է, վոր նա կատարել էր արտակարգ ինչ-վոր  
բան, վորովհետև Լոնդոնի զինվորական մինիստրությունը հրա-  
ժարվել էր հաղորդել նրա գործողութունների մասին:

Այնպիսի նշանակումները կամ առաջընթացները, վորի հետ  
մենք գործ ունենք տվյալ կամ թարգմանչի հետ պատահած գեպ-  
քում, բնականաբար հազվագեպ են: Այդ չարիքը խափանելու հա-  
մար ներկայումս կան հակահետախուզության սպաներ: Բայց  
մշտապես յերկրում բնակվող և հաստատակամությամբ ու խել-  
քով ոժտված գործակալից իրեն անվտանգ դարձնելն աներևակա-  
յելի բան է: Այդպիսի գաղտնի գործակալ էր կարլ Զիվերտը:  
Նա իր ամբողջ կյանքի ընթացքում ապրել է Ռուսաստանում և  
40 տարուց ափելի ներքին գործերի մինիստրի հրամանով Կիևում  
գրավում էր փոստային գաղտնի գրաքննչի պաշտոնը: Այդ հիման  
վրա նրան թույլատրված էր բաց անել կայսերական շտաբի պետ  
գեներալ Ալեքսեյովին հասցեագրված փոստը, ուսումնասիրել  
բանակի հրամանատար Բրուսիլովի կնոջ կողմից Կիևի շրջանի  
հրամանատար գեներալ Տրոցկու կնոջն ուղարկվող նամակները,  
ըստփորում նա նույնիսկ կարող էր զինվորական մինիստրի և  
Գալիցիայում սկուպացիայի յենթարկված ավստրիական տերիտո-  
րիայի ուսսական նահանգապետ կոմս Գեորգի Բոբրինսկու միջև

\*) Հետախուզ վստահանության գործակալ Անդլիայում և ԱՌՆ-ում:

տեղի ունեցող պաշտոնական դրազրությունը: Զիվերտը բռնովեց միայն պատահաբար:

Մեծ փորձը Զիվերտին թանգարժեք դորձակալ եր դարձնում հետախուզութայն յուրաքանչյուր պետի համար: Սակայն պաշտոնական պոստեր չունեցող դորձակալները ռազմական դորձերի մեջ թափանցելու արագութայն տեսակետից գերազանցում էին նրան: Այժմ հայտնի յե, վոր մի դորձակալ աշխատել է յերկաթուղում և համաշխարհային պատերազմի առաջին յերկու ամիսների ընթացքում Արևելյան Պրուսիայում գտնվող գերմանական շտաբին է հաղորդել ռուսական դաշտային շիֆրը: Ունենալով այդ շիֆրը, գերմանական հրամանատարությունը կարողանում եր անմիջապես թարգմանել այն բոլոր ռազիտհաղորդումները, վոր փոխանակում էին ռուսները՝ Արևելյան Պրուսիա ներխուժելու ժամանակ: Չափազանց հափանական է, վոր այդ շիֆրը ձեռք բերելու համար դորձակալն իր աշխատանքի դիմաց ստացել է միայն մի քանի հարյուր ռուբլի, բայց Ֆոն-Հինդենբուրգի փառքը գերմանական ժողովրդի նեցուկը դարձավ և շատ տարիների ընթացքում բարձր եր պահում նրա վրդին: Իսկ դրա փոխարեն ռուսները ծանր պարտություն կրեցին՝ վեց կորպուս վոչնչացավեց, տասնյակ հազարավոր մարդիկ գերի ընկան կամ վոչնչացան լճերի մեջ:

Մեծ հետախուզողների ցանկը լրիվ չի լինի, յեթե մենք չհիշատակենք գնդապետ Լոուրենսի անունը: Ճանաչված հանձար, մեծ գիտելիքների տեր Լոուրենսը Փոքր Ասիայում մղվող կամպայանիայի ժամանակ ցույց տվեց, վոր ինքը, վորպես հետախուզող, ցանկացած ըրպեյին կարող է թափանցել թուրք-գերմանական ռազմաճակատը: Նա այնքան վարպետորեն կարողանում եր փոխել հաղուստը, վոր մի անգամ Դամասկոսում թուրք դատալիքի տեղ էյին ընդունել նրան և վորպես «կարդապահահական տույժ» ծեծել էյին գիտակցությունը կորցնելու աստիճան: Նա միշտ ստույգ տեղեկություններ ուներ հակառակորդի ուժերի մասին, նրա հետախուզութայն արդյունքներն անդնահատելի նշանակություն ունեյին գեներալ Ալենբրիի համար՝ Պաղեստինում մղվող կամպայանիայի ժամանակաշրջանում: Լոուրենսն այնպես աշխույժ ու խելացի յե նկարագրում հետախուզութայն մեջ և զինվորական դորձի այլ բնազավաններում տարած իր աշխատանքները, վոր ավելի լավ կլինի, յեթե մենք ընթերցողին խորհուրդ տանք կարգալ սեփական ձեռքով զրված նրա հռչակավոր գիրքը:

Ինչ վերաբերում է սիրող-հետախուզողներին, ապա համաշ-

խարհային պատերազմի չեմպիոն պետք է համարել մի բելգիացու, վորն ոկուպացիայի մոմենտին ծառայում եր Լիեթի պողպատաձուլական դորձարաններում: Այդ հայրենասերի խիզախության ու աշխատանքի շնորհիվ դաշնակիցները մինչև ոգոստոսի 22-ը տեղեկություններ էյին ստանում Լիեթով անցնող գերմանական բոլոր զինվորական զնացքների մասին. ոգոստոսի 22-ից հետո նա այլևս մարդիկ չուներ, վորոնց միջոցով կարողանար տեղեկություններ հաղորդել, վոր առաջ նա ուղարկում եր Անգլիա ուղևորվող փախստականների հետ: Նա որբերով թաղնվում եր դրենաժային խողովակի մեջ, յերկաթուղաթմբի տակ, հետևելով զնացքներին և հաշվելով վագոնները, յերբ նրանք անցնում էյին իր գլխավերևով: Նա նույնիսկ ի վիճակի յեր նշանակելու հրետանին և ոկուպացիոն զորքերի մյուս հատուկ զորամասերը: Յեթե նա դադարի սպասարկութայն հատուկ պատրաստություն ել ստացած լիներ, հաղիվ թե կարողանար վարվել ավելի հմուտ և ավելի հասկանալով դորձը. ըստվորում իր ստացած բոլոր տեղեկությունները նա ժամանակին հասցնում եր անգլիացիներին:

Համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմական հետախուզութայն զգալի մասը քաղաքացիական բնակչութայն վրա դրած լինելու հանգամանքը նրանով է բացատրվում, վոր զինվորականները չափից դուրս զուլջ էյին կամ արհամարհում էյին հակառակորդի թիկունքում աշխատելը: Այն քաղաքացիական բնակչությունը, վորն ապրում եր զինված ընդհարումներ տեղի ունեցող դոտում (Արմանտյերի կովի ժամանակ, որինակ, մի քանի ընտանիքներ ապրում էյին խրամատներից հաղիվ 750 մետր հեռավորութայն վրա), հակառակ իր կամքի ոգտադործվում է զինվորական զադանի սպասարկութայն համար: Հետխուզությունը նույնպեսի դժվարին սրոֆեսիա յե, ինչպես բեմի վրա խաղալը կամ պիես դրելը—մի ասպարեղ, վորտեղ համարյա յուրաքանչյուրն զգում է, վոր ինքը կոչված է մեծ մարդ դառնալու: Միևնույն ժամանակ հակահետախուզությունը, այսինքն հակառակորդի հետախուզողների մերկացումը, միլիոնավոր մարդկանց կիրքն է հանդիսանում: Սակայն կան մարդիկ, վորոնք հանուն վաստակի վաճառում են տեղեկությունները: Պատերազմ հայտատարվելուց անմիջապես հետո այդ մարդիկ (ամենից հաճախ՝ չեզոք յերկիրներ զաղաքացիները) և ամեն տեսակի ռենեզատները, նախկին հանցագործներն ու խաբերաններն շտապում են նրա մասով ամենից բարձր գին կտա: Յեթե չլինեյին զինվորական դա-

տարաններն ու զնդակահարությունները, այլա այդ բորենիների հակայական վոհմակները կլխտային պատերազմական զործողությունների ամբողջ թատերաբեմում: Յեւ տարրինակ է, վոր բռնվելու դեպքում նրանց սպասող ճակատադէրը հետ չի պահում այդ վաճառված դիտողներին: Այն բանից հետո, յերբ այդ շաշկայի անդամներից վորեւ մեկը տապալվում է, դատվում ու զնդակահարվում, մյուսներն անհետանում են կամ անցնում այլ բանակ: Այդ պատճառով էլ հենց պատերազմի ժամանակ կուվող յերկու կողմն էլ հայտարարում եր հետախույզների զնդակահարման մասին:

Հետախույզի կամ հակահետախույզի աշխատանքը, նրա նշանակութունն ու ռիսկը ինչ-վոր հատուկ կատա յեն ստեղծում պրոֆեսիոնալ զաղտնի զործակալներից: Նրանք միշտ չեն, վոր խորհրդավոր են, ինչպես վեպերի մեջ: Նրանք հարկադրված են կատարելու շատ ավելի տաղտկալի, աուրյա աշխատանք, քան թվում է նրանց, ովքեր հակահետախույզի զործունեյությունը դիտում են ումանտիկական տեսակետից: Նրանք կարող են լինել հայրենասերներ, իրենց անձնական կյանքում ունենալ արդի մտրդու համբավ. նրանց կյանքը կլինի համեմատաբար ձանձրալի, հանգիստ ու պրոզայիկ: Նրանց նույնիսկ կարող է խորթ լինել այսպես կոչված արկածախնդրության վողին, և լավաղույնը նրանց համար, — այդ իրենց պրոֆեսիան դրամատիկացիայի յենթարկելու հակում չունենալն է: Բայց նրանք՝ արկածախնդիրները և նրանց պրոֆեսիան պահանջում է այնպիսի հատկությունների հետաքրքիր գուգակցում, վորոնք նման չեն այն հատկություններին, վոր պետք է ունենա զինվորը կամ հետազոտողը, վարձու մարտիկը, սպեկուլանտը, մաքսանենդը կամ վորեւ այլ որինագանց: Յուրաքանչյուր պրոֆեսիոնալ հետախույզ պետք է լինի շնորհալի լեզվագետ, ընդունակ լինի ազատ խոսելու իրեն համար անհրաժեշտ լեզուներով, ճիշտ ակցենտով կամ առանց վորեւ ակցենտի, նայած իր ստանձնած դերի բնույթին:

Լեզուներ իմանալուց և ռադմական հարցերի տեխնիկական ծանոթությունից զատ, վորը կարող է տալ դպրոցը, զաղտնի զործակալը պետք է ունենա այնպիսի բնածին հատկություններ, ինչպես խիզախությունը, տոկունությունը, սառնարյունությունը, յերևակայությունը և այլն: Գոյություն ունեն վարքի մի քանի հատուկ կանոններ, վորոնք պետք է հայտնի լինեն յուրաքանչյուր պրոֆեսիոնալ հետախույզի, և նա պետք է հավատա այդ կանոնների արդարացի ու անհրաժեշտ լինելուն:

Մի քանի հետախույզներ առաջին իսկ րոպեյից վախեցել և արագորեն ամեն ինչ խոստովանել են: Նրանցից շատերը վախկոտ կերպով պողել են, թե իրենք «միայն ուսումնասիրում եյին հակառակորդի բարոյական վիճակի անկումը»: Հայրենասեր-հետախույզներն իրենց թույլ են տվել յերևան բերել իրենց վառվորուն հայրենասիրությունը, հաղորդագրություն լսելով իրենց բանակի հալթանակի մասին, կամ վոր էլ ավելի վատ է, փորձել են ուրախություն արտահայտել իրենց զորքերի պարտության առթիվ, վորն իրականում տխրեցրել է նրանց ու վիրավորել նրանց հպարտությունը: Սակայն նրանք հավանորեն դիտավորյալ կերպով արհամարհել են փաստերը և ինֆորմացիա տալով լուրերի մասին, չեն ակնարկել, ինչպես այդ պետք է անի հետախույզը, վոր դրանք միայն լուրեր են: Գերմանական հետախույզները մշտապես զբաղվել են պրոպագանդայով ու դիվերսիայով: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ռադմական զործողություններ են. դրանով պետք է զբաղվեն հատուկ զործակալներ, վորոնց տապալումը վտանգի չի յենթարկի մյուս հետախույզներին և չի խախտի հետախույզության սխեմը, վորը ձախողվելուց հետո նորից կանոնավորվել կարող է մեծ դժվարությամբ միայն:

Շտիբերի ժամանակվանից ի վեր գոյություն ունեւ դոկտրինա այն անձերի մատուցած անհատական ծառայությանն ու հասարակական արժանապատվության վերաբերյալ, վորոնք զբաղվում էյին հետախույզությամբ, կառավարական դավաղրություններով ու թեև զաղտնի, բայց և այնպես պաշտոնական բնույթի նման գործերով: Այդպես էյին համարում, վոր բարձր դասին պատկանող անձեր նույնպես պետք է զբաղվեն հետախույզությամբ, և հետախույզության գերմանական ղեկավարությունն ընդդժում է, վոր լրտեսությունն ավելի «պատվավոր զբաղմունք է», քան բանակում իր ամենորյա պարտքը կանոնավոր կերպով կատարելը: Իրականում, չնայած զաղտնի սպասարկության պրիմատի վերաբերյալ շտիբերյան դրույթին և ջենտլմենների ու լորդերի մասնակցությանն այդ սպասարկության մեջ, ինչպես նաև չափազանց թանգ նստող հետախույզական դպրոցների գոյությանը, — զործակալների մեծ մասը շատ քիչ բան կամ առհասարակ վոչինչ չպիտեր հետախույզության մասին: Գործակալներն ընտրված ու պատրաստված էյին իրենց պետերին ու վարձողներին. վորոշակի ծառայություն մատուցելու համար, ըստվորում նրանց վոչ մի ցուցում չեր տրվում այն մասին, թե ինչպես փրկեն իրենց կյանքը և ինչպես բարձրացնեն իրենց վորակը:

Ընդունված է այն կարծիքը, թե վորոչ ժամանակից հետո վարձու գործակալը միշտ դառնում է ավելորդ բեռ: Յեթի հաջվի առնենք, վոր այդ միտքը ուժեղ կերպով շեշտվում էր, իսկ դործակալների պատրաստման խնդիրն, այնուամենայնիվ, արհամարհվում էր, ապա վոր մի հիմք չի լինի զարմանալու, վոր դաշնակիցները հայտաբերում էին մեծ թվով վարձկաններ ու պրոֆեսիոնալներ, վորոնք նույնիսկ սիրողներ էլ չէին կարող համարվել իրենց գործին ծանոթ լինելու տեսակետից:

Լոնդոնի հայտնի ընտանիքներից մեկում տեղ ստացած դաստիարակչուհի Շվան կասկածվում է լրտեսության մեջ և հարցաքննության է յենթարկվում: Նա հենց միանգամից ընկձվում է և խոստովանում իր մտադրությունները, բայց հայտարարում է, վոր մինչ այդ մոմենտն ինքն առիթ չի ունեցել վորևէ արժեքավոր ինֆորմացիա ստանալու: Մինչդեռ իրականում, դեռ նախքան կասկած առաջացնելը, նա հիանալի առիթներ է ունեցել այդպիսի ինֆորմացիա ստանալու համար, բայց պարզապես չի իմացել այն խաղը, վորը խաղում էր: Այդ աղջիկը միամիտ կերպով խոստովանում է նաև այդ: Նա պատմում է, վոր իրեն Անդլիա յե ուղարկել իր սիրահարը, և վոր ինքն ուղեցել է լրտեսուհի դառնալ նրան հաճույք պատճառելու համար: Ի լրացումն նրա քնքուշ յերախտադիտության, նա պետք է ստանար ամսական 200 մարկ:

Գերմանական հետախույզները ժամանակ էյին կորցնում նարկոմանների, այդ խղճուկ ու զզվելի արարածների վրա, վորոնք ծարավ էյին նարկոտիկների և պատրաստ դրա համար խոստանալու ամեն բան, ինչ կամենաք: Գերմանական քիմիկոսները կարող էյին նրանց համար այդ ապրանքից ուղարկել ինչքան կուզեք, բայց վորում նարկոտիկ միջոցներ պարունակող փոքրիկ ծրարներն ամրացվում էյին Շվեյցարիայից Ֆրանսիա անցնող ապրանքատար գնացքների վազոնների տակից: Բայց այդ նարկոտիկ միջոցները Փարիզի տականքների մեջ տարածող գործակալները յերեխայաբար էյին վարվում, յենթադրելով, թե նարկոմանը կարող է իր տրամադրության տակ ունենալ ռազմական ստույգ տեղեկություններ, կամ թե կարող է վորևէ բան հասկանալ այդ տեղեկություններից, յեթե պատահաբար նրանց հետ առնչություն ունենալու լինի: Հանցագործներին կարելի յե ստիպել, իհարկե, նարկոտիկների համար դիմել սպանության, գողության, բայց իրենց ձեռքի տակ կարևոր ռազմական դադոնիքներ անցող հուսալի մարդիկ պատերազմի շրջանում յերբեք անտարբեր չէյին

վերաբերվում դեպի իրենց պարտականությունները: Այդ պատճառով էլ նրանք լավ պաշտպանված էյին հանցագործ տարրերից:

Հետախույզի պատգամները պետք է պարունակեն մեծ թվով տարրինակ պահանջներ և այդ թվում՝ իր բնորոշ ազգային գծերը չզբսևորելու պահանջը: Ֆրանսական գործակալներին նախազգուշացնում էյին, վոր նրանք խուսափեն չափից դուրս քաղաքավարությունից: Նրանցից մեկը Մյունխենում իրեն հանձնարարել էր վորպես Բեռլինի ինչ-վոր մի կոնցերնի հանձնակատար, և նրան վստիկանության ձեռքը մատնեց ճաշարանի սպասուհին: Վերջինս վստիկանությանը հաղորդել էր, թե նա իրեն շնորհակալություն է հայտնում ամեն բանի համար, ինչ մատուցում է նրան. հաճախակի «շնորհակալություն»-ները համոզում են սպասուհուն, վոր նա այն չէ, ինչի տեղ իրեն դնում է: Համաշխարհային պատերազմի սկզբում, յերբ Գերմանիայի ռազմական գրությունը բարենպաստ էր, մի քանի գերմանական գործակալներ գվարությամբ էյին թաղցնում իրենց ցնծությունը: Կլտի կամ կոպիտ, ինքնազոհ, կոտորատվող, կամ թե զրուցասեր գործակալը կկախվի շատ ավելի շուտ, քան դաստիարակված, շրջահայաց ու գուսպ հետախույզը:

Պետք է վոր չափազանց հաճելի լինի պատմել բեմական տաղանդ ունեցող, գրիմ արած ու կեղծ բեղեր դրած հետախույզների մասին: Բայց բանն այն է, վոր ժամանակակից հետախույզները սակավ դեպքում են դիմակավորվում, յեթե նրանք կարողանում են խուսափել դրանից: Կեղծ անուն անձնագրի մեջ, կամ ամբերիկյան կոստյում գերմանական նավաստու վրա—ահա ժամանակակից քողարկումը: Ամենագուհիկ շարժուձևի պրոֆեսիոնալ տեղեկատուները կարող են իրենց ցույց տալ վորպես ջենտլմեններ, ստորին ծագում ունեցող մարդը՝ վորպես ծպտյալ կերպով ճանապարհորդող դուքս—հենց այդ էլ նշանակում է դիմակավորում: Դիմակավորվելու չափազանց դժվար, համարձակ ու բնավ վոր սակավադեպ յեղանակը—այդ իրեն վորպես հակառակորդի բանակի կամ նավատորմիղի սպա հանձնարարելն է: Գաղտնի հետախույզությունների բոլոր պետերը դիտեն, վոր այն խուճապը, վորը համակում է բոլոր յերկիրների քաղաքացիական բնակչությանը պատերազմի սկզբում, զանազան լուրերը, լրտեսային մանիան, —այդ բոլորը ծառայում է հակառակորդի գործակալների սկզբնական քայլերը թաղցնելուն: Ընդհանուր գայրույթը, ինչպես և ամեն տեսակ պատահական կասկածների ու կեղծ տաղնապների առթիվ հակահետախույզության որդաններին դիմելն



խօսկան հետախուզին ոգտադործում և վորպես քողարկման լավագույն յեղանակ: Նա ամբողջի հետ կվազի և կպահանջի ձերբակալել յուրաքանչյուր բացահայտ ոտարերկրացու, կամ թե ընդհակառակը, կհրաժարվի մոլեզին հայրենասերներից և հանդիստ կզբավի իր դիրքը (վորը հետագայում կոգտադործի, իհարկե, հետախուզութան համար), իր խաղաղ ու նորմալ ապրելակերպով մոլորութան մեջ կդցի ամենազգաստ մարդկանց: Ամբողջի մի գաղտնի դործակալ, վորին համալսարհային պատերազմի ժամանակաշրջանում հանձնարարել էին հետևել Սոնորայի նահանգապետ հայտնի գերմանասեր Պրուտարի Ելիաս Կալլեսին, քողարկվում էր մեքսիկացու անվան տակ: Նա իր ամբողջ մաշկը պատում էր յոզով, իսկ յերբ այդ միջոցը չափից դուրս ցավազին դարձավ, նա սկսեց յոզի հետ խառնել ցեխ:

Այդ գործակալի ճարտարութունը յերևում է այն բանից, վոր նրան նույնիսկ թուլատրվել էր կարևոր վորոշ գեպղերում ուղտվել Սոնորայի դիկտատորի դնացրից:

Փորձված գործակալը գիտե, թե կասկածի տեղիք չտալու համար ինչպես պետք է գործել. ամենից լավ նա իր դեմքը կթաղցնի կոպտութան կամ թե տխմարութան դիմակի տակ. մարդիկը դառնում է անկյալ, զգաստ սպան կամ թե կրթված ջենտլմենը միշտ կարող է թաղնվել կեղտոտ, վատ շարժումների տեր և անառակ կյանք վարող մարդու դիմակի տակ:

Այս բոլորը դիտավորապես վերարբերում է հետպատերազմյան իրադրութանը և յերկրադնդի այն մասին, վորտեղ հաղթական դաշնակիցները հանկարծ մեծ անլստահութամբ տողորկեցին միմյանց նկատմամբ, ավելի մեծ անլստահութամբ, քան դեպի իրենց հենց նոր պարտված հակառակորդը:

Լեզուներ իմանալը, բնածին տաղանդը, լավ պատրաստութունը, անձնական առավելութունները, այդ բոլորը չեն ողնի գործակալին, յեթե նա չընտրի այնպիսի հարմար դիմակավորում ու դեր, վորը նա կարող է խաղալ անսխալ ու բնական:

Մյուսները և Ալտուսները, Ռուսաստանում աշխատող ավստրիական գործակալներից այդ ամենահնարամիտները, ընդունելութուն էյին դուր լավ հասարակութան մեջ: Դրանք ոգտակար գործակալներ էյին: Լուրեր էյին պտտվում, թե ռուսական զինվորական միտնորի կինը պատրաստվում էր այցելել Ալտուսներին զբանջելի նոր կալվածք, այն մարդու, վորը հարադատ Վիեննա վերադարձավ վոչ միայն ռազմական տեղեկութուններով, այլև բանակի մատակարարման սպեկուլացիայից ստացած

վաստակով: Բայց պատերազմն սկսվեց, և սահմանները փակվեցին: Մյուսները մոտ յերկու տարի աշխատում էր ռուսական բանակի թիկունքում և այնքան անխույժ էր, վոր մատնեց իրեն: Ցարական գաղտնի վոստիկանութան գործակալը ձերբակալեց նրան: Բայց Մյուսները արտասովոր անձնավորութուն էր և լավ գիտեր, թե ում հետ դործ ունի: Նա սկսեց պատմել Ռուսաստանի վերաբերմամբ ավստրո-հունգարական գաղտնի հետախուզութան ունեցած մտազրութունների մասին: Նա հաղորդեց ցնցող փաստեր և նույնիսկ մատնեց ավստրիական հետախուզութան ծառայութան մեջ գտնվող յերեք ռուս գործակալներին: Իսկ այնուհետև, յերբ արդեն պատմել էր այն ամենն, ինչ վոր կարևոր էր համարում և յերբ մինչև դատի որն արդեն կարճ ժամանակ էր մնացել, Մյուսները փախավ: Յենթադրվում էր, վոր նրան վորևէ մեկն ողնել է այդ գործում:

Սերբիացի Կրիվոն առաջ քաշվեց լեզվադիտական իր ձիրքի շնորհիվ: Չքավոր մարդ լինելով՝ նա պատրաստ էր դրամ ստանալու ռուսներից, նաև նրանցից, ովքեր շահագրգռված ու հետաքրքրվում էյին Ռուսաստանի ռազմական գործերով: Կրիվոնը բարձր պաշտոն չէր զբաղում, բայց չէր առարկի, յեթե կարողանար այդպիսի պաշտոն գրավել: Վորոշ ժամանակ նա վորպես վորպես այդպիսին իր վրա զբաղեց ցարական մասնավոր գրասենյակի պետ իշխան Ռուլովի ռազմութունը: Ռուլովին թարգմանիչ էր հարկավոր, և Կրիվոնը կարողացավ այնպիսի տպավորութուն գործել, վոր այդ գործի համար ավելի պիտանի յերևաց, քան հայրենասիրաբար տրամադրված հարյուրավոր ռուսներ: Ռուլովն աջակցեց, վորպեսպի նրան սպայական աստիճան տրվի, և գործուղեց Ց-րդ կորպուսի շտաբը: Այստեղ Կրիվոն իր գաղտնի աշխատանքի համար ստացավ նույնպիսի հսկայական հնարավորութուններ, ինչպիսին ուներ Կարլ Ծուլմեյստերը:

Հեղափոխութունը հայտարերեց, վոր գաղտնի վոստիկանութան ցուցակների մեջ մեծ թվով կասկածելի անձնավորութունների շարքում հիշատակված է յեղել նաև Կրիվոնի անունը: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր բոլորի համար անհայտ այդ մարդն այն աստիճան էր զբաղել իշխանութան վաստահութունը, վոր նույնիսկ պահանջական բաժինը վախենում էր ձեռք տալ նրան: Հակահետախուզութան գործակալները չկարողացան բռնել նրան, նրանց իշխանութունը վերջացավ, և Կրիվոնի գործունեյութունն ընդհատվեց:

Պաղեստինում և Փոքր Ասիայում անգլիացիները հարկադրված յեղան պայքար մղել մի քանի տաղանդավոր հետախույզների դեմ, վորոնք նույնքան դժվար վորսալի էյին, ինչպես ցարական բանակի թիկունքում աշխատող ավստրո-գերմանական գործակալները: Ռազմական հետախույզության սպա Ալլենբերն հաղորդում է յերկու ականավոր գործակալների՝ Պրեյսերի և Ֆրենկոֆ մասին: Պրեյսերը գնդապետ Լուրենսի նման վարպետորեն իրեն ցույց է տալիս իբրև արաբացի: Թուրքական դաշնակիցները նրան համարում էյին բեղիկին: Ինչպես այժմ հայտնի յե, նա առնվազն յերեք անգամ թափանցել է Գահիրեյի բրիտանական շտաբը, ազատ կերպով ուղեւորություններ է կատարել Գահիրեյից Կոստանդնուպոլիս՝ ինֆորմացիա հավաքելով ավելի փոքր գործակալներից, բնիկ ռեզիդենտներից ու տեղական հետախույզներից. վորոնք դրամն ստանում էյին Գերմանիայից կամ Թյուրքիայից: Պրեյսերը յերեք չեր ձախողվում. նրա հետ նույնիսկ չէյին պատահում այնպիսի անհաջողություններ, ինչպես Լուրենսի հետ և թյուրքական սերժանտները նրան չէյին ծեծում մինչև դիտակցությունը կորցնելը՝ ընդունելով վորպես արաբական դասալիք:

Ֆրենկոֆը, վոր կապիտանի և սպա նաև մայորի չին էր ստացել իրենով հիացող հակառակորդներից, վորոնց նա շատ դլխացավանք էր պատճառել, գործում էր ե՛լ ավելի հանդուգն, քան Պրեյսերը: Նա դյուրությամբ իրեն հանդես էր բերում վորպես անգլիական կամ գաղութային սպա, ըստվորում նա տիրապետում էր այնպիսի մեծ ու բազմակողմանի ունակությունների, վոր յերեք իրեն յերկու անգամ հանդես չեր բերի վորպես միևնույն մարդը: Նա ուներ հիանալի արտաքին, լավ շարժուձև և տեխնիկական գիտելիքներ ռազմական գործի համարյա բոլոր բնագավառներից. նրա տրամադրության տակ կային հակառակորդի գործերի բազմաթիվ համադրեստներ: Մի անգամ նա հրետանային մատակարարման սպայի համադրեստ հազած «տեսչական զննության էր յենթարկել» մի հրետանային դուռը: Մի ուրիշ անգամ նրան հաջողվել էր ստանալ յենթադրվող լարափակման լրիվ պլանը: Նա մեծ դլխացավանք էր պատճառում այն բոլոր սպաներին, վորոնք թեկուզ հեռավոր կերպով հիշատակում էյին նրա անունը: Նրանց ձերբակալում էյին ամենաշտապ առաջադրանքներ կատարելու մոմենտին և հարկադրում էյին ժամանակ կորցնել, մինչև վերջնականապես կպարզվեր նրանց ո՞վ լինելը:

### ԿԱՊԸ ՀԷՏԱԻՈՒՅՁԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍԵՆՍԻՆԳԱՎՈՐ ՄԱՍՆ Ե

Հետախույզի աշխատանքի ամենավտանգավոր մոմենտը տեղեկություններն ըստ նշանակման հաղորդելն է: Հակահետախույզության գործակալների կողմից հայտաբերված 10 հետախույզից 9-ը տապալվել է իրեն ոգտագործած կապի միջոցների անհուսալիության հետևանքով: Համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական մի գործակալ ոգտագործում էր Սկարպ գետը, վորը հոսում էր Արրասի մոտով՝ բրիտանական դիրքերից դեպի գերմանական դիրքերը. նա ձեղքում էր ձկան մարմինը, բացվածքի մեջ դնում իր հաղորդագրությունները և ձկանը ռազմական ինֆորմացիայի հետ միասին վստահում գետին, ըստ նշանակման հասցնելու համար: Այդ գործակալը չբռնվեց, նրա ուղարկած հաղորդագրություններից հակառակորդի ձեռքն ընկավ միայն մեկը: Անգլիական զինվորներին հրամայված էր հավաքել ու ստուգել գետի յերեսին նրանց դիրքերի մոտով լողացող բոլոր սպանված ձկներն ու այլ իրերը. շնորհիվ այդ բանի, մի խորամանկ հնարամտություն էլ անանկ դուրս յեկավ:

Փոստատար աղալինիների ոգտագործումն այն աստիճան սովորական յերևույթ էր, վոր ռազմաճակատում բոլոր զինվորներին հրամայված էր ստանել հակառակորդի կողմը թռչող ազալինիներին: Հավաստի կերպով ապացուցված է, վոր մի աղալինի ներկված է յեղել վառ դույնով, վորպեսզի նմանվի թռեթակի, վորովհետև ինչ-վոր մի գործակալ գտնում էր, վոր թռեթակը Ֆլանդրիայում պակաս չափով ուղադրություն կդրալի, քան ազալինին: Ֆրանսիայում գործող գերմանական գործակալները նպաստավոր քամու ժամանակ փորձում էյին իրենց տեղեկությունները տեղ հասցնելու համար ոգտագործել ոգապարիկներ: Գերմանական սնայակերները կրակում էյին այդ խաղալիքների վրա, և դրանք ընկնում էյին գերմանական տերիտորիայում: Ֆրանսական ու բրիտանական սնայակերներին նույնպես հրամայված էր հետևել խաղալիք-ոգապարիկներին և դնակի ոգնությամբ ցած իջեցնել, յերբ նրանք կերևային բրիտանական կամ ֆրանսական տերիտորիայի վրա:

Սաղաղ ժամանակ նամակները տեղ են հասնում բավականաչափ արագ և հուսալի կերպով: Բայց պատերազմի ժամանակ նրանք ընկնում են դրաքննիչի ձեռքը, վորը նկատում է յուրաքանչյուր նշադրում, տեքստի միտումնավորություն, ընդգծում-

ներ և այլ առանձնահատկութիւններ, վորոնք թեկուզ հեռավոր կերպով կողի առկայութեան միտք են հղացնում: Սիմպատիկ թանաքի ոգտագործումը, թվում է թե կարող էր մոլորութեան մեջ դրանք դրաքննիչներին: Բայց հետախույզ Անտոն Կյուպֆերլեն, վորը Տաուեր եր մեկնում Լոզիի հետեից, հայտնաբերվեց շնորհիվ այն բանի, վոր Հոլլանդիա ուղարկված նրա նամակը քիմիական միջոցներով յերևակվել էր:

Կյուպֆերլեն հետախույզութեան համար հարմար մարդ չէր: Համաշխարհային պատերազմի ժամանակ փոքր թվով դերմանական դործակալներ չեն դռվել անճիշտ առողանութեան պատճառով: Կյուպֆերլեն իր առողանութեամբ կասկած էր առաջացրել դեռ նախքան Լիվերպուլում ափ իջնելը: Նրան հնարավորութիւն տրվեց այցելել Դուբլին և այնտեղից ուղևորվել Լոնդոն, վորտեղ նրան կործանող նամակն ուղարկվելուց անմիջապես հետո Սկոտլանդ Յարդի դեղեկտիվներն ընդհատեցին կարճատև կարյերան այդ դործակալի, վորի հայրենասիրութիւնը չէր կարող ծածկել նրա լիակատար անձեռնհասութիւնը հետախույզութեան դործում:

Կովոզ յերկու կողմի քիմիկոսները նոր ու հիանալի թանաքներ եյին հնարում ամեն անգամ, յերբ նախկին թանաքների դադարիցը հայտնի յեր դառնում հակառակորդին, և յուրաքանչյուր այդպիսի դյուտ դադարի ճանապարհներով ուղարկվում էր դործակալներին: Այդ պատճառով ել թանաքները հաճախ պատրաստվում եյին վորպես դեղ, սապոն, ատամնամածուկ, կոշիկաներկ: Բայց փոքր քանակութեամբ թանաք ուղարկելու ել ամբելի լավ յեղանակ էր համարվում այն, յերբ վոչինչ չկասկածող մի ճանապարհորդի խնդրում եյին վորեւե զգեստ հանձնել արտասահմանում դանվոզ բարեկամին: Այդ բարեկամը դործակալն էր լինում կամ նրա ողնականը, իսկ զգեստը (վերարկու, բաճկոն, շապիկ, անդրավարտիկ կամ մի զույգ գուլպա) թաթախված էր լինում վորեւե տեսակ նոր թանաքի մեջ: Այնպիսի մի հասարակ պրոցես, ինչպիսին շապիկը կամ գուլպաները յեփ տալն է, կարող էր դործակալին մատակարարել բավական քանակութեամբ թանաք, ծածկելու համար այն լրագրի լուսանցքները կամ մի այլ թղթի յերես, վորը կարող է խուսափել դրաքննչի զգաստութիւնից:

Մի չափազանց կարևոր հետախույզական հաղորդագրութիւն, վոր պատերազմի հենց սկզբում ստացվել էր Անգլիայում մի բերդիական դործակալից, գրված է յեղել չափազանց յուղորտված, կարծես ամբողջապես յուղի մեջ թաթախված մի մեծ թերթ թղթի

վրա, իսկ նամակի կենտրոնում այրելու միջոցով բացված էր մի մեծ անցք: Այդ թղթի վրա կիտրոնա-ֆորմալինային թանաքով գրված էր դերմանական այն գործերի թվական կազմի մանրամասն դնահատականը, վորոնք Բելգիայով անցնում եյին դեպի Փրանսիա: Գրանցումը յուղի միջով շարունակվում էր մինչև այրված անցքի յեզրը և ապա նրա մյուս կողմից շարունակվում մինչև թղթի ծայրը: Այդ թղթի մեջ փաթաթված էր մի զույգ ճտկավոր կոշիկ, վորը մի դաղթական իր հետ տանում էր հասցեատերին դասավորված մանր իրերի հետ միասին:

Վոմանք պնդում եյին, թե չպայթած արկերը չեն պայթում հենց այն պատճառով, վորովհետև նրանց մեջ պայթուցիկ նյութի փոխարեն գրված են հրահանգներ: Յենթադրվում էր, վոր դործակալներին հայտնի յեր, թե յերբ և վորտեղ պետք է բաց թողնվի իր համար նախատեսված արկը: Գործակալը պետք է դանվել տվյալ վայրի մոտակայքում, հողի միջից դուրս բերել արկը և հետագոտեր նրա բովանդակութիւնը:

Շատ դործակալներ ստանում եյին այնպիսի ծանրամեծ առարկա, ինչպես փոստատար աղալիններով վանդակը: Գործակալը պետք է թե ինքը խուսափեր հետաքրքրվող աչքերից և թե թաղցներ աղալիններին:

Ռուբեյուս բնակվող անգլիական դործակալ Ռիչարդսոնն իր մոտ ընդունում էր դերմանական շտաբի սպայի. այդ ժամանակ աղալինն յերկչոտ կերպով գլուխը դուրս է հանում զամբյուղից: Գերմանացին այնպես է ձևացնում թե վոչինչ չի նկատել, բայց շուտով գնում է և վերադառնում մի գինվորի հետ: Հավատացած լինելով, վոր սպան նկատել է աղալինն, Ռիչարդսոնը զամբյուղի մեջ աղալինու փոխարեն դնում է մի հավի ճուտ, և այդ թոչունն այնպես է զարմացնում դերմանացիներին, վոր նրանք հեռանում են առանց կասկածելու, թե Ռիչարդսոնը կարող էր ուրիշ տեղ թաղցրած լինել աղալինին:

Փոստատար աղալինու բռնվելը ավելի մեծ վտանգ է սպառնում, քան հակառակորդի դործակալի ձերբակալութիւնը: Յեթե դերմանացիները բռնեյին Ռիչարդսոնի մոտ յեղած աղալինն, նրանք անտարակույս նրան կողտագործեյին կեղծ ինֆորմացիա ուղարկելու համար: Հետախույզները միշտ իրենց հաչիվ եյին տալիս այդ բանում և շատ դեպքերում, յերբ ձերբակալութիւնը մոտակա ըուպեների հարց էր թվում, նրանք նախ բաց եյին թողնում իրենց աղալիններին և ապա միայն մտածում իրենց փրկութեան մասին: 1916 թվականին մի ողաչու տանելիս է լինում մի

հետա՛ուլցի, վորին նա պետք է էջեց՝ որ բելլիական օերիտո-  
րիայի մի հեռավոր մասում: Քանի վոր դործակալն ուղարկվում  
էր առնվազն 2 շաբաթ ժամանակով, նրան տվել էյին յերեք ա-  
ղալնի, վորոնց նա պետք է թողներ սեղիղենտ-դործակալի մոտ  
և վորոչ ժամանակից հետո հետ ուղարկէր նախնական տեղեկու-  
թյուններով: Չնայած ողաչուի փորձառութեանը, վայրեջքի  
վայրին մոտենալիս ինքնաթիռն աղետի յե յենթարկվում, ըստվո-  
րում դործակալն սպանվում է, իսկ ողաչուն՝ ծանր վիրավոր-  
վում: Չամբոյուղի առաձգականութեան շնորհիւ աղալնիները  
մնում են անվնաս, բայց ողաչուի վրաքը կտորվել էր, նա խճճ-  
վել էր իր ինքնաթիռի բեկորների մեջ և չէր կարողանում հաս-  
նել դամբուղին: Նա դիտել, վոր մի քանի ժամից հետո իրեն  
կդանեն, և յեթե դանի դերմանական պահակը, ապա աղալնի-  
ները կտեղափոխվեն մոտակա շտաբը, իսկ այնուհետև կուղարկ-  
վեն դաշնակիցների մոտ այնպիսի ինֆորմացիայով, վորը ցանկա-  
լի կլինի հակառակորդի հրամանատարութեանը: Համատացած  
լինելով, վոր մինչև առավոտ վոչ մի դորամաս չի անցնի աղետի  
վայրի մոտով, նա սկսում է ողնություն կանչել: Նրա յենթա-  
դրութեանը ձիշտ է դուրս գալիս. մի ծեր բելլիացի մանրավա-  
ճառ կին առաջինը լսելով աղաղակները, մտանում է աղետի  
վայրին, ձեռքի շարժումներից հասկանում ողաչուի միտքը և  
նախքան ողնություն ցույց տալը բաց է անում աղալնիների  
զամբուղը:

Ինքնաթիռի ողտադործումը՝ հակառակորդի թիկունքը հե-  
տախուլցիներ փոխադրելու համար՝ մեծագույն նորմուծություն է  
հետախուզութեան պատմութեան մեջ: Առաջին անգամ այդ բանն  
ողտադործվել է Բալկանյան պատերազմի ժամանակ, 1912—1913  
թվականներին: Այդ ուղղութեամբ առաջին փորձերը կապված են  
մի հնարամիտ պատանի ամերիկացու անվան հետ, վորը Փրան-  
սական գլխավոր շտաբին ել ծանոթացրեց այդ յեղանակի հետ  
1914 թվականի վերջերին: Լեյտենանտ Բերտ Հոլլը վորպես ողա-  
չու իր կարյերան սկսում է թյուրքական բանակում 1912 թվա-  
կանին: Նա թոչում էր Փրանսական մոնոպլանով և ողային հե-  
տախուզութեան կատարում որական հարյուր վոսկի դոլլար վար-  
ձատրութեամբ: Թյուրքական բանակը կանդանձ էր պաշտպանո-  
ղական դիրքերում: Յերբ Գրք-Բիլիսեյի և Լյուլե-Բուրգասի  
պարտություններից հետո պաշարվում է Ադրիանուպոլիսը, թյուր-  
քերն սկսում են հետաքրքրվել Փոքր Ասիայով: Հոլլը լավ էր աչ-  
խատում, բայց յերբ դադարեցրին վարձատրութեանը, դադարեց

նաև նրա աշխատանքը: Նա իր ինքնաթիռով մի Փրանսացի մեխա-  
նիկի հետ միասին թռալ Բուլղարիա և բուլղարացիներէ կող-  
մից հրավիրվեց նույն դամարով հետախուզութեան կատարելու  
իրենց համար. և վորովհետև նա թյուրքերի մոտ ծառայելու  
ժամանակ հիմնովին ուսումնասիրել էր կոստանդնուպոլի առջև  
դանվող ամբացված դիրքերը, նրան առաջարկեցին հետախու-  
զութեան նպատակով փորձ կատարել իջնելու ճակատի այն կողմը,  
Չաթալլայի մոտ: Հոլլը մատնանչում է բոլորին հայտնի տար-  
բերությունը դործակալային հետախուզութեան և ողային հետա-  
խուզութեան միջև, վորի համար ինքը հրավիրված էր: Բայց նա  
համաձայնվում է համապատասխան վարձատրութեամբ փորձել  
թյուրքական ճակատի սահմաններում իջնել վորևե բուլղարական  
դործակալի:

Սակայն, յերբ բուլղարացիներն սկսում են ձգձգել վճարում-  
ները, Հոլլը պատերազմն իր համար ավարտված է համարում:  
Նա սպառել էր պատերազմող յերկու կողմերի՝ ողային հետա-  
խուզութեան համար հատկացված միջոցները: Նա արդեն հա-  
վաքում էր իր իրերը և... ձերբակալվում է վորպես թյուրքա-  
կան լրտես: Պարտատիրոջ հետ հաշիւ մաքրելու բալկանյան այդ  
տիպիկ մեթոդն ամերիկացուն դնում է վերին աստիճանի կրիտի-  
կական դրութեան մեջ. վորպես վարձկան նա չէր կարող դիմել  
ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչներէ ողնութեանը:  
Նա կանդանձ է դինվորական դատարանի առաջ և դատապարտ-  
վում մահապատժի: Նրա Փրանսացի մեխանիկը, վորը ձերբա-  
կալվել էր վորպես յերկրորդական հանցակից, կարողանում է  
փախչել և մի քանի կտրիճների հետ վերադառնալով հարձակ-  
վում է բուլղարական պահնոցի վրա և աղատում Հոլլին: 1914  
թվականի ոգոստոսին ամերիկյան ողաչուն վերադարձնում է  
Փրանսացիներին ունեցած իր պարտքը, պատերազմի յերկրորդ  
որն իսկ միանալով Փրանսական բանակին: Յերեք ամիս հետո  
նա փոխադրվում է ողային ծառայութեան: Նա մտնում է Լա-  
Ֆայետի ողատորմիղի կազմի մեջ, վորից պատերազմի վերջում  
կենդանի յեն մնում միայն Հոլլն ու մեկ էլ մի ողաչու: Մինչև  
այդ ողատորմիղի կազմվելը լեյտենանտ Հոլլը Փրանսական  
հետախուզիչներ էր փոխադրում գերմանական գործի թիկունքը:  
Այդպիսի թուիչները պետք է կատարվէյին դիշերով, և վորքան  
մութ լինել դիշերը, այնքան ավելի լավ. վայրեջքը կատարվում  
էր անծանոթ ու չնախապատրաստված վայրում. ապա նա պետք  
է վերադառնար: Յերկու շաբաթից հետո նա թչում էր հետա-

խուլզին հետ բերելու, և այդպես կր'նվում եր նույն վտանգավոր ճանապարհորդութունը: Հոլլն այդ դործի պիտներն եր, և իր սառնարյունության ու հմտության շնորհիվ հաջողությամբ հետ վերադարձրեց բոլոր հետախուլզներին:

Այդ աստիճան վտանգավոր սկզբնավորութունից հետո ողով գործակալներ փոխադրելը մտալ պատերազմող բոլոր պետությունների ավիացիայի աշխատանքի որակարդի մեջ, ըստվորում ողաչուի և նրա ուղևորի պաշտպանության համար հնարված էյին բաղմաթիվ ու տարբեր կատարելագործություններ: Այսպես, որինակ, վայրեջը կատարվում է վորևե հետախուլզ-ուղևորներն տան մոտ, վորտեղ սպրողն ուժեղ և միայն վերևից տեսանելի լույս եր վառում ծխներուլի մեջ: Այդ աղանշանը նաև ողնում եր ողաչուին գործակալին վերադարձնելու համար թուշելիս: Մի քանի դեպքերում հետախուլզ-ուղևորները պայմանավորված դիշերը պատրաստ չեր լինում, կամ թե պատահում եր, վոր նրան ձերբակալած էյին լինում լրտեսության մեջ կասկածելով. այդպիսի ժամանակ ողաչուի թուշըն ապարդյուն եր անցնում: Յերբեմն ողաչուն ստիպված եր մի քանի դիշեր իրար հետևից ապարդյուն թուշըներ կատարել, մինչև վոր կերևար գործակալը:

Դաշնակիցները մեծ գերակշռություն էյին վայելում գաղանի հետախուլզության այդ բնագավառում: Բեղիայում և Փրանսիայի ոկուպացիայի յենթարկված շրջաններում նրանց համար բաց էյին գերմանացիներին անհայտ հաղարավոր վայրեջքի հրապարակներ, ըստվորում հարյուրավոր հայրենասերներ միշտ պատրաստ էյին ողներու նրանց: Այնպիսի ցածր վարձատրությամբ, ինչպես 700 Փրանկը՝ յերկու ուղղությամբ թուշելու համար, անգլիացիներն ու Փրանսացիներն ողտվում էյին Բեղիայի նախկին բնակիչներին ծառայությունից, վորոնք կարող էյին իջեցնել իրենց աների մոտ, կամ նրանց մերձակայքում, վորտեղ նրանց հայտնի յեր յուրաքանչյուր թիղ հողը: Արևմուտքում այդպիսի առավելություններ ձեռք բերելու համար գերմանացիներն ստիպված էյին վճարել դավաճան-Փրանսացիներին, վորոնք ծանոթ էյին վայրին, բայց կարող էյին հայտնի լինել և ձերբակալել վորպես լրտեսներ: Յերբ գերմանացիները համոզվեցին, վոր հանգամանքներն ընդգեմ իրենց են դասավորվում, նրանք միկրոֆոններ դրին, վորոնք վորսում էյին ինքնաթիռի մոտորի աղմուկն ոկուպացիայի յենթարկված տերիտորիայի այն հեռավոր մասերում, վորտեղ գերմանացի ողաչուները դիշեր ժամա-

նակ անելու վոչինչ չունեյին: Դաշնակիցները չեղոքացրին այդ հարվածը, կրկնակի կրճատելով անհրաժեշտ վայրեջքների թիվը և հետախուլզներին պարաշյուտների ողնությամբ ցած իջեցնելով: Այդպիսով, հետախուլզությունն ընդունել եր փանտաստիկ տեսք, և հետախուլզներն ուղղակի յերկնքից իջնում էյին հակառակորդի վրա, վորը հարկադրված կլիներ հետախուլզին ընչունելու և թագցնելու պատրաստ պարտիզանների բոլոր դաշտերի և այգիների վրա հսկողություն ունենալու համար խրամատներից դուրս բերել բոլոր զինվորներին:

Պատերազմի մեջ պահանջվում է արիություն: Իհարկե, կային բավականաչափ խիզախ տղամարդիկ ու կանայք, վորոնք կարող էյին հետախուլզություն կատարել, բայց թուշել հակառակորդի զենիթային մարտիկոցներ վրայով, վայրեջք կատարել մթության մեջ, կամ, վոր էլ ավելի վատ է, թուշել պարաշյուտով, — այդ քչերը կկամենային: Սակայն բոլորին պարզ են ինքնաթիռով տեղ հասցրած հետախուլզի առավելությունները: Յենթադրենք, թե ողաչուն կատարել է հաջող վայրեջք, իսկ հետախուլզն իր համազգեստը փոխել, հագել է քաղաքացիական զգեստ և ուղևորվել է այն քաղաքը, ուր այցելելը նրան արժեքավոր նյութ կտա: Կարիք չկա, վոր նա վորևե բան գրանցի, վորովհետև վերադառնալու յե ամենաշատը մի յերկու շաբաթից հետո և անձամբ կհաղորդի այն ամենի մասին, ինչ հաջողվել է տեսնել: Միանգամայն բնական է, վոր հետախուլզը կհետևի անցնող դորքերին, և քանի վոր յուրաքանչյուր զինվորի համազգեստի վրա կան վորևե զնդի կամ դիվիզիայի տարբերիչ նշաններ, հետախուլզը հիշելով այդ նշանները՝ արժեքավոր տեղեկություններ է հավաքում տվյալ շրջանի զորամասերի վերաբերյալ:

Յեթե այդ հետախուլզը հանդիպի հրետանային խոշոր պարկի, նա պարտավոր է իմանալ, թե քանի թնդանոթ կա պարկում և նրանք ինչ վիճակի մեջ են դառնվում: Դիտելով մի քանի թնդանոթներ մերթ այս, մերթ այն վայրում, նա կարող է դատել, թե այդ թնդանոթները նոր են արդյոք, թե արդեն յեղել են մարտում: Բացի դրանից, նա կվորոշի նաև նրանց կալիբրը: Սակայն թնդանոթների նկատմամբ չափից ավելի բացահայտ հետաքրքրություն ցուցաբերելը կարող է ճակատագրական լինել հետախուլզի համար: Կողմնակի աչքը չպետք է նկատի, վոր հետախուլզը հաչվում է թնդանոթները: Նա կարող է առանց թնդանոթների վրա ուշադրություն դարձնելու դրոսնել պարկի

չորըը, հաշվել քայլերը և վորոշել, վոր պարկի յերկարութիւնը ախքան է, լայնութիւնն ախքան: Բազմապատկելով այդ թիւերը՝ նա կ'վորոշի պարկի ամբողջ տարածութիւնը: Այնուհետև նա կ'հաշվի յուրաքանչյուր տիպի թնդանոթի դրաված մոտավոր տարածութիւնը, վորի վրա բաժանելով պարկի դրաված ամբողջ տարածութիւնը, հետախուզող կստանա թնդանոթների մոտավոր թիւը:

Հնարավոր է, վոր հետախուզին առիթ կունենա ուղիղենտ-դործակալից ընդունելու դրավոր հազորդադրութիւն, վորը մտքի մեջ պահելը դժվար կլինի: Այդ դեպքում նա տեղեկութիւնըն իր հետ վերցնում է միայն այն ժամանակ, յերբ ուղեւորվում է դիմավորելու յեկող ինքնաթիռին:

Հետախուզող պետք է խուսափի սահմանային պահակատեղով անցնելուց, վորտեղ նրան կարող են յենթարկել հարցաքննութիւն և խուզարկութիւն. նա դործը պետք է կատարի առանց դրավոր հազորդումների, թեկուզ վորքան էլ լավ քողարկված լինեն դրանք: Այդ բանը մի քանի անգամ կալեւացնի նրա անվտանգութիւնը:

Ինքնաթիռների ոգտադործման ժամանակ գաղտնի հետախուզութիւն դործակալները խուսափում են սահմանի վրա նրանց սպասող վտանգից: Ներկայումս նախապատվութիւնը միշտ կտրվի տեղեկութիւններն անդիւր հիշող ու բանավոր ներկայացնող դործակալին:

Համաշխարհային խլատերազմի շրջանի փոստային խիստ գրաքննութիւնն իր դրական կողմն էլ ուներ, վորն ոգտադործեց գաղտնի հետախուզութիւնը:

Գրաքննիչներից խուսափելու համար կալի միջոցները պետք է լինելին ծայրահեղորեն պարզեցված: Յերբ այդ պայմանը հաշիւ առնուց, դրան հաջորդեցին բազմաթիւ դժուար: Բարդ կողերը և հնարամիտ շիֆրերը, վորոնք խճճված էին այն աստիճան, վոր դրանք վերծանող լեյտենանտները խելազարվում էին, արխիւ հանձնվեցին՝ մուսկետների, փողի կողմից լցվող հրացանների և հնացած այլ իրերի հետ միասին: Գաղտնի դործակալը կարող էր իր դրավոր հաշիւութիւնը ներկայացնել մի շարք անկապ ու կցկտուր բառերով, նշաններով ու թիւերով: Այդ հաշիւութիւնը կարող էր մոլորութիւն մեջ գցել հակառակորդին, յեթէ այն պատահաբար ընկներ նրա ձեռքը: Սակայն փաստաթղթի արտաքին տարրինակութիւնը կարող էր նաև արագացնել դործակալի տապալումը:

Եզդար Ալլան Պոեն գարմանալի պարզութիւնը դրում էր ոգորդադրութիւնների վերծանման այդ բարդ պրոբլեմի մասին, վորոնք գաղտնի էին մնում բոլոր նրանց համար, ովքեր չունե- յին այն բանալին, վորից ոգտվել էր հազորդադրութիւնը կողմողը: Պոեյի նկարագրած մեթոդները հարյուր տարվա ընթացքում այնքան էլ չեն փոխվել: Մի այլ ամերիկացի՝ դնդապետ Սարիանն իր դիտելիքներն ու ազատ ժամանակը նվիրել էր կողերի և շիֆրերի հետ կապված բոլոր տեսակ պրոբլեմների լուծմանը: Ուսումնասիրելով տպագիր տեքստերի հաղարավոր եղեր, նա կատարելագործում էր տառերի կրկնութիւն աղյուսակը, վորը հեշտացնում է վերծանողի աշխատանքը:

Կողերի վերծանման այդ հեշտութիւնը կարեւոր դեր է խաղում, քանի վոր նա սահմանափակում է դրանց ոգտադործումը պատերազմի ժամանակ: Կողերն ու շիֆրերը միշտ իբրև մեկուսիչներ են ծառայում հազորդի մտքերի համար: Բանակին տրվող հրամանները, անկախ հազորդման յեղանակից, պետք է լինեն շիֆրազրված, վորը ներկայացնում է բառերի կամ տառերի հասարակ վերադասաւորութիւն: Դրանք կարող են հեշտութիւն վերծանվել բանալին ունեցող յուրաքանչյուրի կողմից: Շիֆրագիրը նախատեսվում է հակառակորդին մոլորութիւն մեջ գցելու համար ամենաշատը մի քանի ժամով: Շիֆրը միայն փակուղու մեջ է դնում և ծածկում է գաղտնիքը, մինչդեռ կողը կարող է այնպես խորը թագցնել միտքը, վոր կողային դիւրը կորսվելու դեպքում նա յերբեք էլ հայտնի չի դառնա: Կողերն ոգտադործում են այնպիսի բառեր ու նախադասութիւններ, վորոնք քմահաճ այլ նշանակութիւն ունեն, ըստվորում նրանց իսկական իմաստն անհնարին է հասկանալ, յեթէ անհայտ է, թէ ինչ է նշանակում կողի յուրաքանչյուր առանձին բառը կամ արտահայտութիւնը: Պատերազմի ժամանակ բրիտանական մի զենեւալ կարեւոր հրամանները վորպես փորձ ուղիւղով հազորդում է բաց տեքստով: Ինչպես վոր նա սպասում էր, գերմանացիները կարգալով նրա կարճ ու յեռանդուն առաջարկները, համոզված էին, վոր այդ մի նոր, վերին աստիճանի խճճված կող է, և չէին ոգտադործում բռնված հրամանները: Այս էր կողերն ու շիֆրերը դաշտում մշտապես ոգտադործելու արդյունքը. այն ամենը, ինչ թվում էր չափազանց պարզ, ընդունվում էր վորպես ամենաբարդ կող:

Բայց ի՞նչպես դտնել այն կողը, վորով հետախուզող կարող է ոգտվել և վորը կարող են չնկատել դրաքննիչները: Յեթէ հե-

տախուզքն աննկատելի թանաքով գրում է նամակի տողերի արան-  
քում կամ նոտաների մեջ, հայտարարությունների կամ թերթերի  
վրա, ապա նա վարվում է ըստ հին սովորութեան, աշխատելով  
իր ինֆորմացիան դրել կողով: Մի քանի տառերի կամ թվերի  
յերևակելն ուղարկվող նյութը կմատնի վորպես վտանգավոր  
փաստաթուղթ, և այն կվոչնչացնեն: Անդլիայում մի դժբախտ  
ձեռքակալվում է այն բանի համար, վոր իշխանությունների  
ձեռքն եր ընկե՛ մի այնպիսի աննշան փաստ, ինչպես թերթի լու-  
սանցքներում գրված յերեք թվանշանները: Կարելի յե յենթադրել,  
վոր յեթե նրա թվերը գրված լինեյին կողով, նա կկարողանար  
փրկել իր կյանքը, կամ ավելի յերբ՛սր ժամանակվա ընթացքում  
մնալ չհայտարարված: Բայց հետախույզներն ինչ-վոր սնտախապաչ-  
տական թշնամություն են ցուցաբերում դեպի կողերն ու շփ-  
րերը: Վորքա՛ն գործակալներ են գոհվել տխմար կամ բարդ խո-  
րամանկությունների հետևանքով: Ի դուր չե, վոր այդ հորին-  
վածքներին փոխարինելու յեկալ, վորպես քողարկման մի նոր  
միջոց, շեշտված բանականությունը: Յերկու հոլանդացիներ՝ Յան-  
սենն ու Ռուսը, աշխատում էյին վորպես ծովային հետախուզու-  
թյան գործակալներ. նրանք իրենց ցույց էյին տալիս իբրև ծխա-  
խոտի ֆիրմայի կոմիսիոներներ և իրենց այցելած բոլոր ծովա-  
յին նավահանգիստներից հեռագրեր էյին ուղարկում, տալով ամե-  
նաթանգ դրոշմի հազարավոր սիգարների պատվեր: Այդ հեռա-  
գրերի մեջ «կորոնա» բառը նշանակում եր գծանալ: Յեթե պատ-  
վիրվում եր 4000 «կորոնա», այդ նշանակում եր, վոր այն նավա-  
հանգստում, վորտեղից ուղարկվել է «պատվերը», կանդնած է  
չորս գծանալ: Բնական է, վոր սիգարների այդպիսի հանկարծա-  
կի պահանջը գրավում է հեռագրական դրաքննիչների ուշադրու-  
թյունը: Յերբ այդ «հոլանդական վաճառականներին» (իրակա-  
նում՝ գործազուրկ նավաստիներին) հարցաքննության են յեն-  
թարկում, նրանք հայտարարում են, վոր իրենք հոլանդական մի  
ֆիրմայի ներկայացուցիչներ են, ըստվորում նրանց հիշատակած  
ֆիրման այն աստիճան աննշան եր, վոր թանգարժեք սիգարների  
այդպիսի մեծ պատվերները կարող էյին բացատրվել տիրոջ թույլ  
բանականությամբ: Այն բանից հետո, յերբ նրանց ներկայացնում  
են հանցանքն ապացուցող փաստեր, նրանք խոստովանում են և  
դատապարտվում են մահվան:

Շիֆրերը հայտնի յեն յեղել դեռ հնագուրջան հույներին ու  
հռոմայեցիներին, ըստվորում թե՛ առաջինները և թե՛ յերկրորդ-  
ներն արդեն ոգտվում էյին աղալիների փոստից և մի հնագա-

ըյան պատմաբանի տվյալներով՝ փորձում էյին ծիծեռնակներին  
վարժեցնել ուղղական հաղորդագրություններ փոխադրելուն:  
Մի հնարամիտ հույն, տիրան Միլետան, ցանկանում է ապստամ-  
բությո՛ն Կարճրացնել Դարեհի դեմ: Հաշվի առնելով պարսիկ-  
ների դաստաությունը, նա իր սարուկներից մեկին հրամայում է  
սափրել գլուխը, նրա սափրած գլխի վրա գրում է իր հաղորդա-  
գրությունը և յերբ մազերն աճում են, նրան ուղարկում է հոնի-  
ացի Արիստաղորի մոտ, վորը կարող եր հաղորդագրության բո-  
վանդակությանը ծանոթանալ շատ հասարակ ճանապարհով՝ ըստ-  
բուկի գլուխը նորից սափրելով: Ժամանակակից գաղտնի գործա-  
կալը գաղտնիքներ հաղորդելու նոր ուղիների ու միջոցների վո-  
րոնման ասպարեզում նորից հարկադրված է խորամանկության  
դիմել: Վոդեզի չրջակայքում ծխնելույցներից բարձրացող ծու-  
խը հաղորդման լավ միջոց եր համարվում: Ծուխը յերևում եր  
հեռու տարածությունից: Յեվ բացի այդ, ծուխը կարելի յեր  
կարգավորել, այսինքն բաց թողնել վորոչ ժամանակամիջոցնե-  
րում, վորոչ ձևով և այլն: Մի խոսքով, ծուխը չափազանց ճկուն  
կող եր: Աննկատելի, համարյա միկրոսկոպային քերձվածքները  
դրամների վրա՝ նույնպես կող էյին: Վոչինչ չկասկածող ճանա-  
պարհորդին կարող եր դիմել հյուրանոցի վորևե ծառայող, խընդ-  
րելով մի քանի ուրբի հանձնել այն քաղաքում ալրող իր «չքա-  
վոր աղալիանին», ուր ուղևորվում եր ճանապարհորդը: Վեր-  
ջինս վերցնում եր դրամները, առանց իմանալու, վոր նրանցից  
յուրաքանչյուրի վրա գծադրված է յերկուսից մինչև 10 բառ վո-  
րոնք կարելի յե կարգալ դրամները խոշորացնող ապակու տակ  
դանդաղ պատելու միջոցով:

Այսպես կոչված «բառարանային» շիֆրը հաղորդագրությունը  
հաջողությամբ թագցնում է անտեղյակ մարդուց, բայց վոչ մի  
գործակալ հակառակորդի տերիտորիայում չի կարող այն ոգտա-  
գործել նամակի կամ հեռագրի համար, վորովհետև այդպիսի  
հաղորդագրությունը դրաքննիչն անմիջապես կբռնի: Այդ կողը  
հիանալի միջոց է գաղտնի հետախուզության գործակալների միջև  
գրագրություն պահպանելու համար՝ խաղաղ ժամանակ: Կողից  
գրագրություն համար անհրաժեշտ է ունենալ միայն մեկ գիրք, դերա-  
դասելի յե բառարանը: Տվյալ բառարանին և խոսքերի նշանա-  
կության ընդունված ձևին անձանոթ մարդուն կողով ուղարկ-  
վող հաղորդագրությունը կթվա տառերի ու թվերի կուտակում,  
չափից դուրս շատ կետագրություններով: Այդ նպատակի համար

ամենից ավելի հարմար են յերկու սյունակի վրա տպված փոքր բառարանները :

Ավելի հոգնեցուցիչ կողմ, բայց միանգամայն հուսալին և փոստային գրաքննութեանը կատարութեան հասցնողն—այդ տրաֆարետն է, վորը տեքստից առանձնացնում է մի քանի խոսք, վորոնք կազմում են ինքնուրույն հաղորդագրութիւն, բայց ցրված են յերկար ու ձանձրալի նամակի մեջ: Տրաֆարետը ներկայացնում է սովորական թղթի մի թերթ, վրան անցքեր կտրուված, վորոնց մեջ յերևում են տակը գրված գրութեան անհրաժեշտ բառերը: Այդ անցքերը, վորոնք կազմում են մի վորոշ նկար, ինչպես նաև նրանց հեռավորութիւնը միմյանցից ու լուսանցքներից պետք է պահպանվի գործակալի հիշողութեան մեջ, վորը հաղորդագրութիւնը գրելիս պետք է հաշիւ առնի տրաֆարետի անցքերի չափը: Յուրաքանչյուր գործակալ պետք է իր տրամադրութեան տակ ունենա տրաֆարետի 6 կամ 7 վարիանտ, իր գաղտնի հաղորդագրութեան համար անհրաժեշտ բառերի բոլոր տեսակի կոմբինացիաները նրանց հետ հարմարեցնելու համար: Միևնույն նամակի մեջ կարող է լինել յերկու կամ յերեք հաղորդագրութիւն, գրված ընտանեկան գործերի մասին պատմող տողերի արանքում: Այդ հաղորդագրութիւնները կարգալու համար անհրաժեշտ է ունենալ յերկու տարբեր տրաֆարետ: Նամակն ստացողը, յետե նա տապալկելու վախ չի կրում, կարող է պատրաստի վիճակում ունենալ անհրաժեշտ տրաֆարետները: Նամակի առաջին ֆրագի մեջ շարքաթվա վորևե ուրիշ մասին արված հիշատակումը ցույց է տալիս, թե նա տրաֆարետների վոր կոմբինացիան պետք է ոգտագործի. այնուհետև նա տրաֆարետը դնում է մատնանչված եջի վրա և կարողում գործակալի հաղորդագրութիւնը: Այն դեպքում, յերբ վո՛չ նամակ գրողը, վո՛չ նրա հասցեատերն իրենց մոտ չեն կարող պահել նամակը մեկնաբանող տրաֆարետ, անհրաժեշտ է, վոր նրանք չափազանց ստույգ կերպով հիշեն տրաֆարետի պատկերը:

Իր տրամադրութեան տակ բացարձակապես հուսալի կողմ կամ չիֆր ունեցող գործակալը հաղորդագրութիւններն ուղարկելիս (միևնույն է՝ փոստով, թե հեռագրով) պետք է հաշիւ առնի հասցեյի վտանգավոր պրոբլեմը: Գրաքննիչները հակահետախուզութեան գործակալների միջոցով չափազանց ստույգ տեղեկութիւններ են ձեռք բերում չեզոք յերկիրների քաղաքներում հակառակորդի ունեցած հետախուզական կենտրոնների մասին և հիշում են կասկածելի նամակների կամ հեռագրերի հետ կապված

բոլոր հոսքերը: Համաշխարհային պատերազմի ժամանակ դեմաճանական գործակալները հրահանգի համաձայն հաղորդագրութիւնները հասցեագրում էյին գոյութիւն չունեցող բելգիական գերիների անունով, վոր վերին աստիճանի սրամիտ հնարք էր. բայց գերմանական մի շարք գործակալներ, վորոնք իրենց ներկայացնում էյին վորպես կոմիսիոներներ, հակայական սխալ էյին գործում, հայտարարելով, թե իրենք յեղել են հոլանդական ու շվեյցարական ֆիրմաների գործակալներ, ըստփորում մատնանչելով այնպիսի ֆիրմաների անուններ, վորոնք արդեն հիշատակված են յեղել նրանցից առաջ ձերբակալված գործակալների կողմից, սակայն վորոնց ձակատագիրը նրանց անհայտ էր: Արձակուրդից հետո Յրանսիա վերադարձող անգլիական դինվորներին խնդրում էյին նամակ տանել իրենց հետ և այնտեղ դրել փոստարկղը: Անգլիացիներն ուրախութեամբ կատարում էյին այդ խնդիրը, առանց հաշիւ առնել, վոր իրենց միջոցով Յրանսիա տարվող նամակը չէր անցնում վոչ մի գրաքննութեամբ: Բայց միշտ չէ, վոր նամակները կապի գլխավոր միջոց են յեղել. պատահել են դեպքեր, յերբ հաղորդագրութիւնը գրված է յեղել իբր թե շուկա ուղարկվող ձվերի և մագեր խոսքով լու ունեղի վրա: Վերջին դեպքում մակագրութիւնն արվում էր թթվուտով, ապա յերեսից ծածկվում արհեստական ժանգի բարակ շերտով:

Լոնդոնում բրիտանական գործակալները բռնում և հետազոտում են միքանի նոտաներ, վորոնք հասցեագրված էյին Յուրիխում բնակվող մի կասկածելի անձնավորութեան: Այդ նոտաները ներկայացնում էյին յերկու յերգ, մեկը «Միրո սանդուխդ», մյուսը՝ «Դուբլինի ճանապարհին» անունով, իսկ ուղարկողը հասցեն հետևյալն էր՝ «Ջեկ Կոմմինգս, Պալաս թատրոն»: Այդպիսի անունով մարդ բնավ գոյութիւն չունեցող, բայց վոր հակահետախուզութիւնը գործ ուներ հակառակորդի գործակալի հետ, այդ պարզվեց, յերբ յերեակիչը նոտայի դժերի արանքում հայտաբերեց մի հաղորդագրութիւն Անգլիայում կատարված հետազոտութիւնների վերաբերյալ: Հետագայում ապացուցվեց, վոր «Կոմմինգսի» իսկական անունը Կուրտենդե Հիսթախ է: Այդ մարդը բրիտանական հպատակութիւն ընդունած մի ավստրիացու վորդի յեր, տաղանդավոր վորդավիլային դերասան, կոմեդիայի հեղինակ, Փոկուսնիկ և տրյուկներ գործող հեծանվորդ: Պատերազմ հայտարարվելու պահին նա հրավիրված էր գերմանական մյուզիկ-հոլերում, վորտեղից արդեւագրվում է Ռուլե-



բենե. այնտեղ նրան հրահրում են զբաղվել գործակալական հե-  
տախուզութեամբ, թույլ են տալիս դուրս գալ Գերմանիայից և  
ճանապարհորդել՝ «առողջութունը վերականգնելու» համար:  
Բայց շնորհիվ այն բանի, վոր նա էր հաղորդագրութուններն  
ուղարկում եր կասկածելի հասցեների ցանկում յեղած հասցե-  
յով, այդ ճանապարհորդութունները նրան հասցրին ցմահ բան-  
տարկութեան:

Տեսնելով, վոր փոստային գրաքննութունն այդչափ վտան-  
գավոր բան է գաղտնի գրադրութեան համար, գերմանական հե-  
տախուզական կենտրոններն սկսում են Ֆրանսիայում գործող ի-  
րենց գործակալներին հրամաններ ուղարկել յերաժշտական կողմ  
միջոցով, ըստվորում յերգերի բառերը մնում էյին անփոփոխ,  
բայց նոտաներն ամեն անգամ փոխվում էյին: «Նլզասի անմո-  
ռուկ» անունով յերգն ուղարկվում եր վորպես պարբերական  
հրատարակութուն, և չնայած վոր ոտարեկրկյա մի յերաժշտա-  
կան հրատարակչութեան կողմից ուղարկվում էյին այդ յերգի  
տասնյակ նոտաներ, յերկար ժամանակ վոչ վոք չեր ել կասկա-  
ծում, թե դա հետախուզական բյուրյետեն է: Բայց Ֆրանսական  
մի նավահանգստում ասրգամ եր վոմն կասկածելի անձնավորու-  
թյուն, վորի փոստը մանրագնին կերպով ստուգվում եր: Ամեն  
չարաթ նա այլ նոտաների թվում ստանում եր նաև «Նլզասի  
անմոռուկ»-ի մի որինակ: Այդ նոտաներն ուսումնասիրվում են և  
լուսանկարվում: Պարզվում է, վոր յերգի տեքստը միշտ նույնն  
է, իսկ յերաժշտութունը՝ յուրաքանչյուր որինակի մեջ փոխ-  
ված: Նոտաները հանձնում են վերձանող մասնաղետի, վորը բաց  
է անում գաղտնիքը:

Գործակալները յերբեմն ուղտագործում էյին նկարով բացիկ-  
ներ: Այդպիսի բացիկները փակցնում էյին ուժեղ ճնշում կիրա-  
ռելով, ըստվորում մեկ կողմում սովորականի պես լինում եր  
հասցեյի ու նամակ գրելու տեղը, մյուս կողմում՝ նկարը, իսկ  
նրանց արանքում ամենաբարակ թղթի մի թերթ՝ հաղորդագրու-  
թեամբ կամ քարտեղով: Հարավային Ֆրանսիայում բնակվող  
թեամբ կամ քարտեղով յեր հաղորդագրութունները գրել է  
գերմանական մի գործակալ իր հաղորդագրութունները գրել է  
հատուկ թանաքով, ամենաբարակ փայլարի վրա, իսկ այնու-  
հետև այդ թափանցիկ շերտը խնամքով փակցրել է ակնոցի ապա-  
կիններին: Բարակ թերթի փոքր կտորների վրա հաղորդագրու-  
թյուն գրելը սովորական բան եր: Շատ հետախուզներ այդ յե-  
ղանակով գրված փաստաթղթերը պահում էյին իրենց ծխամոր-  
ճի մեջ՝ ծխախոտի տակից. վտանգի դեպքում գործակալը միշտ

կարող եր ծխել ծխամորճն ու վոչնչացնել վտանգավոր փաստա-  
թուղթը: Բայց յերբ հրապարակ յեկավ նոր մեթոդը՝ ակնոցի  
ապակու վրա փայլար փակցնելը, շատ գործակալներ հրաժար-  
վեցին ծխամորճից:

Գաղտնի գործակալները խիզախորեն վտանգում են իրենց  
կյանքը, գործելով վոգեկորութեան ազդեցութեամբ: Նրանց հա-  
կառկորդները՝ հակահետախուզութեան գործակալները՝ նույն-  
պես վոգեկորութեամբ համակված են լինում, իսկ յերբեմն ել  
համբերութեամբ աշխատում են ամիսներ, առանց վորեւե գործ  
ներկայացնելու զինվորական դատարան:

Համաշխարհային պատերազմի ժամանակ Փարիզում ասրում  
եր մի կասկածելի մարդ, վորը յերկար շարաթներ վարկաբեկիչ  
վորեւե քայլ չեր կատարում: Բայց վերջիվերջո գտնվում է մի  
իր, վորը բաց է անում հարկավոր թեյը: Այդ մարդն ասրում  
եր մի համեստ հյուրանոցում. նրա սենյակում բազմիցս կատար-  
ված խուզարկութունների շնորհիվ նկատվում է, վոր նա ունի  
միջանի թաշկինակ, վորոնք յերբեք չի տալիս լվացարարին՝ լվա-  
նալու: Այդ թանգարժեք թաշկինակները ներծծված էյին քիմիա-  
կան մի նոր նյութով, վորը մինչ այդ հայտնի չեր զաշնակից-  
ներին: Հարկ յեղավ մոտ յերկու ամիս՝ հայտաբերելու համար  
Ֆրանսական գործակալի կողմից նույնանման մի ուրիշ թաշկի-  
նակով փոխարինված այդ թաշկինակի մեջ պարունակվող լու-  
ծույթի դոզան: Զարմանալի չէ, վոր այդ մարդուն հաջողվում  
եր մոլորութեան մեջ գցել գաղտնի հետախուզութեան գործա-  
կալներին: Հակահետախուզութեան գործակալների ու քիմիկոս-  
ների արտասովոր համբերատարութեան շնորհիվ նոր թանաքը  
վերջապես հայտաբերվեց, վորից հետո այդ գործակալն իր թաշ-  
կինակներով, ինչպես նաև շատ ուրիշ գործակալներ, հանկար-  
ծակի ըրեվեցին և բռնվեցին հանցանքի մեջ:

Կառուցում յեղած գերմանական մի մեծ ռադիոկայան պար-  
բերաբար կարծես բռնված եր ինչ-վոր տեղահանութեամբ և  
յեթերն եր ուղարկում բառերի անխմաստ հոսանքներ, վորոնք  
արտասանվում էյին սարսափեցուցիչ արագութեամբ: Յենթա-  
գրվում եր, վոր այդ արվում է զաշնակիցների ռադիոկայան-  
ների աշխատանքը խանդարելու համար: Ինչպես և մյուս բոլոր  
գերմանական ռադիո հաղորդումները, այդ կայանի տարածած  
խառնաչիթութուններն ել գրի յեն անվում Փոնոգրաֆի մի-  
ջոցով: Մի անգամ մի սպա գնում է այդ վայրիկը և փորձում հա-  
ղորդման մեջ գտնել կողի նմանվող վորեւե բան: Մինչդեռ նա

լսում եր, Փոնոգրաֆի դանոագեցնում է ընթացքը, և առ ժամանակ ել հենց սպան վերջապես հասնում է նպատակին.—պարզվում է, վոր հաղորդման արագությունը ըողարկում եր այն հատուկ կողք, վորն ոգտագործվում եր Հարավային ու կենտրոնական Ամերիկայում յեղած գերմանական գործակալներին հրահանգներ ուղարկելու համար: Այդ սրամիտ հնարքը հայտնի յե դառնում միայն Փոնոգրաֆի ընթացքի պատահական դանդաղելու շնորհիվ:

Հիշենք բրիտանական գլխավոր-նկարչի հայտնի պատմությունը, վորը մի անգամ Փլանդերիայում մի հողմաղացի ուրվագիրն անելիս նկատում է, վոր հողմաղացը պտտվում է քամուն հակառակ: Պակաս հուշակավոր չե նաև մայր ու աղջիկ հետախույզները որինակը, վորոնք յերկար տարիներ ապրելիս են յեղել մի կարևոր ստրատեգիական կետում, Ամյենից վոչ հեռու: Այդ յերկու կանայքն ել ծագումով գերմանուհիներ էյին և գերմանական գործակալներ, վորոնք Ֆրանսիա էյին ուղարկված 1901 թվականին: Նրանք անկասկած կարող էյին շատ բան տեսնել, վոր անվորասլի յեր գերմանական հետախույզների համար 75 մղոն հեռավորության վրայից: Նրանք հնարում են գերմանական ողաչուններին աղբանջաններ տալու հետևյալ մեթոդը. բակում պարանի վրա շոր էյին փռում չորանալու համար: Բայց այդ կանայք շատ շուտով կասկած հարուցեցին: Ֆրանսական հակահետախույզության մի գործակալ, վորը հսկում եր նրանց վրա, չեր կարող համաձայնել այն մտքի հետ, վոր նրանք յերկու հոգով կարող են այնքան շատ սպիտակեղեն կեղտոտել: Նա նկատում է նաև, վոր հաճախ իրերը փռվում են նաև վատ յեղանակին, բտտվորում փռված շորերը համարյա բոլորն ել վառ գույներ ունեն: Ֆրանսիայի կանայք, վորոնք 900 հազար կյանք էյին կորցրել, սովորաբար ման էյին դալիս սև հագուստով, կամ թե հագնում էյին մուգ գույնի շորեր, տուփածներին վիրավորած չիներու համար: Կասկածներն իրականություն դարձան. գերմանական ինքնաթիռները թռչում էյին շատ ցածր, և ողաչունները մեծ հետաքրքրություն էյին ցուցաբերում դեպի մշտապես լվացվող կարմիր, կանաչ ու նարնջագույն հագուստները: Շուտով այդ յերկու կին-գործակալները, վորոնք 1901 թվականից սպասում էյին պատերազմին, ստիպված յեղան նրան սպասել բանտախցերում:

Համաշխարհային պատերազմի վերջին ամիսների ընթացքում զանազան գաղտնի հետախույզություններ հանդիպեցին ազ-

գանջման նոր մեթոդների, յերբ աղբանջանները տրվում էյին ինֆրա-կարմիր և ուլտրա-մանուշակագույն ճառագայթներով: Ինֆրա-կարմիր ճառագայթները լույսի յերկար ալիքներ են, վորոնք լույսի գրգիռ չեն առաջացնում ու կարող են ուղարկվել հատուկ աղբանջանային լամպով և մնալ աննկատելի ամենքի համար, բացի հատուկ եկրան ունեցող դաշտային հեռադիտակով գլխաված դիտողից: Մթնոլորտային ամենաբարենպաստ պայմաններում, արևի պայծառ լույսի ժամանակ այդ աղբանջանները հաղորդվում էյին ութ մղոն հեռավորության վրա: Այժմ մենք տեսնում ենք, թե կապի ասպարեզում ինչպիսի հաղթանակներ է ձեռք բերում հետախույզությունը և ինչպիսի կախարդական միջոցներ ունի նա իր տրամագրության տակ ապագա կոնֆլիկտների համար:

Հետախույզը փորձում է իր աշխատանքի համար ոգտագործել ժամանակակից տեխնիկայի բոլոր նվաճումները: Մենք չենք կարող գուշակել կապի այն մեթոդները, վորոնցով կոզտվեն հետախույզներն ապագայում, բայց կարծում ենք, վոր այդ մեթոդներն իրենց դիտական հնարամտության տեսակետից այժմ ֆանտաստիկ կթվային մեզ:

### ՀԱՎԱՇԵՏԱԽՈՒՁՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ շՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ Ե ՀԵՏԱԽՈՒՅՁՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես արդեն տեսանք, ռազմական հետախույզությունը կրում եր վորոչ չափով սիրողական բնույթ և սպանների համար սպորտի նման ինչ-վոր մի բան եր այնքան ժամանակ, մինչև վոր Ֆրիդրիխ Մեծն այն կարծիքը հայտնեց, թե ավելի լավ է այդ աշխատանքի համար վարձել ու պատրաստել դյուզացիներ, քան վտանգի յենթարկել դյուզացու զգեստ հագած գեներալների ու մարշալների կյանքը: Զինվոր-արքան առաջինն եր, վոր հետախույզությանը ավեց խստորեն մտածված սիստեմի բնույթ: 40 տարի հետո յերկու հնարամիտ ֆրանսացիներ, Ռեալը և Դեմարեն, Նապոլեոնի տաղանդավոր, բայց անկայուն վոստիկանական մինիստր Փուլչեյի ավագ լեյտենանտները, պատահաբար ստեղծեցին հետախույզների վրա հսկողություն ունենալու ժամանակակից սիստեմը:

Հակահետախույզությունը հակադրվում է հետախույզությանը, իսկ հետախույզն ու հակահետախույզը հարձակվող և պաշտպանվողներ են: Հասարակ կլասիֆիկացիան հետախույզությունը համաձայնում է հանցավոր գործունեյության հետ, իսկ հակահետա-

խուզուեթյունը՝ հանցագործութեան դեմ մղվող կազմակերպված պաշտպանութեան հետ: Բայց դերերի այդպիսի բաշխումը վոչ միայն ճիշտ չի լուսաբանում շատ հետախուզյունների աշխատանքը, վորոնց սխրագործութունների մասին վերևում խոսեցինք, այլև հակահետախուզի գործունեությունը սահմանափակում է տարրական առաջադրանքներով: Գաղտնի հետախուզութեան մեջ էլ, ինչպես պատերազմի ժամանակ, ակտիվ հարձակումը հաճախ լավագույն պաշտպանութունն է հանդիսանում: Հակահետախուզին ուղտվում է ամեն տեսակ զենքից ու բոլոր հնարքներից, վորոնք ողտագործվում են հետախուզյունների կողմից: Հակահետախուզութունը հետախուզութեան ամենահմուտ ձևն է. այդ՝ հակոզութունն է հենց հետախուզյունների վրա, ըստվորում հակահետախուզյուն էլ պետք է հրաժարվի ամեն տեսակ շաղակրատութունից և վործի գաղտնի:

Լրտեսութեան մի սենսացիոն գործ, վորը 1910 թվականին հսկայական աղմուկ բարձրացրեց ամբողջ Յեւրոպայում, իրականում հակահետախուզութեան մեթոդների ցուցադրումն էր: Բերտրամ Ստյուարտը պրոֆեսիոնալ հետախուզ չէր և բրիտանական կանոնավոր բանակի ընդունակ սպա: Նրան առաջարկում են տեղեկութուններ ձեռք բերել գերմանական ամբուլթյունների և ռազմական գրութեան մասին՝ կղզիներում ու մայր ցամաքում, Եմդենից մինչև Կուկսհաֆեն—գերմանական ծովային այդ միակ մասը, վորն անհանգստացնում էր Ուայտհոլլի շտաբին: Ստյուարտին հրամայում են մնալ Ճրիսլանդիայում, տեղեկութուններ հավաքել հոլանդական կողմից և անձամբ դիտել այն ամենը, ինչ հնարավոր է դիտել, առանց Գերմանիա թափանցելու. բացի դրանից, նրան թուլլատրում են առատորեն վարձատրել բոլոր նրանց, ովքեր արժեքավոր տեղեկութուններ կհազորդեն: Ստյուարտը փառասեր, յեռանդուն մարդ էր և վորպես պրոֆեսիոնալ հետախուզ չէր բավարարվում հետախուզութեան որչեփ վերաբերյալ հեռու տարածութունից յերկրորդ անձնավորութունների միջոցով ստացվող ինֆորմացիաներով: Նա գերազանցում է իր լիազորութունները, անցնում սահմանը և հանդիպում ինչ—վոր մարդու, վորը նրան թվում է վստահութեան արժանի և արժեքավոր տեղեկութուններ ունեցող: Նրանք գնում են Բրեմեն, վորտեղ պարզվում է, վոր այդ մարդը գերմանական հակահետախուզութեան գործակալ է: Բրեմենում Ստյուարտին ձերբակալում են և դատապարտում վեցամյա բանտարկութեան: Գերմանական մամուլն այդ միջադեպը մեկնա-

բանում է վորպես բրիտանական ագրեսիայի մի ահեղ ակտ: Այդ դատավարութեան շնորհիվ նույն թվականին հաջողվում է ստիպել ռայխստագին սպառազինման համար զղալիորեն ավելի մեծ գումար հաստատելու: Անգլիական թագավորի Բեռլին այցելելու առնչութեամբ գերմանական կայսրը ներումն է շնորհում Ստյուարտին:

Ուրիշ պայմաններում, և գլխավորապես վերջին պատերազմի ժամանակ, հակահետախուզին հարկ էր լինում մուտք գործել թշնամու տերիտորիան: Յերբեմն նա հետապնդում էր սահմանից դուրս սողոսկած հետախուզին: Ուրիշ դեպքերում նա մտնում էր այդ վտանգավոր գործի մեջ՝ գտնելու համար այնպիսի ապացույցներ, վորոնք կարող էին բանալ հետքերը հաղաղկորդի այն գործակալների, վորոնց գործունեությունը նա մասնակիորեն հայտաբերել էր:

Այսպիսով, համաշխարհային պատերազմի ընթացքում արևմտյան պատերազմող պետութունների հետախուզյուններն ու հակահետախուզյուններն ուղղակի ֆանտաստիկ գործունեություն էլին ցուցաբերում Բեռլինում, Յյուրիխում, ժնեվում և Շվեյցարիայի համարյա մյուս բոլոր մասերում: Չնայած վոր չվեյցարական բանակն ու վոստիկանութունը պատերազմի սկզբում մեծ մասամբ Գերմանիայի կողմն էլին, չվեյցարացիները սակավ դեպքում էլին ձերբակալում՝ Փրանսական, բրիտանական կամ ամերիկյան գործակալներին, թեև տեղյակ էլին նրանց գործունեությունը: Բայց գերմանական գործակալները, ինչպես, որինակ, Կորը, Փոն—Սոմմերը, Կենիգերը, Մայերը և շատ ուրիշները, ձերբակալվում են և բանտարկութեան դատապարտվում: Դա հետևանք էր այն բանի, վոր դաշնակիցների գործակալները կարողանում էլին փաստական ապացույցներ ձեռք բերել ու ներկայացնել չվեյցարական իշխանութուններին այն մասին, վոր գերմանական հետախուզյուններն սպառնում են նաև Շվեյցարիայի անվտանգութեանը: Մինչդեռ գերմանացիներին վոչ մի կերպ չէր հաջողվում չվեյցարացիներին համոզել, վոր բրիտանական, Փրանսական, իտալական կամ ամերիկյան գործակալներն իրականում զբաղվում են վոչ թե հակահետախուզութեամբ, այլ սպառնում են արպիական այդ փոքր պետութեան չեզոքութեանը:

Քիչ է պատահում, վոր հակահետախուզութեան մեջ աշխատող սպան հետախուզի համեմատութեամբ առավելութուններ վայելի, և ի լրացումն այդ ամենի նա պետք է պատրաստ լինի գեմ—հանդիման կանպնել ծուղակի մեջ գցված գործակալի կատա-

զուլթյան առաջ: Հայտաբերված ու փակուղու մեջ գցված գործակալը հասկանում է, վոր բանը նրա կյանքին է վերաբերում, և նա, յեթե կարող է, դիմում է մատնության, սպանության, խաբէյության և այլն: Վո՛չ հետեից դաշույն խրելը, վո՛չ կաշառքը և առհասարակ վո՛չ մի հանցագործութուն չի մեծացնի նրա պատիժը, բայց դրա փոխարեն կարող է փրկութուն բերել նրան:

Հակահետախուզության մեջ ծառայության մտնողը պետք է տենենա մի շարք հատկութուններ՝ համեստութուն, համարձակութուն, համբերատարութուն, սուր միտք, ըմբռնողութուն, հնարամտութուն, պատկերացում, ինտուիցիա, աննկուն աշխատունակութուն, աղնլութուն և լեզունը ուսումնասիրելու ընդունակութուն: Յուրաքանչյուր հակահետախուզ պետք է զգաստ լինի նաև իր աշխատանքի ընկերներին վերաբերմամբ: Դա անհրաժեշտ է, վորովհետև հետախուզիները թափանցելով հակառակորդի գաղտնի հետախուզության մեջ, միշտ ձգտում են ղեպի հակահետախուզութուն:

Տեսնենք, թե ինչպես եվերտ ազգանունով մի անդլիացի աշխատանքի խցկվեց գերմանական հետախուզության մեջ: Պատեքազմի ժամանակ բրիտանական, ֆրանսական և ուրիշ հետախուզութունների գործակալներ ծանոթանում էյին հետախուզական զայրոցներին Շարլոտաենբուրգում, Վեդելում, Անտվերպենում, Բեռնում ու Ֆրեյբուրգում. նրանք ուղևորվում էյին այդ տեղեքը վորպես չեզոք յերկիրների քաղաքացիներ, վորոնք կամենում են վաճառել իրենց ծառայութունները Գերմանիային: Բայց շատ հազիվ էր պատահում, վոր բացի գերմանացիներից վորևե մեկը կարողանար աշխատանքի ընդունվել գերմանական հակահետախուզության մեջ: Եվերտի բախտն ուղղակի կտրեց: Նա գիտեր Գերմանիան և ազատորեն խոսում էր գերմաներեն լեզվով: Կարողանալով թափանցել գերմանական ուղղական հետախուզության մեջ, նա առաջադրանքը կատարեց նաև հակահետախուզության դժով հոլանդական սահմանաչեղտում ու մերձհոլանդական մարզում:

Գերմանական հետախուզության ղեկավարները տեղեկութուններ ստացան բրիտանական ինչ-վոր խիզախ գործակալի մասին, վորն ուղղակի իրենց քթի տակ, Նասենի չըջակայքում թաքցվող ինֆորմացիաներ է ձեռք բերում: Այդ՝ Եվերտն էր: Բայց վորովհետև նա յեռանդուն հակահետախուզի համբավ էր վայելում, ապա նրան հրամայեցին գտնել անդլիացուն: Այժմ

բանը ծիծաղելի յե թվում, բայց այն ժամանակ այդ մեծ վտանգ էր ներկայացնում Եվերտին համար: Նա կարողացավ հաղթահարել բոլոր արգելքները և չտապալվեց: Այս մասին մինչև այսօր էլ չեք իմացվի, յեթե հաշտութունը կնքվելուց հետո նա ինքը չպատմեր իր աշխատանքի մասին:

Հակահետախուզությամբ, վորպես ոժանդակ գործ, պատկավում էր նաև Շտիբերը: Ժամանակ առ ժամանակ նրա գործակալները հարձակվում էյին հակառակորդի վորևե միայնակ դեմբախտ գործակալի վրա: Բայց Շտիբերի մասին պետք է արդարութունն ասել. նա ապացուցեց, վոր հակահետախուզութունը իր գործողութունների մեջ պետք է լինի անողոք և զգույշ: Նա պնդում էր, թե պատերազմի ժամանակ հետախուզը պետք է իրավունք ունենա սպանելու հակառակորդի գործակալին այնպես, ինչպես զինվորը կարող է կրակել հակառակորդի բանակի զինվորի վրա, յեթե նա չի հանձնվում:

Հակառակորդի գործակալը, պնդում էր նա, պետք է գնդակահարվի, ինչպես հակառակորդը կռվի դաշտում: Բայց յեթե նա սպանված չէ, այլ վիրավորված ու դերի վերցված, նա պետք է դատվի և յենթարկվի մահապատժի: Թող նա գնդակահարվի այն բանի համար, վոր «հարձակվել է վիրավորներ փոխադրող տրանսպորտի վրա», «կրակել է» դումակի կամ գնեներալի ու նրա աղյուտանտների վրա: Կարճ ասած, մահապատժի հիմքը պետք է լինի այնպիսին, վոր մահապատժի յենթարկվողը համակրանք չառաջացներ և հերոսի համբավ չվաստակեր: Շտիբերը գործնականում իրականացնում էր իր համոզմունքը, այն է՝ պատերազմը կազի դադանի հետախուզութուններից նա, վորն ամենից ավելի անողոք է:

Բայց հակահետախուզության իսկական արվեստը (կամ գիտութունը) ստեղծվել է Ֆրանսիայում: Նապոլեոնի դադտնի վոստիկանության գործակալները՝ Ռեալը և Դեմարեն հետախուզութունը դարձրին բավականաչափ անողոք, բայց միևնույն ժամանակ այն խստորեն պաշտպանողական բնույթ էր կրում և այդ անհրաժեշտ էր, անտարակույս, ոտարերկրյա բաղմամբով գործակալներով հեղեղված յերկրի համար: Բոնապարտի իշխանութունը միշտ էլ յեղել է զինվորական իշխանութուն: Նրա կայսրության հիմքերը դրված էյին իրեն նախորդող ռեժիմների ծխացող ավերակների վրա: Հեղափոխականները նրան ատում էյին վորպես միապետի—իր հայրենիքը ձնշողի, իսկ ռոյալիստները, եմիգրանտները, յերկրից վռնված արխտոկրատներն ու բոլոր

տեսակի շառլատանները դավադրութիւններ եյին կազմակերպում նրա դեմ, լրտեսում եյին նրան, վորպէս ռազմական ուժեր պատրուի:

Ինչպէս մենք արդէն տեսանք, լայնորեն կազմակերպված, համարձակ ու խելացի հետախուզութիւնը պահանջում է իսկահան հակահետախուզութիւն ստեղծել:

## ՀԱԿԱՅԵՏԱՌՈՒՅՁՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԻԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Համաշխարհային պատերազմի ժամանակ հետախուզների գործունեությունը դարձավ միջազգային պրոբլեմ, վորը հետաքրքրում էր բոլոր պատերազմող և համարյա բոլոր չեղոք պետություններին, հարկադրելով նրանց ձեռք առնել բոլոր միջոցներն իսկական հակահետախուզութիւն կազմակերպելու համար: 1916 թվականին այնպէս, ինչպէս Նապոլեոնի որերին, հետախուզութիւնը կյանքի կոչեց հակահետախուզութիւնը: Ետևում հետախուզների սենսացիոն նվաճումները հազվադեպ յերևույթ գարձան: Հակահետախուզութիւնն ուղտադործում էր կազմակերպման ասպարեզում ունեցած իր բոլոր առավելութիւնները. նա իր կողմն էր գրավում բանիմաց մարդկանց և գործադրում էր հարձակողական տակտիկա: Ռուսաստանում հարկ էր լինում գործ ունենալ հայտնի դավաճանների հետ, վորոնք կաշառված էյին հակառակորդի կողմից և կարողանում էյին ճարպկորեն խրամատել: Հակահետախուզութիւնը թեպետ չհաջողվեց հայտաբերել բոլորին, բայց և այնպէս նրանցից շատերը դատի տրվեցին: Ավստրո-Հունգարիայում հարկ էր լինում հսկել նրա կազմի մեջ մտնող բազմաթիվ ժողովուրդների վրա:

Ֆրանսիայում բրիտանական և ամերիկյան եքսպեդիցիոն ուժերին հարկ էր լինում հակահետախուզութիւն սխտեմը հանապատրաստից ստեղծել թեպետ և ոտար, բայց վոչ թշնամի բնակչութիւն միջավայրում: Ռազմական բոլոր ձեռնարկումները յենթակա էյին պահպանման ոտար յերկրում, վորը հաճախ նույն գծավարութիւններն էր ներկայացնում, ինչ և հակառակորդի տերիտորիան: Բալկաններում ու Պաղեստինում անգլիական ու Ֆրանսական դադտնի սպասարկութիւնների պետերին վիճակվեց հենց այդ միևնույն դրութիւն մեջ ընկնել: Զարմանալի չէ, վոր ռազմական գործողութիւնների յեվրոպական ընդարձակ թատերաբեմում հակահետախուզութիւնը վերածվեց վիթխարի մի ու-

ժի, վորը շատ առաջ անցավ նախորդող բոլոր պատերազմներում աշխատած գործակալների ու գինվորական վոստիվանութիւն նվաճումներին:

Այն բոլոր հակահետախուզական կազմակերպութիւնների մեջ, վորոնք կյանքի կոչվեցին համաշխարհային պատերազմի ժամանակ, բելգիացիների ստեղծած կազմակերպութիւնն ամենից ավելի կատարելագործվածն էր և պատմութիւն մեջ իր նմանը չունեցողը: Այդ կազմակերպութիւնն ստեղծվել էր անպաշտոն վերապով, հանապատրաստից և այնուամենայնիվ, նա Բելգիայի ու կուպցիայի ամբողջ ժամանակամիջոցում յեղավ միանշամայն կենսունակ կազմակերպութիւն: Գերմանական բանակը, վորը հիւանալի կազմակերպված էր ու պատրաստված, վորը չէր վախենում ճակատային գրոհներից, Լիեթից մինչև Անտվերպեն ունեցած հաղթական արշավից հետո, վորը տևեց 9 շաբաթից մի փոքր ավելի, ամբացավ տեղում, անտանելի ճնշում գործադրելով 7 միլիոնանոց ժողովրդի վրա: Զորակոչային տարիքի հասած յերիտասարդ բելգիացիները փախչում էյին Բելգիայից, Ալբերտ թագավորի բանակի մնացորդներին միանալու համար, վոր այդ ժամանակ գտնվում էր դաշնակիցների ճակատի ամենաձախ թեթևութիւնում: Արտաքուստ հնազանդեցրած այդ յերկրում թագնված էյին մեծ թիվով անգլիական ու Ֆրանսական վերապոր գինվորներ, վորոնք վերապորվել ու թողնվել էյին այն պահին, յերբ նրանց զորամասերը հետ էյին շարտվել Ֆրանսիա: Այդ վերապորները չէյին ցանկանում գերել և ահա գնդապետ Զիբսի ոգնութիւնը ու նրա խորհրդով միսս Կավելը, դոկտոր Բուլլը, Էլխան և Էլխանուէի դե-Կրուանները կազմակերպում են նրանց փոխադրումը սահմանի վրայով: Այդ աշխատանքը հակասում էր նվաճողի ռազմական որենքներին: Վախենալով գերմանական դադտնի հետաձական ուրենքներին, Բելգիացիները կազմակերպում են հակահետախուզութիւնից, բելգիացիները կազմակերպում են հակահետախուզութիւն, վորը շատ դեպքերում ժամանակին տեղեկութիւններ էր ստանում պատրաստվող հարձակումների ու հետապնդումների մասին և շատ անգամ փրկում մարդկանց:

Բելգիայում գտնվող գերմանական հետախուզական սպասարկութիւնը միքանի տարվա ընթացքում գործում էր Կուերի և Տիգենի ղեկավարութիւնում: Նա ուներ գործակալներ, վորոնք պակաս չափով հայրենասիրաբար չէյին տրամադրված, քան բելգիացիները: Սակայն նվաճողի դրութիւնը պարտվածի դրութիւնից տարբերվում է նրանով, վոր վերջինս գտնվում է իր անփական տերիտորիայում և իր տրամադրութիւն տակ ունի հա-

դարավոր մարդիկ, վորոնք ձգտում են վրեժ լուծել հակառակորդից: Բեղբիական դավադիրներն առավելագույն ճարպկութուն են ցուցաբերում, վորպեսզի խորամանկութամբ դերազանցեն իր կատարելութամբ հուշակ ձեռք բերած դերմանական սիստեմից: Գաղթականներին ողնութուն ցույց տվող կոմիտեյի շուրջը կազմակերպվում են միջանկի խմբեր, վորոնք գործում են նույն այդ ուղղութամբ: Սկզբում բոլոր բեղբիացիները դաշնակիցների ծայրահեղ ձախ թևն էյին ուղևորվում անտառներէ միջով, բայց 1914 թվականի հոկտեմբերից հետո այդ ճանապարհը փակվեց. ուղղամական գիծը ձգվեց մինչև ծով. բեղբիացիներն ստիպված յեղան ուղևորվել դեպի չեղոք Հոլանդիա՝ Բրյուսսելի վրայով: Այդ խմբերի մարդիկ վերին աստիճանի յեռանդուն էյին ու հնարամիտ: Չորս ամսվա ընթացքում նրանք սահմանն անց են կացնում 3000 հոգի, իսկ մյուսները նույն այդ ժամանակամիջոցում ավելի յերկար ու ավելի վտանգավոր ճանապարհով փոխադրել էյին 800 հոգի:

Արման Ժաննի դատավարության ժամանակ Մոնսոն 1922 թ. մարտին առաջին անգամ բացահայտվեց բեղբիական հակահետախուզության կատարելութունը: Իրադեկիչ Ժաննը չափազանց չմտածված կերպով պարծենում եր նրանով, վոր մատնել է Նեղիտ Կալելին և մեղաակից է 126 բեղբիացու, Փրանսացու և անգլիացու դատապարտմանը դերմանական դատարանի կողմից: Հաշտութուն կնքվելուց հետո նա անհայտացավ Լյեթում դրաղեցրած տնից և միջանի ամիս անց հայտաբերվեց Մոնսոն, վորտեղ նա աշխատում եր դերմանացիների կողմից 15-ամյա տաժանակիր աշխատանքի դատապարտված մի փաստաբանի դրասենյակում: Հաղորդում էյին, վոր Ժաննը մատնել է մի մարդու, վորը նրա բարերարն է յեղել: Գերմանացիների նահանջից հետո Կեմբրում գտնված արխիվները մերկացրին Ժաննին. Բրյուսսելում, Բերլինում փողոցի վրա գտնված հետախուզական կենտրոնի դերմանական հետախուզության արխիվն ել հաստատեց այդ մարդու դավաճանական գործունեյութունը: Դատարանում Ժաննը չկասկածելով իր համար կործանարար հանցանքների կույտի առկայության վրա, սկսեց պաշտպանվել, վկաներ պահանջելով և իրեն ներկայացված բոլոր մեղադրանքներից հրաժարվելով. ազմկարար ու լպիրջ վարքով նա իր դեմ գրգռեց դատարանում բոլոր ներկա գտնվողներին:

Այնուհետև հանդես յեկավ մի ջենտլմեն, և մեղադրյալը լիովին ջախջախվեց: Յելույթ ունեցողը Բրյուսսելի դատավոր Լակ-

րուան եր: Նա իր հայտարարություններով և համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված անցքերի նկարագրություններով սարսափել մեջ դրեց Ժաննին: «Այդ ամենը ձեզ վո՞րտեղից է հայտնի», — հարցնում եր մեղադրյալը: «Չե՞ վոր յես ձեր կողմն էյի», — ամեն անգամ պատասխանում եր Լակրուան: Ժաննի գործը վարող փաստաբան Ֆիլիյենի հետ միասին Լակրուան պատերազմի ժամանակ գլխավորում եր բեղբիական հակահետախուզությունը և այժմ այդ մասին հաղորդում եր դատարանին, վորպեսզի ամենքի համար պարզ լինի դատարանում բռնած իր դերքը: Լակրուան ու Ֆիլիյենը դիտեյին հակառակորդի բազմաթիվ դադանիքները և փաստացի հանցանքների ողնութամբ կարողացան մերկացնել Ժաննին: Դատարանում ներկա գտնված թրջթակիցներից մեկի խոսքերով՝ Լակրուայի յելույթից հետո «պաշտպանն ակտիվ մասնակցութուն չուներ դատավարության մեջ»: Ժաննը դատապարտվեց և հրապարակորեն մահապատժի յենթարկվեց:

Լոնդոնի վարսավիր Նոնստի և նրա թղթակիցների ձերբակալությունը, ինչպես վերևում տեսանք, այնպիսի հարված հասցրեց Մեծ Բրիտանիայում գործող դերմանական հետախուզությանը, վորից Գերմանիան յերկար ժամանակ չեր կարողանում շտկվել: Գերմանական հակահետախուզությունն իր հերթին կարողացավ Փրանսական շտաբին զրկել ստրատեգիական շատ կետերում ունեցած նրա գործակալներից: Գերմանացիներն սպասողական դրության մեջ էյին 1915 թվականի վաղ աշնանից մինչև 1916 թվականի հունվարը: Նրանք հետևում էյին կոմունիկացիոն դժերի յերկարությամբ և յերկաթուղային հանգույցների մոտ գործող 60-ից ավելի Փրանսական հետախուզյունների: Վերդենի վրա կատարած մեծ հարձակման նախորդակին դերմանացիները ձերբակալեցին այդ բոլոր հետախուզյուններին:

Այդ կործանիչ հարվածը Փրանսական հետախուզությանը վտանգավոր դրության մեջ դրեց, քանի վոր դաշնակիցների հրամանատարությանը անհրաժեշտ եր իմանալ, թե դերմանական հրամանատարությունը պահեստի ինչ գործասեր է ուղարկում պատերազմական գործողությունների դաշտը և միաժամանակյա հարձակում նախապատրաստում է արդյոք ուղղամական կատարելում այլ հատվածում:

60-ից ավելի հետախուզյունների մոչնչացումը մեծ նվաճում եր դերմանական հակահետախուզության համար: Համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում այդ նվաճումը մնաց անդերա-

դանցելի: Պետք է ճշմարիտն ասել, վոր Փրանսական հետախուզութեան տապալումը կազմակերպված էր վոչ թե գերմանական գործակալներէ, այլ ժաննի տիպի բելգիական ռենեգատներէ կողմից: Գործելով Շտրեբերի ուսմունքի համաձայն, Բրյուսելում և Անտվերպենում գործող գերմանական հետախուզութեան պետերն ազատում էին բանտերը, հակահետախուզողներ վորոնելով մարտական գոտիներէ և ոկուպացիայի յենթարկված տերիտորիաներէ՝ Բելգիայի, Ֆրանսիայի հյուսիսային ղեկարտամենտներէ, Լյուքսեմբուրգի, Ելզասի և Լոթարինգայի համար:

Բաղկաններում, Սալոնիկի ճակատում, վորտեղ ավելի շատ լրտեսութիւն և ինտրիզներ կային, քան կռիւ, Փրանսացիներն ու անգլիացիները հակահետախուզութեան համար ոգտագործեցին ժաննից ավելի մեծ սպառնալիք ներկայացնող հեների մի շայկա: Թվով շուրջ յերկու հարյուր մարդուց բաղկացած այդ խմբի գլուխ էր նշանակված մի յերիտասարդ անգլիական սպա, վորը մենակ ղեկավարում էր նրանց և վայելում էր անսահմանափակ իրաւունքներ: Անահ ու Նյասպիտե տղերքն ատրճանակները կողքներին, դանակներով ու հսկայական սուսերներով զինված կռվի էին դուրս գալիս ամբողջ համայնքով—կանանց, յերեսաների ու ծերունիներէ հետ միասին, գիշերները նրանք թափառում էին, սպանելով թշնամու զինվորներին և բռնելով բազմաթիւ հաղորդագրութիւններ:

Ֆրանսիայում թշնամին ավելի շատ հետախուզողներ ուներ, անկասկած, քան վորեւէ այլ յերկրում:

Անգլիացիները շուտով սերտ կապ հաստատեցին Փրանսական ժանդարմներէ, քաղաքացիական վտտիկանութեան, գաղտնի սպասարկութեան գործակալներէ և եքսպեդիցիոն ուժերի սպաների միջև: Հետագայում բոլոր դաշնակիցներն ընդորինակեցին այդ սխտեմը: Յետե անգլիացիները Ֆրանսիայում ոտգմական բնույթի հանցագործութիւններէ կատկած ունեյին վորեւէ մեկի հանդեպ, ապա համարյա բոլոր ղեկըներում իրազեկ էին դարձնում Փրանսական իշխանութիւններին: Ֆրանսական գաղտնի սպասարկութիւնը պահպանում էր շվեյցարական, իտալական ու իսպանական սահմանները, Միջերկրական ծովի նախահանգիտները, Փարիզը և ուրիշ կետեր, վորտեղ ոտգմասարքեր էին պատրաստվում: Անգլիացիները պահպանում էին իրենց ծովային բազաները Լամանշում, մարտական շերտը Բելգիայից մինչև Ամյեն (Փրանսական բանակի հետ միանալու տեղը) և ներքին

տերիտորիայի գդայի մասը, վորի մեջ մտնում էին հանգստացող գորամասերի ճամբարները, զինվորական հիվանդանոցները, հաղորդակցութեան դժերն ու մատակարարման բազաները: Այստեղ նրանք իրենց վրա վերցրին պահպանութեան պատասխանատվութիւնը, բայց քաղաքացիական բնակչութեան վրա հսկողութիւն ունենալու համար իմաստուն կերպով ոգտագործում էին Փրանսական ժանդարմներին:

Ամերիկյան բանակը Ֆրանսիայում իր հակահետախուզութիւնն էր կազմակերպել՝ բազաների, վարժական գոտիների, կոմունիկացիոն դժերի (վորոնք իրենց յերկարութեամբ գերազանցում էին անգլիականից) և մարտական գոտիների վրա հսկողութիւն ունենալու համար: Ամերիկյան համաշխարհային պատերազմին մասնակցեց 19 ամիս, և այդ ժամանակամիջոցում վոչ մի գերմանական գործակալ չկարողացավ ընչ թե շատ լուրջ հանձնարարութիւն կատարել ամերիկյան ճակատում:

Հակահետախուզութեան գլխավոր խնդիրն է պաշտպանել շտաբները, հրամանատարներին և նրանց գաղտնիքները: Փարիզն առավելագույն զգատութիւնն էր պահանջում նրանց կողմից, ում վստահված էր պահպանել այն բազմաթիւ ոտգմական միսխաներն ու հաստատութիւնները, վորոնք ժամանակավորապես կամ մշտապես գտնվում էին այդ քաղաքում: Ամեն որ այդ հիմնարկութիւններից յուրաքանչյուրը հիմնովին մաքրվում էր: Թղթի և նույնիսկ ծծողականի կտորտանքները խնամքով հավաքվում էին և վոչնչացվում: Ասում են, վոր յերբ Դեկլասեն արտաքին գործերի մինիստր էր (հրաժարվեց 1905 թվականին, պատերազմ հայտարարելու վերաբերյալ կայցերի սպառնալիքի պատճառով), աշխատում էր ուժասպառութեան հասնելու չափով և իր առանձնասնյակը հավաքելու գործը վստահել էր սպասավորին, վորը նետված բոլոր թղթերը պահում էր և ապա վաճառում ոտարերկրյա գործակալներին: Լոնդոնը համաշխարհային պատերազմի շրջանում պակաս չափով էր մատչելի լրտեսների համար, քան Փարիզը, այնուամենայնիւ, անգլիական գաղտնի հետախուզութեան պետերը տակօրով շրջագայելով փողոցները, ժամանակ առ ժամանակ ընդունում էին իրենց գործակալների հաղորդագրութիւնները, այդ նախազուլուցութիւնը յետակի նշանակութիւն ուներ. նա գործակալին ազատում էր շտաբն այցելելու անհրաժեշտութիւնից, ըստվորում նրան կարող էին նկատել մտնելու և դուրս գալու ժամանակ. լիովին ապահովում

եր խոսակցութիւնը վորեւէ մեկի կողմից լսվելու վտանգից, հասարակութեան ուշադրութիւնը չեր դրամվում պետի ու դործակալի անձնավորութեան վրա, ինչպէս այդ կարող եր տեղի ունենալ ճաշարանում կամ հյուրանոցում տեսակցելիս:

Բոլոր յերկիրներում ընդունված է, վոր դադանի հետախուզութեան ղեկավարներն ու պետերը պետք է հայտնի չլինեն իրենց ստորադրյալներից շատերին՝ ինչպէս պատերազմի, այնպէս ել խաղաղ ժամանակ: Յեթե պետերի անունները հայտնի յեն արտասահմանում, ապա նրանց կարելի յե հետեւել ու լուսանկարել: Իսկ այդ կարող է զգալի չափով նվազեցնել դադանի հետախուզութեան ղեկավարի արժեքը: Հակահետախուզութիւնը պետք է իր պետերին ազատի ամեն տեսակ վոչ-ցանկալի ուշադրութիւնից, պահպանի նրանց տներն ու կյանքը, և միեւնոյն ժամանակ (թեւեայդ արդեն հետախուզութեան բնազավառն է) նա պետք է տեղեկութիւններ իմանա մյուս յերկիրների դադանի հետախուզութիւնների ղեկավարների ու աչքի ընկնող հետախուզյների մասին, ձեռք բերի նրանց լուսանկարները, ստույգ տեղեկութիւններ ունենա նրանց մասին: Փրանսացիները մեծ արդիւնքի հասան գերմանական այնպիսի խոշոր դործակալների վրա հսկողութիւն սահմանելու շնորհիվ, ինչպիսիք էյին Տիսենը և Շտեյնհազուերը: Փրանսական հետախուզյները պատերազմի ընթացքում սողոսկում էյին նույնիսկ հետախուզյների գերմանական դարոցները և Բերնի, Անտվերպենի ու Բեռլինի հետախուզական շտաբները: Այնուհետեւ նրանք արտասովոր հաջողութիւններ ունեցան հակառակորդի այն դործակալներին ձերբակալելու ասպարեղում, վորոնց անհրաժեշտ եր, իրենց հետախուզական սխրագործութիւններն ավարտելու համար, միայն հաջողութեամբ անցնել սահմանը: Շվեյցարական սահմանը մի թակարդ եր, վորտեղ ամենից ակելի հաճախակի էյին վախճան դտնում այդ դադանի թափանցումները: Չորս տարվա ընթացքում այդ սահմանի վրա ձերբակալվեցին ավելի քան 300 մարդ՝ Փրանսիայից դուրս գալու փորձի ժամանակ կամ Շվեյցարիա ժամանելուց կարճ ժամանակ հետո: Ձերբակալվածները բոլորը լրտեսներ չէյին, բայց նրանցից յուրաքանչյուրը կասկածելի անձնավորութիւն եր: Յեթե այդքան մեծ թվով մարդկանց արգելադրումը մեծ ծախսեր եր պահանջում, այնուամենայնիվ այդ ծախսերն աննշան էյին այն վնասի համեմատութեամբ, վոր կարող էյին հասցնել նրանցից վոմանք:

Բերնի ճանապարհին ձերբակալված մի կնոջ մոտ հայտա-

բերվում են Լե-Արեզո դործարանում պատրաստվող մի նոր տիպի թնդանոթի դճաղրերը: Այդ դճաղրերն անտեսանելի թանաքով նկարված էյին նրա տակի շրջազգեստի վրա, բայց զգեստը չափազանց ուժեղ ոտլայված եր, վորը 1917 թվականին ուշադրութիւն դրամեց: Մանրամասն հետազոտութիւնից հետո ծածկազկիրը վերջապէս հայտաբերվեց: Մի «չեղոք» տուրիստի մոտ հայտաբերվում է Փարիզի դլխավոր հակառոգային կառուցումների սխեմատիկ ուրվանկարը, վորը գծված եր ամենաբարակ թղթի վրա, խողովակաձև, ամուր վոլորված ու դրված կապույտ մատիտի միջոցով տեղում (նրա մոտ մի քանի հատ մատիտ կար): Բայց վորովհետեւ թուղթը նրա մեջ գնելու համար անհրաժեշտ եր յեղել դրաֆիտի մեծ մասը հանել, ուստի այդ մատիտը մյուսներից ակելի թեթեւ եր: Հակահետախուզյներն ստուգում են մատիտների քաշը, և լրտեսը ձերբակալվում է:

Այնպիսի ղեկըրում, ինչպէս գերմանական դործակալ Հոլցմանին յերեւան բերելը, հակահետախուզութիւնն ինքն իրեն գերազանցեց: Հոլցմանը վորոչ ժամանակ ապրում եր Փրանսիայում, առանց հայտաբերվելու: Նա հրաման է ստանում հանդիպել մի ուրիշ դործակալի հետ, վորը նույնպիսի անվտանգութեան մեջ եր թվում, և նրա հետ միասին մեկնել Շվեյցարիա նոր հրահանգներ ստանալու: Փրանսական հետախուզյներն իմացան յինթազրվող տեսակցութեան մասին, և նրանցից մեկն իր վրա վերցնելով Հոլցմանի դերը, կարողացավ ստանալ հրահանգները, վորոնց մեջ մանրամասն շարադրված էյին Փրանսիայի հարավ-արեւելյան մասում գտնվող ջրաբերական կառուցումների պայթեցման պլանները: Հոլցմանն ու իր ընկերը բռնվեցին հենց այն պահին, յերբ նրանք փորձում էյին Փրանսական դատալիքների կերպաքանքով անցնել սահմանը: Հաջողվեց նաեւ բռնել այդ պայթեցումների համար կանխանշանակված պայթուցիկ նյութերը: Այդ ղեկըրից հետո շվեյցարական կառավարութիւնը գերմանական դավադիրներին առաջարկեց անհապաղ հեռանալ Շվեյցարիայից և այլևս այնտեղ չվերադառնալ:

Ռուսաստանի հակահետախուզութիւնը հայտաբերում եր հակառակորդի դործակալներին, մինչդեռ դավաճաններն ամեն կերպ խանդարում էյին նրա աշխատանքը: Իսլամաճաններից մեկն էր այնպիսի մի կարևոր անձնավորութիւն, ինչպէս զինվորական մինիստրը: Նույնիսկ նրանք, ում հայտնի չեն ուսական տեմպերամենտը և կայսրութեան քաղաքական կառուցվածքը, կարող



են պատկերացնել, թե ինչպիսի ջանք եր հարկավոր գործ դնել՝ Սուխոմլինովին կախազանի մոտ տանելու համար: Յեվ իսկապես, այդ այն աստիճանի դժվար բան եր, վոր դատարանի վճիռը նրան մահապատժի յենթարկելու մասին այնպես ել մնաց անկատար: Սուխոմլինովին իշխանութիւնից բանտի կամերան տանելը և ամբողջ դատավարութիւնն անդամ հակահետախուզութեան փայլուն նվաճումն եր, բայց պետք ե ասոսուալ, վոր այդ բանը չկատարվեց ավելի շուտ:

Գատալարութեան ժամանակ Սուխոմլինովին առաջադրեց տարրինակ մի արդարացում: Նա ասաց, թե իր կինը յերիտասարդ ե և շուրջող, ուստի ինքը հարկադրված եր ընդունել այն առատ կաշառքները, վոր առաջարկում եյին գերմանական եմիսարները:

Հայտնի յե, վոր նախքան զինվորական մինիստր դառնալը Սուխոմլինովը չափազանց ընդունակ սպա յեր: Նրան զինվորական մինիստր նշանակելը Ռուսաստանի զինվորական շրջաններում բարձրագույն աստիճանի ընդունվեց: Յերբ Սուխոմլինովը Կիևի զինվորական շրջանի հրամանատարն եր, այնտեղ նա հանդիպում ե մի ուսուցչի կնոջ և վորոշում ե ամուսնանալ նրա հետ: Ապահարզանի համար ձեռնարկ անելով ստեղծելու նպատակով նախկին ամուսնուն արձակուրդ են տալիս և թուլյատրում են մեկնել արտասահման:

Տիկին Սուխոմլինովան դառնում ե կարյերիստի պաշտելի կինը: Սուխոմլինովը յերջանիկ եր նրա հետ և ուշադրութիւն չեր դարձնում հասարակական կարծիքի վրա: Նա ամեն բանում զիջում եր կնոջը, վորը հաճախ ուղեորվում եր արտասահման: Վերթնովոյում, Գերմանիա տանող զլիսավոր յերկաթուղագծի վրտ, սահմանապահ պահակախմբի պետն եր զնդապետ Սերգեյ Մյասոյեղովը: Այդ ժանդարմական սպան, գերմանական հետախուզութեան կողմից վարձատրվող գործակալն ավելի քան ուրախ եր մեծ պետի խրախուսանքին արժանանալու, սիրալիրութիւն ցույց տալով նրա կնոջը:

Մյասոյեղովը լրտեսներին թուլլ եր տալիս անցնելու սահմանը և ծառայութիւնն եր մատուցում անվանի ճանապարհորդներին: Սուխոմլինովի յերիտասարդ կինն արտասահմանում գնում եր զանազան իրեր, իսկ զնդապետն ողնում եր նրան մաքսանկնդութեան ասպարեզում:

Շուտով գններալին հրավիրում են մայրաքաղաք, զինվորական մինիստրի պաշտոնով: Նրա կինը բարձր աստիճանի յե հաս-

նում, վորը նրան հնարավորութիւնն ե տալիս վերին աստիճանի շուրջ կյանք վարել: Շուտով զնդապետ Մյասոյեղովը հանվում ե պաշտոնից այն սկանդալի կապակցութեամբ, վորին մաքսանկնդական գործարքները հասցրին նրան: Պաշտոնապես նա «գործողից զինվորական մինիստրութեան տրամադրութեան տակ»: Վորպես մտերիմ ընկեր՝ նա Սուխոմլինովի հետեից գնում ե Սանկտ-Պետերբուրգ և ստանում ե գնեցելի փոխանորդ-գնահանի պաշտոնը: Մյասոյեղովին բացելեաց մեղադրում եյին լըրտեսութեան մեջ. այդ բանի համար նա մենամարտի յե կանչում ոկտյաբրիստները լիդեր Գուչկովին:

Գուչկովը, վոր հոշակավոր հրաձիգ եր, մարտահրավերն ընդունում ե, բայց մենամարտի ժամանակ կրակում ե ողի մեջ: Մյասոյեղովը կրակում ե Գուչկովի վրա, բայց վրելում ե: Իր ընկերները հարցին, թե ինչո՞ւ յեր կրակում ողի մեջ, Գուչկովը պատասխանում ե, թե «յե չուղեցի այդ սրիկային աղատել կախազանից»: Դրանից հետո Մյասոյեղովը հրաժարական ե տալիս, բայց պատերազմը հայտարարվելուց հետո նորից յերևում ե հրապարակում, ցանկանալով աշխատանքի նշանակվել շտաբում, բայց նրան մերժում են: Այդ ժամանակ զնդապետ Մյասոյեղովը նորից մտնում ե զինվորական մինիստրի տրամադրութեան տակ, վորն իր մութ մեքենայութիւնների ասպարեզում նրա կարիքն ուներ: Սուխոմլինովի ստորութիւնն արտահայտվեց մատակարարմանն ու ռազմամթերքի պաշարներին վերաբերող պաշտոնական զեկուցագիրը կեղծելու մեջ: Մի զեկուցագրում նա վրլինի վրա հարձակման պատրաստվող գործերի զլիսավոր հրամանատարին հաղորդում ե, թե ճակատի թիկունքում կա դաշտային թնդանոթների արկերի բավականաչափ պաշար: Ղեկավարվելով այդ հաղորդագրութեամբ, հրետանին սկսում ե հարձակումը, ըստվորում փայլուն հաջողութեամբ, վորովհետև ուս զինվորներն այն ժամանակ լավ վարժեցված եյին, աներկյուղ, տոկոն ե և համբերատար: Բայց շուտով արկերի պաշարը սպառվում ե, իսկ թիկունքում արկեր չկային, և հաղթական հարձակումը դադարում ե:

Սուխոմլինովը, Մյասոյեղովը և նրանց կեղտոտ շայկան շատերի կողմից կասկածվում եյին հենց սկզբից, սակայն հանցանշանները վերջնականապես հայտարարեց մի յերիտասարդ սպա: Այդ սպան, վորը հայտնի յե կ. կեղծանունով, գերմանացիները կողմից վերցված եր գերի և վորպես ռազմական գերի նա յերկար տարիներ խաղաղութեան պետք ե սպասեր: Նա յերբեք չփում

չեր ունեցել հակահետախուզական աշխատանքի հետ, բայց վորոշում է ոգտագործել գերմանական զաղանի սպասարկութեան վատահուլթյունը: Այս ստիժով պետք է հիշեցնել, վոր գերմանացիները, վարձահատուցելով զինվորական մինիստրի և ազգեցիկ այլ անձնավորութեաններին ծառայութեանները, չափազանց վատ կարծիք ունեցին ուսանելի հայրենասիրութեան մասին: Արեւելեյան ճակատի գերմանական շտաբի պետ գեներալ Ֆոն-Հոֆմանը միամտորեն գանգատվում էր, թե Գերմանիայի կառավարութեանը բավականաչափ վարկ բաց չի թողնում իրեն՝ ուսական ուղղության կամայանների պլանները գնելու համար: Ուստի, յերբ Կ.-ն իրեն հայտարարում է վորպես ինքնակալութեան հակառակորդ, վորը պատրաստ է վերադառնալ Ռուսաստան իբրև գերմանական գործակալ, իր հայրենիքը վաճառելու նրա հանձարձակի պատրաստակամութեանն ըստ յերևութին վոչ վոքի առանձնապես չի զարմացնում: Նրան փոխադրում են Շարլոտտենբուրգի հետախուզական կենտրոնը և այնտեղ տալիս են չափազանց մանրամասն հրահանգներ: Դրան հետևում է նրա «փախուստի» բեմադրումը: Նա հասնում է մինչև Կոպենհագեն, իսկ այնուհետև մինչև Ստոկհոլմ, վորտեղից գերմանական գործակալներն ուղևորվում էին Մերձբալթյան պրովինցիաները: Վերջին վերջո նա ընկնում է Ռիգա և այնտեղ կարողանում բաց անել իր փախուստի դաղանիքը:

Իեռլինում յերազում էին իշխան Նիկոլայի սպանութեան մասին: Մի օր Կենեգատի (Ռուսիան) այդ բանի համար առաջարկել էին 50 հազար դոլլար: Նա չափազանց լավ հայտնի յեր պահանջարկի բաժնին և զաղանի վոստիկանութեան գործակալներն աչք չեցին հեռացնում նրանից, հենց վոր նա յերևում էր գլխավոր շտաբի մոտակայքում: Ի վերջո, նրանք Ռուսիան հարկադրեցին խոստովանել իր ստացած առաջադրանքի մասին: Նրա խոստովանութեանը սենսացիա առաջացրեց Ռուսաստանում, բայց այդ ժամանակ վրա հասավ Կ.-ն, Ռուսաստանում գերմանական լրտեսութեան սիստեմի մասին մանրամասն իր տեղեկութեաններով, վոր նա ձեռք էր բերել Շարլոտտենբուրգում հրահանգներ ստանալու ժամանակ: Նա ուղարկվում է համագործակցելու Մյաոյեգովի գործակալների հետ և իր տրամադրութեան տակ ուներ բավականաչափ փաստեր՝ մի խումբ մարդկանց մեղադրելու համար: Սակայն նրան վոչինչ չեցին ասել Ալոշյուլլերի, Կրիվոչի և Մյուլլերի շայկայում յեղած գերմանական ծագում ունեցող գործակալների մասին: Այդ գործակալները պատ-

րաստ էյին մատենել ուս զավաճան Մյաոյեգովին, բաց անելով նրա դաղանի մեքենայութեանները մեկ ուրիշ ուստի առաջ: Կ.-ի հաղորդած տեղեկութեանները լրացրին կասկածելի համբավ ունեցող գնդապետի դեմ յեղած մեղադրական նյութերը և անուղղակի կերպով հասցրին նրա գործակալներից մեկի՝ զինվորական մինիստրի ձերբակալութեանը: Սուխոմլինովի հանցանքն ապացուցվեց, և նրա պաշտպանումը նույնպիսի խղճուկ տպավորութեան էր թողնում, ինչպես և նա ինքը:

Մյաոյեգովը ձերբակալվեց, դատապարտվեց և կախաղան բարձրացվեց: Դատարանում ապացուցվեց, վոր նա հակառակորդին մատակարարել է բանակին տրվող հրամաններ, շիֆեր և հոգուտ գերմանացիների նույնիսկ կեղծել է ուսական հեռագրական հրամանները: 1915 թվականին Արևելյան Պրուսիայում տեղի ունեցած գործողութեանների ժամանակ նրա զավաճանական միջամտութեանը հասցնում է այդ գործողութեաններին մասնակցող ուսական ուժերի ամբողջ ձախ թևի վոչնչացմանը:

Ապա Կ.-ն իր հակահետախուզական գործունեյութեան համար արժանացավ զինվորական պարգևի, բայց նրա անունը չհաղորդվեց մամուլին: Վախենում էին, վոր Սուխոմլինովի և Մյաոյեգովի բաղմաթիվ կողմնակիցները կարող են վրեժ լուծել նրանից:

Ձեռներեց սպան բնադաբար գործում էր հակահետախուզութեան յերկու հիմնական կանոնների համեմատ՝ 1) փոքր գործակալին, վորը չգիտե, թե ինքը հայտարարված է, թույլ տալ շիվելու ավելի վտանգավոր գործակալի մոտ, 2) հայտարարված գործակալ-սուրհանդակը պետք է ոգտագործվի՝ հայտարարելու մյուս գործակալներին, վորոնց տեղեկութեաններն ինքը հաղորդում է, կամ թե կեղծ ինֆորմացիա հաղորդելու հակառակորդին:

### ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՀԱՎԱՇԵՏԱԽՈՒՁՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Փոստային ու հեռագրական գրաքննութեանը պատերազմի ժամանակ, ընդհանուրի կարծիքով, ծառայում է կանխելու կարևոր ինֆորմացիայի թափանցումն այն մարդկանց նամակների մեջ, վորոնք իրենց հաշիվ չեն տալիս հաղորդած նորութեանների նշանակութեան մասին: Կա նաև այն կարծիքը, վոր գրաքննիչը խորտակում է դավաճանների ու հակառակորդի գործակալների դավերը, վորոնք փորձում են իրենց ձեռք բերած տեղեկութեանները հաղորդել ըստ նշանակման: Բայց համաշխարհային

պատերազմի շրջանում փոստային գրաքննութիւնն ե՛լ ավելի կարևոր դեր խաղաց. նա միանգամայն անսպասելի ձևով լրացնում էր հակահետախուզութեան գործունեութիւնը, հայտարարում էր գործակալներին և ողնում՝ նրանց աշխատանքի մեթոդները բաց անելու գործին. ուսումնասիրելով չեղող յերկիրներն ուղարկելով նամակները, նա հավաքում էր բազմաթիւ մանր ավյալներ, վորոնք չափազանց արժեքավոր էյին ռազմական ու ծովային հետախուզութեան համար:

Հայտնի յե, վոր դեպի Ասիա կատարած արշավանքի ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացուն լուրեր են հասնում դաշնակիցների ու վարձկանների շրջանում ծագած անբավականութեան մասին: Մակեդոնացին շատ պարզ յեղանակով ստուգում է նրանց: Նա հայտարարում է, թե նամակ է ուղարկում տուն և իր գործակարներին խորհուրդ է տալիս նույնն անել: Յերբ սուրհանդակները ճանապարհ են ընկնում, նա կանգնեցնում է նրանց ու կարգում բոլոր նամակները: Նապոլեոնն ամեն որ վորոչ ժամանակ նվիրում էր մասնավոր նամակների ընթերցումին: Ռիշելյէն առաջին Փրանսացին էր, վորը սխտեմատիկաբար խախտում էր մասնավոր թղթակցութեան անձեռնմխելիութիւնը: Առհասարակ մեզ շատ քիչ թվով թագավորներ ու հրամանատարներ են հայտնի, վորոնք արհամարհել են ինֆորմացիա ստանալու այդ միջոցը:

Լոնդոնում, ռեստավրացիայի դարաշրջանում, հռչակավոր գյուտարար սըր Մամուել Մորլանդը զարմացրեց իր յերկրպագուներին՝ հորինելով մի գործիք, վորը բաց էր անում նամակները և ապա արագորեն ու ճշտութեամբ պատճենը հանում: Այդ դարաշրջանում փոստային սպասարկութիւնը մասնավոր ձեռնարկութիւն էր, վարձակալած կոմսուհի Չեստերֆիլդի կողմից. սրա գործակալն ու կառավարիչը՝ սըր Ֆիլիպ Ֆրաուզը Լոնդոնի փոստատես նշանակեց ճարտիկ Ջեմս Հիքսին: Մորլանդի գործիքը բացորեն զրկած էր սեղանի վրա, և մեկ անգամ Կարլ Ա-ը յերեք ժամ անցկացրեց, «հրձվանքով ու մեծ բավականութեամբ» դիտելով նամակների պատճենահանումը, ըստվորում ամենայն հավանականութեամբ նամակների բովանդակութիւնն ավելի քիչ էր հետաքրքրում նրան, քան ինքը՝ մեքենան: Յերկու րոպէից ել պակաս ժամանակամիջոցում առանց լուսանկարման ողնութեան ձեռագիր նամակի պատճենը հանելը մեզ ել զարմանալի նվաճում կլիար: Դժբախտաբար, հրդեհը վոչնչացրեց այդ գործիքը:

Յերբ 1914 թվականին Յելրոպայում բռնկեց պատերազմը,

միայն պատերազմող յերկու պետութիւններ՝ Ռուսաստանն ու Գերմանիան էյին, վոր ունեյին պատրաստի հաստիքով գրաքննիչներ: Փրանսական զինվորական ու ծովային գրաքննչութիւնն ստեղծվեց պատերազմի հենց սկզբին, առանց հատուկ դժվարութիւնների: Բայց անգլիացիները, վորոնք ամենամեծ գրադրութիւնն ունեյին Յելրոպայում, խոստովանում են, վոր ոգոստոսի առաջին շաբաթներին, յերբ նրանք ձեռնամուխ յեղան դադտնի հետախուզութեան այդ բաժնի կազմակերպմանը, նրանց սպառնում էր լիակատար քաոս: Անգլիական նավահանգիստները ժամանող նավերը հսկայական քանակութեամբ նամակներ էյին բերում գրաքննչութեան նոր շէնքը: Այդ նամակների կույտերն աճում էյին սարսափելի արագութեամբ: Հասցեպորեն նշանակվում էյին մարդիկ, վորոնք պեաք է իրենց ձեռքի տակով անցկացնեյին նամակների այդ հոսանքը, ըստվորում, գերմանացիների պնդումով, նրանց մեջ յեղել է գերմանական յերեք գործակալ. դիւսավոր վտանգը, վորին այդ գործակալները յենթարկվում էյին, այդ նրանց գերհոգնածութիւնն էր:

Պատերազմական գործողութիւններն սկսվելուց միջանի որ առաջ փոստի մի հեռատես պաշտոնյա կալանքի տակ է առնում ամբողջ փոստը, վորն, ինչպես նրան թվաց, կարող է վորեւ հետաքրքրութիւն ունենալ: Յերբ նամակային ինֆորմացիայի այդ ամբողջ մասսան վերջապես մշակվեց և ուսումնասիրվեց, պարզվեց, վոր նամակների մեջ յեղել են գերմանական ու ավստրիական բազմաթիւ հրամաններ զորահավաքի մասին: Այդ նամակներն ուղարկված էյին արտասահմանում բնակվող գերմանացիներին ու ավստրիացիներին: Հրամանները հանձնվեցին հետախուզական բաժնին: Այդ փաստաթղթերից յեյնելով, հետախուզական բաժնը մանրամասն ամփոփադիր կազմեց Փրանսիայի ու Ռուսաստանի դեմ դուրս յեկող հակառակորդ զորամասերի վերաբերյալ: Այդ բոլոր տեղեկութիւնները շտապ կարգով ուղարկվեցին համապատասխան յերկիրները և առաջին նախազուգացումը հանդիսացան նրանց դեմ ուղարկված ուժերի մասին: Ամբողջ պատերազմի ընթացքում վոչ մի անգամ գրաքննիչներին չի հաջողվել այդպիսի կարճ ժամանակամիջոցում հավաքել այդքան արժեքավոր տեղեկութիւններ, ինչպես այդ յերկու շաբաթվա ընթացքում:

Գրաքննիչները հարկադրված են բազմաթիւ դատարկաբանութիւնների մեջ վորոնել ու դուրս բերել ներուժորեն վտանգավոր մի տող: Համաշխարհային պատերազմի ընթացքում Լոնդոնում ա-

Մեն շարաթ հետադուստրում եյին հարյուրավոր նամակներ, ծրարներ ու թերթեր: Նույնը կատարվում էր նաև Փարիզում: Այդ նյութի մեծ մասը դուրս էր դալիս միանգամայն անմեղ. յերբ հետազոտություններ կատարող մասնագետները չեյին հայտնաբերում անտեսանելի թանաքի կամ թե կողային ու չիֆրային հաղորդագրությունների վորևե հետք, փոստը նորից կնքվում էր և ուղարկվում ըստ պատկանելույն: Յեթե վորևե նամակ կասկած էր առաջացնում, այն յերկար չէր պահվում, նկատի ունենալով, վոր այդ հանգամանքը կարող էր նախազգուշացում լինել հանցավորի համար: Բայց այդպիսի նամակների պատճենը, վորպես հանցանշան հակահետախուզության համար, հանվում կամ լուսանկարվում էր և պահվում հակահետախուզության մոտ: Այն բոլոր նամակներն ու ծրարները, վորոնք թեև կասկածելի էյին թվում, բայց վոչ մի հիմք չեյին տալիս սնդեղու, թե դրանք ուղարկողը հետախուզության գործակալ է, պահում էյին չափազանց յերկար:

Հակահետախուզության հետ կոնտակտով աշխատող փոստային գրաքննության գլոնությունն էր, վոր հայտարերեց Մյուլլեր ազգանունով գերմանական խոշոր հետախուզիկն: Մեկ անգամ, 1915 թվին, Լոնդոնի գրաքննությունն ստացավ Ամստերդամ հասցեագրված մի լրագիր, վորի լուսանցքներում յերևան բերվեց ծածկազիր: Հազորդվում էր, վոր «Օ»-ն ուղևորվել է հյուսիս և գրելու յե «201-ից»: Փոստադրոշմակի վրա գրված էր «Դեպտֆորդ»:

Սկոտլանդ Յարդի տեսուչներից մեկն աշխատանքի ձեռնարկեց այնպես, կարծես «Օ»-ն բանկ է կողոպտել կամ մարդասպան է, վորին անհրաժեշտ է բռնել: Նա հարցում ուղղեց Դեպտֆորդի վոստիկանությանը, թե քաղաքի վոր փողոցներն ունեն Ն 201 տներ: «Միայն մեկ փողոց—Դեպտֆորդ Հայ Ստրիտը»,—յեղավ պատասխանը:

Անգլիական դետեկտիվները այդ տան մեջ գտան մի վոմն հացադործ Պետեր Հասնի (անգլահայտակ), վորը յերգվում էր, թե յերբեք և վոչ մի տարրիկնակ մակագրություն չի արել լրագիրների լուսանցքներում, յերբեք լրագիրներ չի ուղարկել Հոլանդիա և առհասարկ չի իմանում, թե ով է «Օ»-ն: Սակայն խուզարկության ժամանակ նրա մոտ գտան ծայրը կլորացրած գրչածայր և անտեսանելի թանաք: Հասնին ձերբակալեցին:

Հացադործը համառորեն հրաժարվում էր խոսել, բայց նրա

հարևանները հաճույքով պատասխանում էյին նրա փոխարեն և հիշեցին մի մարդու, վորը հաճախակի այցելել էր նրան: Ըստ նրանց նկարագրության դա բարձրահասակ մի մարդ էր, լավ շարժուձևերով, դատելով ըստ ամենի՝ ուսու: Դետեկտիվները ղեմեցին Լոնդոնի պանսիոնների ցուցակին, և վորոնումները գիմեցին իրանց խիստ վախեցած մեկ տանտիրուհի հասցրին Բլումսբերի, վորտեղ խիստ վախեցած մեկ տանտիրուհի հասցրին Բլումսբերի մեջ ճանաչեց իր կենվոր ուսուին՝ Մյուլլեր նկարագրության մեջ ճանաչեց իր կենվորն անձները ազգանունով. տանտիրուհին հայտնեց, վոր կենվորն անձնական գործերով վերջերս մեկնել է Նյուկեստլ: Իսկապես վոր «Օ»-ն անցել էր հյուսիս:

Բոլոր նշանները ձեռքի տակ ունենալով, Նորտոմբերլենդի նավահանգստում հսկող դետեկտիվները գնացքում ճանաչեցին Մյուլլերին: Նրան ձերբակալեցին ու պահակի ուղեկցությամբ վերադարձրին Լոնդոն: Նա իրոք վոր վտանգավոր հետախուզ վտանգեցյան աչքեցուցիչ նորություն էր և շատ ժամանակ կարող ըստինքյան աչքեցուցիչ նորություն էր և շատ ժամանակ կարող էր առանց հայտաբերման մնալ հակահետախուզության համար: Նա հայտարարություններ էր տալիս անգլիական դավառաթերթերին, իսկ այնուհետև այդ թերթերն ուղարկում էր հոլանդական էր թղթակցին:

Մյուլլերի ոգտագործած կողը վերջիվերջո բաց արին «Ն 40 սենյակի» հուշակավոր մասնագետները: Յեվ Մյուլլերի մահապատժից հետո հետախուզական բաժնի սպաներն ուղտվելով նրա մեթոդից՝ շարունակում էյին կեղծ տեղեկություններ ուղարկել գերմանացիներին: Դեռ ավելին. բրիտանական հետախուզուկել գերմանացիներին: Դեռ ավելին. բրիտանական հետախուզությունը, վորպես վարձատրություն այդ տեղեկությունների, յերկար ժամանակ դրամական փոխադրություններ էր ստանում յերմանացիներից: Այս դեպքը հնարավորություն տվեց հակահետախուզությանը ճշտորեն սահմանելու գերմանացիների կողմից իրենց գործակալներին վճարվող գումարներն ու դրանց միջ իրենց գործակալներին վճարվող գումարներն ու դրանց ստացման ժամկետները: Մյուլլերի գործից հետո բրիտանական դադտնի սպասարկությունը կարողացավ նախազգուշացնել գրաքննությանը, վորպեսզի վերջինս անհրաժեշտորեն նշի նման գումարները ստացումը, վորոնք չեղոք յերկիրներից պարբերական ժամանակամիջոցներից հետո ուղարկվում են վորևե հասցեյով:

Կասկածից վեր է, վոր փոստային գրաքննչության ամենակատարյալ կազմակերպությունը ցարական Ռուսաստանի հուշակավոր «սև կաբինետն» էր: Այդտեղ բերվում էր դիտավորապես բարձրագույն անձերի նամակագրությունը, հատուկ պաշտոն





յում: Հետախուզութեան հարցերի դերմանական հայտնի մասնա-  
գետ Փոն-Դեկկերը մի անգամ ասել է, թե այն դադունիքը, վորը  
չի կարող բաց անել հոգևորականը կամ կինը, յերբեք չի բացվի:  
Մոկ ծխական քահանան հոգևոր անձ էր, վորը հսկայական աղ-  
ղեցութիւն ուներ իր ծխականներէ վրա. այդպիսով, յեկեղեցին  
հիանալի հնարավորութիւններ ուներ թափանցելու տեղական  
գաղտնիքներէ մեջ, և տեղական ղեկուցադրերի պարունակած  
տեղեկութիւնները հետախուզական լուրջ նյութ էլն հանդիսա-  
նում Վոլսեյի կամ Ռիչլէյսեյի տիպի արքեպիսկոպոստներէ համար:

Յեկեղեցու հակառակորդները միշտ պնդել են, թե խոստո-  
վանութիւնը գաղտնի սպասարկութեան միջոց է: Մի կողմ թող-  
նելով վեճերը, պետք է հիշատակել, վոր մինչև վերջին հարյու-  
րամյակը յեկեղեցին պատրաստել է մեծ թվով հիանալի գործա-  
կալներ, լրտեսներ ու գաղտնի սպասարկութեան պետեր: Փուչնի,  
Տալէյրանը, Դեմարեն անցյալում յեղել են քահանաներ, վորոնք  
կարողացել են կազմակերպել և ողտազործել գաղտնի վոստիկա-  
նութեան սպասարկութիւնը: Կարգինալ Ռիչլէյսեն իր տրամա-  
դրութեան տակ ուներ ճարպիկ քահանա Ժողեֆ դէյու Տրեմբլէյին,  
վորը համարձակ և միջոցներէ մեջ խտրութիւն չընող գործա-  
կալներէ ոգնութեամբ բաց արեց Սեն-Մարսի դավադրութիւնը,  
հետեւում էր Ավստրիային ու նրա դաշնակիցներին, ամստրիա-  
կան թագուհուն՝ Ֆրանսիայում. նա նույնիսկ ավելի առաջ դնաց  
գաղտնաբերուհի Մարիա դե Ռոզանից, դքսուհի Լյուննից ու Շեվրե-  
զից:

Փրանսիայում դեռ մինչև այսօր էլ գոյութիւն ունեն այն  
տրագիցիանները, վորոնք սկիզբ են առնում Փուչեյից ու նրա գոր-  
ծակալներէ: Փրանսական գաղտնի վոստիկանութեան մեթոդ-  
ները կապված են այսպէս կոչված «դոսյէներ»-դործեր կազմե-  
լու հետ: «Դոսյէն» լրիվ ամփոփադիրն է հանրապետութեան բո-  
լոր բնակիչներէ մասին յեղած այն տվյալներէ, վորոնք կարող  
են վորեւէ հետաքրքրութիւն ներկայացնել իշխանութիւններէ  
համար. դրանք տեղեկութիւններ են բոլոր աչքի ընկնող մարդ-  
կանց ու նրանց ազգականներէ մասին, փառքի ճանապարհը բռնած  
անձերի, նրանց ընտանեկան հարաբերութիւններէ և վերջապէս  
այն բոլոր անձնավորութիւններէ մասին, վորոնք թեկուզ հեռա-  
վոր կերպով կապված են այն բանի հետ, վորը կոչվում է հան-  
ցադործութեան աշխարհ:

«Դոսյէյի» սիստեմն ունեցավ բազմաթիւ ընդորինակողներ:

Քայց Շտիբերի աշակերտները Բեռլինում՝ այդ սիստեմը գործա-  
դրեցին այլ յերկիրներէ քաղաքացիներէ նկատմամբ և հետախու-  
զութեան ու գաղտնի սպասարկութեան նպատակներով՝ պատե-  
րազմի դեպքում: Գերմանական բոլոր գործակալներին, վորոնք  
արտասահման ելին ուղարկվել մինչև 1914 թվականը, հանձնա-  
բարված էր հաղորդել այն բոլոր մասնավոր տեղեկութիւնները,  
վոր հնարավոր կլինի ձեռք բերել հասարակական տեսակետից  
աչքի ընկնող նտարեկրացիներէ ու նրանց ընտանիքի անդամնե-  
րի մասին: Դրա հետեւանքով ստացվեց սկանդալային խրոնիկայի  
մի հանրազնտակ, վորի մեջ կարելի յէ հանդիպել հազարավոր  
մարդկանց անուններէ, վորոնք համբավ են վայելում իրենց  
մարդկանց անհոգութեան, վորոնք համբավ են վայելում իրենց  
յերկրում և վորոնց վրա անհրաժեշտութեան դեպքում կարելի յէ  
ձնուած գործադրել, սպանուելով հայտնի դարձնել նրանց մեղան-  
չանքները, զանցանքները կամ ընտանեկան գաղտնիքները:

Դա պարզապէս մի մեծածախ նախապատրաստութիւն էր՝  
պաշտոնական շանտաժի համար: Հազիվ թէ յենթադրվեր, վոր  
այդ բոլոր մարդկանց, ինչքան էլ չվախեցնէին նրանց, կարելի  
էլին հարկադրել վորեւէ ինֆորմացիա տալու հակառակորդին:  
Քայց նրանց կարելի յեր համոզել, վորպէսզի նրանք անուղղակի  
աջակցութիւն ցուցն տան կամ թագսնեն գերմանական գործա-  
կալներէ գործունեյութիւնն անխուսափելի կոնֆլիկտի որերին:

## ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ՎՈՐՊԵՍ ԳԱՂՏՆԻ ՀԵՏԱԽՈՒՁՈՒՅՅԱՆ ՄԻՋՈՑ

Համաշխարհային պատերազմը կատարելագործեց հարձակ-  
ման մի նոր տեսակ: Հետախուզութեան սովորական մեթոդներին  
զուգընթաց հսկայական չափով զարգացավ պրոպագանդան, վորը  
ներգործում էր բանակի ու քաղաքացիական բնակչութեան բարո-  
յական վիճակի վրա:

Պրոպագանդային, վորպէս հարձակման միջոցի, մենք հան-  
դիպում ենք հին դարերում: Ռազմաբեր հույները հիանալի տիրա-  
պետում էին այդ գենըին: Համաշխարհային պատերազմի մեջ  
պետում էին այդ գենըին: Համաշխարհային պատերազմը և  
սիստեմատիկ պրոպագանդան շահում էր մեծ ճակատամարտերը և  
զինաթափ անում նավատորմը. նա բարոյալըում էր ժողովուրդ-  
ներին և տասնյակ անվճռական, չեղող յերկիրներէ դարձնում յե-  
ներին և տասնյակ անվճռական, չեղող յերկիրներէ: Մարդկանց ամբողջ վաշտեր ու դու-  
ռանդազին կռուող յերկիրներ: Մարդկանց ամբողջ վաշտեր ու դու-  
ռանդազին կռուող յերկիրներէ դարձնում էր յերկիրներէ կազմակերպված պրոպագանդային.  
նվիրել էին զիտականորեն կազմակերպված պրոպագանդային.  
այդ մարդիկ պետք է ունենային բազմաթիւ ու բազմազան հա-







«Լե-ժուրնալը», նրա յերգն արդեն յերդված եր: Այն մարդը, վորը հանկարծ մեծ գումարներ եր ճարել և թերթեր եր գնում այն մոմենտին, յերբ հասարակական կարծիքը վճռական դեր եր խաղում, հենց մեկ անգամից կասկած հարուցեց իր հանդեպ: Բոլոյի չնչին մամուլում հնչող պարսվողականության ձայնը շուտով իլլացավ՝ դատարանում իրեն արդարացնել ճգնող Բոլոյի ձայնով: Նրան գնդակահարեցին:

1915 թ. գերմանական գործակալները Ամերիկա եյին ուղարկվում վոչ թե հետախուզական նպատակներով, այլ պրոպագանդայի համար: Նրանց հանձնարարվում եր լուրեր տարածել Գերմանիայում և արտասահմանում ապրող իրենց հայրենակիցների դեմ: Նրանք տարածում եյին գերմանական արժանապատվությունը նվաստացնող մտացածին փաստեր: Իսկ ի՞նչ եր այդ տարրերնակ կամպանիայի նպատակը: Գերմանացիները յենթադրում եյին, թե հենց վոր Ամերիկայի հասարակայնությունը հասկանա, վոր տարածվող լուրերը չեն համապատասխանում իրականությանը, նա այդ լուրերը կվերադրի դաշնակիցների վոտնձգություններին:

Բայց վերջիվերջո այդ պլանը տապալվեց և անկասկածորեն ոգտադործվեց դաշնակիցների պրոպագանդայի համար: Գերմանացիների գաղանությունների մասին տարածվող առասպելների մոտավորապես յերկու յերրորդ մասը հերյուրանք եր: Բայց մեկ յերրորդ մասը, ինչպես, որինակ, Լուվենի ավերումը, միսս կավելի և կանյխտան Ֆրիատտի գնդակահարությունը, ճշմարտություն եր:

Թարգմ. Ա. Այվազյան

Խմբ. Սիբուս

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Վ. Զիդեյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լիստը Ի—13489

Հրատ. № 4258, պատվեր № 168, արժու 20.000

Հանձնված ե արտագրության 15 VIII 1937 թ.

Ստորագրված ե ապագրիլու 29/VIII 1937 թ.

ԳԻՆԸ 1 Բ.

Հայկուսճրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0928279

30 ДЕК 1937

ԳԻՆԸ 1 Ռ.

584

11

28929

Р. РОУАН

РАЗВЕДКА И КОНТРРАЗВЕДКА

Госиздат, Ереван, 1937